Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ՓՈՓՈԽՄԱՆՑ ՀԱՄԵՄԱՏ

ԵՒ

## ԲՆԱԿԱՆ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆԷ

7606

ՀԱՒԱՔԱԾՈՅ Թ. ԱԶԱՏԵԱՆ Ի ԹԻ______



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱՎԱՖԵԱՆ
— 1873 —

# ԱԶԴ

Աշխարհագրութեան այս նոր դասագրին քաղաքական մասը քաղուած է Պէրլինի բարձրագոյն դպրոցաց գերմաներէն աշխարհագրութեան ընդարձակ դասագրին 1872 ի ութեւտասներորդ և վերջին տպագրութենէն որ աշխարհագրական նորագոյն տեղեկութեանց համեմատ սրբագրուած է ։

Ըստ կարի ջանացինք մեր այս դասագիրքն յարմար գործել մեր դպրոցաց պիտոյից՝ փոյթ տանելով որ համառօտութեան հետ ամեն կարեւոր աշխարհագրական գիտելիք պարունակէ ։

Բնական մասին մէջ շատ ընդհանուր գիտելիքներ միայն դրինք , քանզի բնական աշխարհագրութեան վերաբերեալ կարծուած շատ մասնաւոր տեղեկութիւններ բնական գիտութեան և բնական պատմութեան կը վերաբերին մանաւանդ քան աշխարհագրութեան ։

Ուսումնական մասը կամ տիեզերագրութիւնը գիտմամբ ընդարձակագոյն է , և տիեզերաց դրութիւնը ճանչնալու ամեն կարեւոր տեղեկութիւն կը պարունակէ ։ Իւրաքանչիւր երեւութի համառօտ բացատրութիւնը գնելէն ետքը զոր

աշակերտք կրնան գրեթէ բառ առ բառ միտք առնուլ, շատ տեղ մանր գրով ալ ընդարձակ տեղեկութիւն տրուած է նախընթաց բացատրութիւնը լուսաւորելու համար։

Պէտք է գիտնալ որ դասագիրք մը ամեն աստիճանի և ընդունակութեան տղայոց միանգամայն յարմար չի կրնար ըլլալ։ Ուստի եթէ դասատուն բան մը աւելորդ կարծէ այս ինչ դասու աշակերտաց համար, զոր օրինակ թուական տեղեկութիւններն, ինչպէս այլ և այլ տէրութեանց տարածութեան և քաղաքաց բնակիչներուն թիւը, կրնայ զանց ընել, գէթ ըստ մասին, տղայոց միտք առնել տալու, մայրաքաղաքաց կամ կարևոր համարուած քաղաքաց բնակիչներուն թիւը միայն ուսուցանելով։

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

### ԴԱՍ Ա.

ՀԱՐՑՈՒՄ. Քաղաքական աշխարհագրութիւնն ի՞նչ կը սորվեցնէ։

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքական աշխարհագրութիւնը կը սորվեցնէ այլեւայլ բաժանումները զոր մարդիկ ըրած են երկրիս երեսը բաղկացնող ծովուն և ցամաքին վրայ. ինչպէս նաեւ այն բաժանումներուն տրուած անունները, մարդոց թիւը, ցեղերը, կրօնքները, անոնց բնակած տեղերը, կառավարութիւնները, և ուրիշ ասոնց նման բաներ։

Հ. Երկրիս երեսը քանի՞ կը բաժնուի։

Պ. Երկրիս երեսը կը բաժնուի երկու. հաստատուն մաս կամ ցամաք, և լոյծ մաս կամ ջուր։

Երկրիս երեսին երեք քառորդը (3/4)՝ ջուր, մէկ քառորդը (1/4) միայն ցամաք է. ցամաքին ալ գրեթէ երեք քառորդը Հիւսիսային կիսագունտին վրայ է, Հարաւային կիսագունտը մեծաւ մասամբ ջրով ծածկուած է։

Հ. Հիւսիս և հարաւ ըսելով ի՞նչ կը հասկցուի։

Պ. Հիւսիս և հարաւ երկրիս կողմերուն անուն-

ներն են: Երկրիս վրայ չորս կողմ կը մտածուի, որ են.

1. Արեւելք՝ որ առաւօտուն արեգական ելած կամ ծագած կողմն է.

2. Արեւմուտք՝ անոր հակառակ կողմն է ուր արեգակն իրիկուններ կը մտնէ:

3. Հիւսիս՝ որ երեսը դէպ արեւելք դարձնողին ձախ կողմը կ'իյնայ. և

4. Հարաւ՝ որ հիւսիսին հակառակ կողմն է, և երեսը դէպ արեւելք դարձնողին աջ կողմը կ'իյնայ:

Հիւսիսային արեւելք կամ Արեւելեան հիւսիս ըսելով հարաւին և արեւելքին մէջտեղը կ'իմացուի. Հարաւային արեւելք կամ Արեւելեան հարաւ՝ հարաւին և արեւելքին մէջտեղն է: Ասոնց հակառակ կողմերը կը կոչուին Հիւսիսային արեւմուտք կամ Արեւմըտեան հիւսիս, և Հարաւային արեւմուտք կամ Արեւմըտեան հարաւ:

Աշխարհացոյցներու վրայ թուղթին վերի դին միշտ հիւսիս է, վարի դին՝ հարաւ. աշխարհացոյցն այսպէս բռնողին աջ կողմն արեւելք է, ձախ կողմն՝ արեւմուտք:

Հ. Աշխարհացոյց ի՞նչ է:

Պ. Աշխարհացոյց կ'ըսուին այն թուղթերը որոնց վրայ այլեւայլ գիծերով, նշաններով և գոյներով կը նշանակուին երկրիս երեսին վրայ ցամաքին և ջուրին մասերը, այլեւայլ Տէրութեանց այն ցամաքին վրայ բռնած տեղերը, լեռներ, գետեր, քաղաքներ իրենց անուններովը:

Հ. Քանի տեսակ աշխարհացոյց կայ:

Պ. Աշխարհացոյցը երկու տեսակ է, Հարթա-



գունդ և Մասնագունդ: Հարթագունտը երկրիս ամբողջ երեսը երկու բոլորակներու մէջ գծուած կը ցուցնէ. Մասնագունտը երկրիս երեսին մէկ մասը միայն կը ցուցնէ, զորօրինակ՝ Եւրոպա կամ Ասիա. և կամ թագաւորութիւն մը կամ անոր մէկ մասը միայն, ինչպէս Թուրքիա կամ Հայաստան:

Երբ բոլոր երկիր կամ անոր մէկ բաժինը մաս մաս քանի մը աշխարհացոյցներու վրայ նշանակուած է, այն աշխարհացոյցները մէկտեղ Ատլաս կը կոչուին:

## ԴԱՍ Բ.

Հ. Ըսէ թէ երկրիս երեսը երկու կը բաժնըւի, հաստատուն մաս կամ ցամաք, և լոյծ մաս կամ ջուր: Կրնաս ըսել թէ հաստատուն մասը կամ ցամաքը քանի կը բաժնուի, և այն բաժանումներն ինչպէս կը կոչուին:

Պ. Երկրիս երեսին վրայ ցամաքը հինգ կը բաժնուի որոնք երկրիս մասեր կը կոչուին, և են՝ Եւրոպա, Ասիա, Ափրիկէ, Ամերիկա և Ովկիանիա:

Առջի երեքը, – Եւրոպա, Ասիա, Ափրիկէ – կը կոչուին հին ցամաք կամ հին աշխարհ, քանզի այս մասերն հնուց 'ի վեր ծանօթ են: Չորրորդ մասն, Ամերիկա, կը կոչուի նոր ցամաք կամ նոր աշխարհ, քանզի երկրիս այս մասն հին ատենը ծանօթ չէր. 1492 ին Քրիստափոր Կոլոմպոս անուանի Ճենովացին գտաւ անոր մէկ մասը, և ապա հետզհետէ բոլոր այն ցամաքը գտնուելով Եւրոպացի գաղթականներով ծածկեցաւ:

Հինգերորդ մասը որ է Ովկիանիա, կը պարունակէ մեծ կղզի մը որ Աւստրալիա կամ Նոր Հոլանտա կը կոչուի, և անկէ քիչ շատ հեռու շատ մը կղզիներ: Երկրիս այս մասն ալ նոր, այսինքն՝ 1600 էն ետքը, սկսաւ ճանչցուիլ:

Հ. Երկրիս երեսին վրայ լոյծ մասը կամ ջուրը քանի կը բաժնուի, և այն բաժանումներն ինչ կը կոչուին:

Պ. Երկրիս երեսին վրայ ջուրը կը բաժնուի չորս մաս, որոնք ընդհանուր անուամբ Ովկիանոս կը կոչուին, և են՝

1. Հիւսիսային և հարաւային սառուցեալ Ովկիանոս.

2. Ատլանտեան Ովկիանոս.

3. Մեծ կամ Խաղաղական Ովկիանոս, և

4. Հնդկային Ովկիանոս կամ Հնդկաց ծով:

Հ. Ովկիանոսներէն զատ՝ երկրիս երեսին վրայ գտնուած այլեւայլ տեսակ ջուրերն ինչպէս կը կոչուին:

Պ. Ովկիանոսներէն զատ՝ երկրիս երեսին վրայ գտնուած այլեւայլ տեսակ ջուրեր կը կոչուին, 1. Ծով, 2. Լիճ, 3. Գետ, 4. Ծոց, 5. Նեղուց, 6. Միջերկրական ծով և 7. Արշիպելագոս:

1. Ծով կ'ըսուին այն աղի ջուրերը որ Ովկիանոսէ մը փոքր են: Գլխաւոր ծով կը կոչուի ծով մը որ Ովկիանոսէ մը կը կազմուի. Երկրորդական ծով կ'ըսուի այն ծովը որ գլխաւոր ծովէ մը կը կազմուի:

2. Լիճ կ'ըսուին այն մշտակայ անոյշ ջուրերը որ ամէն կողմէն ցամաքով պատած են, և որոնց ջուրը վազուն չէ: Մեծամեծ լիճերը ծովակ կը կոչուին. Մօր կամ ճահիճ կը կոչուին միշտ ջրոտ տեղեր ուր շամբ (եղէգ) կամ ջրային տունկեր բուսած են:



3. Գետ կ'ըսուին այն անոյշ և վազուն ջուրերը որ սովորաբար լեռան մը ստորոտէն բխելով, և շատ անգամ իրենց մէջ ուրիշ վազուն ջուրեր առնելով կ'երթան ծով մը կը թափին. իսկ այն վազուն ջուրերը որ գետի մը մէջ կը թափին՝ Գետակ կ'ըսուին: Գետի մը ծովը թափած տեղը՝ գետին Բերանը կը կոչուի. իսկ գետի մը և գետակի մը իրարու խառնուած տեղը կը կոչուի Խառնուրդ գետոյ:

Գետերուն և գետակներուն երկու քովերը կը կոչուին Եզերք կամ Ափունք: Գետի կամ գետակի մը այն եզրը որ ջուրին հոսանքին հետ իջնողին աջ կողմը կ'իյնայ՝ Աջակողմեան ափն կ'ըսուի. անոր դիմացի կողմը՝ Ձախակողմեան ափն:

4. Ծոց կամ ծովածոց կ'ըսուի ծովի մը ներս դէպ 'ի ցամաք մտած մասը: Եթէ ծովածոցը փոքր է, Խորշ կը կոչուի:

5. Նեղուց կը կոչուի նեղ ծով մը որմէ ծովէ ծով կ'անցնուի: Լայն նեղուց մը Ջրանցք կ'ըսուի:

6. Միջերկրական ծով կամ Միջերկրական կ'ըսուի ծով մը որ ամէն կողմանէ ցամաքով պատած ըլլալով, նեղ պարանոցով մը միայն դուրսի ծովի մը հետ հաղորդութիւն ունի:

7. Արշիպելագոս կը կոչուի ծով մը ուր իրարու մօտ շատ կղզիներ կամ կղզիներու խումբեր կան:

## ԴԱՍ Գ.

Հ. Ցամաքի մը մասերն իրենց այլեւայլ ձեւին կամ որպիսութեանը նայելով ի՞նչպէս կը կոչուին ։

Պ. Ցամաքի մը մասերն իրենց այլեւայլ ձեւին կամ որպիսութեանը նայելով կը կոչուին 1. Թերակղզի, 2. Լեզու, 3. Ծովեզր, 4. Լեռ, 5. Դաշտագետին, 6. Ձոր, 7. Կղզի, 8. Ծանծաղ և 9 Խարակ ։

1. Թերակղզին չորս դիէն ջրով պատած, և միայն մէկ ծայրով ցամաքի մը հետ կցուած երկիր է ։ Թերակղզին ցամաքին հետ կցող մասին Պարանոց կ'ըսուի ։ Եթէ պարանոցը շատ լայն է, թերակղզին Ցամաքակղզի կը կոչուի ։

2. Լեզու կ'ըսուի նեղ ցամաք մը որ դէպ 'ի ծով երկնցած է ։ Եթէ այսպէս դէպ 'ի ծով երկնցած ցամաք մը շատ բարձր է, Գլուխ կամ Հրուանդան կը կոչուի ։

3. Ծովեզր կ'ըսուի ցամաքին այն մասը որ ծովին կից է ։ Ծովին հետ գրեթէ հաւասար ցած և ընդարձակ ծովեզր մը Ծովափ կը կոչուի ։

4. Լեռ կ'ըսուի հողոյ կամ ապառաժի ահագին զանգուած մը որ ցամաքի մը վրայ կը բարձրանայ դէպ 'ի վեր՝ երթալով ամփոփուելով, այնպէս որ կողերն աւելի կամ նուազ զառ 'ի վեր կը ձեւանան ։ Իրարու կից լեռներու շարքին Շղթայ կամ գօտի լերանց (լեռնագօտի) անունը կը տրուի ։ Լեռան մը կոնաձեւ կամ սուր ծայրին Կատար կամ Գագաթն կ'ըսուի ։ Լեռնադաշտ կ'ըսուի լեռան մը գլուխը որ հարթ է ։ Մանր լերանց Բլուր կ'ըսուի ։ Կող կ'ըսուին լեռներու գօտւոյ մը



երկու հակառակ զառիվայրերը ։ Ծովի կամ գետի մը Աւազան կամ Հովիտ կ'ըսուի ընդարձակ երկիր մը որուն ջուրերը կը թափին այն ծովը կամ գետը ։

Հրաբուխ կը կոչուի լեռ մը որ ատեն ատեն բռնկելով Հրաբերան կոչուած ծակէ մը դուրս կ'արձակէ բոց, մոխիր և Լաւա կոչուած նիւթը, երբեմն նաեւ ջուր և ցեխ ։

5. Դաշտագետին կը կոչուի երկիր մը որ ընդարձակ և տափարակ է ։ Եթէ տափարակն աւազուտ է, Անապատ կ'ըսուի ։ Աւազուտ անապատներու մէջ տեսնուած դալարագեղ և ջրաբեր երկիրներուն Ովասիս կ'ըսուի ։

6. Ձոր կ'ըսուի դաշտ մը որ երկու լերանց մէջտեղն է ։ Եթէ ձոր մը շատ նեղ, մթին և խոնաւ է, Ծմակ կ'ըսուի ։

7. Կղզին փոքր ցամաք է՝ ամեն կողմանէ ջրով պատած ։ Իրարու մօտ մանր մանր կղզիներու՝ Խումբ կղզեաց (կղզեխումբ) կ'ըսուի ։

8. Ծանծաղ կամ Ծանծաղուտ կ'ըսուին ծովուն մէջ սակաւաջուր տեղեր ուր նաւ չի կրնար անցնիլ առանց խրելու ։

9. Խարակ կ'ըսուի ծովուն մէջ ջուրին երեսին մօտ կամ երեսէն վեր բարձրացած քար մը ։ Եթէ այսպիսի քարեր իրարու մօտ կամ քովէ քով շատ են, Խութք կը կոչուին ։

## ԴԱՍ Դ.

Հ. Երկրիս ցամաքին երեսը քանի՞ քառակուսի մղոն է և որչափ բնակիչ ունի։

Պ. Երկրիս ցամաքին երեսը իբր 2.441,000 քառակուսի մղոն է, և բոլոր բնակչաց թիւն է իբր 1,360,000,000 ըստ նորագոյն հաշուոց։

| | Քառ. մղ. | Բնակչ. | Մղ. գլ. բնակ. |
|---|---|---|---|
| Եւրոպ. | 180,000. | 296,000,000. | 1625 |
| Ասիա | 807,000. | 782,000,000. | 970 |
| Ափրիկ. | 192,000. | 544,000,000. | 354 |
| Ամերիկ. | 747,000. | 84,000,000. | 113 |
| Ովկիան. | 161,000. | 4,000,000. | 37 |

Հ. Մարդկային ազգը քանի՞ ցեղ կը բաժնըուի։

Պ. Կերպարանաց, գունոյ և գանկի ձեւին նայելով բոլոր մարդկային ազգը կը բաժնուի հինգ գլխաւոր ցեղ։

1. Կովկասեան կամ Հնդեւրոպական ցեղը. սպիտակ գունով, վայելչահասակ, գեղեցկադէմ, ծաւի, երեսին անկիւնը գրեթէ ուղիղ։ Այս ցեղը դէպ 'ի հիւսիս խարտեաշ է, դէպ 'ի հարաւ թխագոյն։ Կովկասեան ցեղին կը վերաբերին արեւմտեան Ասիոյ և գրեթէ բոլոր Եւրոպայի բնակիչներն ու անոնց գաղթականները։ Այս ցեղն հիմա իբր 500 միլիոն է։

2. Մոնկոլեան ցեղը. գոյնը թխագոյն դեղին, փոքրաքիթ միանգամայն տափաքիթ, մեծականջ, թանձրայտ, բոլորագլուխ, նեղաչեայ, չեղակն։ Այս ցեղին կը վերաբերին հիւսիսային



և արեւմտեան Ասիոյ բնակիչները, ինչպէս Սիպերացիք, Թաթարք, Չինացիք, Ճաբոնք։ Մոնկոլեան ցեղն ալ գրեթէ 500 միլիոն է։

3. Ամերիկեան ցեղը. պղնձագոյն, արծուենդն, թխնաւէտ, փոքրակն և խորակն, կունտ 'ի յետուստ։ Այս ցեղը տակաւ սպառելու վրայ է. 13 միլիոն միայն կը կարծուի։

4. Մալայեան ցեղը. դիմօք նման Եւրոպականին բայց աղտոտ թխագոյն կամ դեղնագոյն։ Այս ցեղին կը վերաբերին խաղաղական ովկիանոսի կղզեաց բնակիչները, բաց ի Բաբուաններէն, այսինքն Աւստրալիոյ բնակիչներէն որ սեաւ են բայց Եթովպական ցեղին չեն վերաբերիր։ Այս ցեղն իբր 30 միլիոն կը հաշուուի։

5. Եթովպական ցեղը. սեւամորթ, ասրանման գանգրահեր, լայնաշուրթն, տափաքիթ, լայնածնօտ, չեղատամն։ Ափրիկէի Սեւերն այս ցեղին կը վերաբերին, և իբր 100 միլիոն կը կարծուին։

Հ. Այս այլեւայլ ցեղ մարդիկ ի՞նչ և որչափ լեզու կը խօսին։

Պ. Այս այլեւայլ ցեղ մարդիկ հազարներով լեզուներ կը խօսին որոնք իրարմէ բոլորովին տարբեր կ'երեւան, բայց և այնպէս անոնց մեծ մասը երեք գլխաւոր տեսակի կը վերաբերին։

1. Միավանկ լեզուներ։ Այս լեզուներուն բառերը միավանկ են և առանց հոլովման և խոնարհման։ Այս տեսակին կը վերաբերի Չինաց լեզուն։

2. Շարայար լեզուներ։ Ասոնք ալ հոլով և խոնարհում չունենալով, այս քերականական ձեւե-

րը կը հասկցնեն սովորաբար բառին վերջը, երբեմն ալ մէջը ուրիշ բառեր կցելով: Այս տեսակին կը վերաբերին Ֆիննեան լեզուները, ինչպէս Ունկարերէնը, նաեւ Ամերիկեան ցեղերուն լեզուները:

3. Թեքրականական լեզուներ: Ասոնք հոլովման և խոնարհման ձեւեր ունին: Թեքրականական լեզուներն երկու ցեղ են՝ Հնդեւրոպական և Սեմական: Հնդեւրոպականին կը վերաբերին Յունարէնը, Լատիներէնը, Հայերէնը, Գերմաներէնը, Կելտեան, Սլաւեան, Իրանեան և Սանսքրիտ (Հընդիկ) լեզուները: Սեմականին կը վերաբերին հին Եբրայեցերէնը, Քաղդէարէնը, Ասորերէնը և Արաբերէնը: Թեքրականական լեզուները, մանաւանդ Հնդեւրոպական լեզուք, ընտրելագոյն և ազնուագոյն են:

Լեզուները կը բաժնուին դարձեալ Մեռեալ, այսինքն որ չեն խօսուիր, և կենդանի, այսինքն անոնք որ կը խօսուին: Դարձեալ իւրաքանչիւր լեզու աւելի կամ նուազ գաւառաբարբառներ կ'ունենայ:

## ԴԱՍ Ե.

Հ. Աշխարհիս վրայ քանի՞ տեսակ կրօնք կայ:

Պ. Աշխարհիս վրայ շատ կրօնքներ կան, բայց ամենքն ալ սա երկու տեսակին կը վերաբերին. Միաստուածեան և Բազմաստուածեան:

Միաստուածեան են.

1. Քրիստոնեայք 337 միլիոն, որոնք երեք



գլխաւոր ճիւղ կը բաժնուին Հռովմէական, Յունական և Բողոքական:

2. Հրէայք, 7 միլիոն. 3 ½ միլիոնը Եւրոպա. կը բաժնուին քանի մը աղանդներու, Գարայիմք, Թալմուտեանք և Րաբբանեանք:

3. Մահմետականք, 156 միլիոն: Ասոնք ալ Սիւննի, Շիի և Վահաբի կոչուած աղանդներու կը բաժնըւին:

Բազմաստուածեան են.

1. Պրահմինեանք, Հնդկաստանի մէջ.

2. Պուդդայեանք, Սէյլան կղզին, Քոչինչինի, Ճաբոնի և Չինու մէջ:

3. Դիւապաշտք կամ Ֆեթիշեանք, փորթուկեզերէն ֆեթիշօ բառէն որ դիւթութիւն կը նշանակէ: Ասոնց մեծ մասն Ափրիկէի մէջ է:

Բազմաստուածեան կրօնք դաւանողներուն թիւը 800 միլիոնի կը հասնի:

Հ. Մարդիկ իրենց ապրելու կերպին նայելով քանի՞ տեսակ են:

Պ. Մարդիկ իրենց ապրելու կերպին նայելով երեք կարգ կը բաժնուին:

1. Վայրենի ազգեր որոնք որսորդութեամբ կամ ձկնորսութեամբ կ'ապրին. ասոնք մեծաւ մասամբ անտառներու, այրերու կամ հիւղերու մէջ կը բնակին:

2. Հովիւ կամ Թափառական ազգեր, ասոնք իրենց հօտերուն արդիւնքէն կ'ապրին, և անոնց հետ արօտի համար տեղէ տեղ պտտելով վրաններու տակ կը բնակին, ուստի և վրանաբնակ ալ կ'ըսուին:

Այս երկու կարգ մարդիկ, մանաւանդ առ-

ջինները, կառավարութիւն, օրէնք, ուսում և դպրութիւն, արուեստ և վաճառականութիւն չունին. քանի մը շատ հասարակ արուեստներ զոր ոմանք ունին, ինչպէս ոստայնանկութիւն, դարբնութիւն, այնպէս անկատար են որ արուեստ ըսուելու արժանի չեն:

3. Հաստատաբնակ կամ Քաղաքակիրթ ազգեր: Ասոնք, բաց ի հողագործութենէ որ հաստատուն բնակութիւն ունենալոյ առաջին պայմանն է, ունին նաև այգեգործութիւն, վաճառականութիւն, նաւարկութիւն, այլևայլ ձեռագործական կամ մեքենական արուեստներ, գիր կամ դպրութիւն, գիտութիւններ, գեղարուեստներ, բազմագիտութիւն, օրէնք և կառավարութիւն:

## ԴԱՍ Զ.

Հ. Քաղաքակիրթ ազգաց մէջ քանի տեսակ կառավարութիւն կայ:

Պ. Քաղաքակիրթ ազգաց մէջ երկու տեսակ կառավարութիւն կայ՝ Միապետական և Բազմապետական:

1. Միապետական կառավարութեան մէջ իշխողը մի է, ցկեանս, շատ անգամ նաև ժառանգական, և կը կոչուի Կայսր, Թագաւոր, Իշխան, Դուքս:

Միապետութիւնը երկու կը բաժնուի, Ա. Բացարձակ միապետութիւն, որուն մէջ ամեն օրէնք իշխողին կամքէն կը բխեն. Բ. Չափաւորեալ կամ Սահմանադրական միապետութիւն որուն մէջ ժողո-



վուրդին, կողմէն ընտրեալ Ներեսփոխանական ժողով մը օրէնսդիր իշխանութեան մասնակից է, և գործադիր իշխանութեան կամ վարչութեան վրայ կը հսկէ:

2. Բազմապետական իշխանութիւնն ալ երկու կը բաժնուի, Ա. Հանրապետութիւն որուն մէջ գերագոյն իշխանութիւնը կամ վեհապետութիւնը բոլոր ժողովուրդին ձեռքն է, և Բ. Ազնուապետութիւն որուն մէջ քանի մը երևելի ընտանիք միայն կը վարեն վեհապետութիւնը:

Բազմապետական կառավարութեանց մէջ իշխող չկայ, գործադիր իշխանութիւնը վարելու համար Նախագահ մը միայն կ՚ընտրուի քանի մը տարին անգամ մը ժողովրդեան քուէովը:

Հ. Քաղաքակիրթ ազգաց բնակած տեղերը ինչ կը կոչուին, և ի՞նչ շէնքեր և հաստատութիւններ կան անոնց մէջ:

Պ. Քաղաքակիրթ ազգաց բնակած տեղերը կը կոչուին Քաղաք կամ Բերդաքաղաք՝ եթէ քաղաքը պարսպաւոր է, Աւան և Գիւղ: Ասոնց մէջ, բաց 'ի հասարակ տուներէ որոնց մէջ ընտանիք կը բնակին, կան այլևայլ հասարակաց շէնքեր, զորօրինակ՝ իշխանին պալատը, կառավարութեան գործերուն համար Պաշտօնարաններ, Զօրանոց, Նաւարան, Զինարան, Եկեղեցիներ, այլևայլ տեսակ Դարմանոցներ, հասարակաց Դպրոցներ, Վարժարաններ, Համալսարան, Տպարաններ, Գրատուններ, Թանգարաններ, այլևայլ տեսակ Գործարաններ, Հրապարակներ, Հասարակաց պարտէզներ, Վաճառանոցներ, Դրամատեղան, Նաւահանգիստ և ուրիշ ասոնց նման հաստատութիւններ:

# ԵՒՐՈՊԱ

## ԴԱՍ Է.

Հ. Եւրոպա ո՞ր կիսագունտին վրայ է, որո՞նք են անոր սահմանները, տարածութիւնը և բնակչաց թիւը:

Պ. Եւրոպա հին ցամաքը պարունակող կիսագունտին հիւսիսային արեւմտեան կողմն է: Սահմաններն են հիւսիսէն՝ Սառուցեալ Ովկիանոսը, արեւմուտքէն՝ Ատլանտեան Ովկիանոսը, հարաւէն՝ Միջերկրական և Սեւ ծովերը որոնք Ատլանտեան ովկիանոսին մասերն են, իսկ արեւելքէն. Ուրալ և Կովկաս լեռները, որովք Եւրոպա կը բաժնուի Ասիոյ ցամաքէն: Տարածութիւնն է իբր 182,000 քառ. Մղ. կամ իբր 10 միլիոն քառ. քիլոմէթր. իսկ բնակչաց թիւն է 296 միլիոն:

Հ. Եւրոպա քանի մաս կը բաժնուի, և իւրաքանչիւր մաս ո՞ր Տէրութեան կամ ազգի կը վերաբերի:

Պ. Եւրոպա չորս մաս կը բաժնուի, Հարաւային, Միջին, Հիւսիսային և Արեւելեան:

Ա. Հարաւային Եւրոպա ունի երեք ցամաքակղզի.

1. Յունական ցամաքակղզին որ կը պարունակէ Ա. Եւրոպական Թուրքիա և Բ. Յունաստան:

2. Իտալական ցամաքակղզին որ կը վերաբերի Իտալիոյ թագաւորութեան:

3. Իբերեան կամ Պիրենեան ցամաքակղզին որ կը պարունակէ Ա. Սպանիա և Բ. Լուսիտանիա կամ Փորթուգալ:



Բ. Միջին Եւրոպա կը պարունակէ հինգ Տէրութիւն.

1. Գաղիա:

2. Հելուետիա (Զուիցերի):

3. Հոլանտա:

4. Բելգիա (Պելճիգա):

5. Գերմանիա:

Գ. Հիւսիսային Եւրոպա ունի երեք Տէրութիւն.

1. Սկանտինաւեան ցամաքակղզին որ կը բաղկանայ Շուետի և Նորուեկիոյ թագաւորութիւններէն:

2. Դանիա կամ Տանիմարքա.

3. Մեծն Բրիտանիա (Անգլիա).

Դ. Արեւելեան Եւրոպա ունի Տէրութիւն մը միայն որ է Ռուսիա:

Հ. Եւրոպիոյ այժմու տիրող ազգերն ինչ տոհմերու կը վերաբերին:

Պ. Եւրոպիոյ այժմու տիրող ազգերը կը վերաբերին Ռոմանեան, Գերմանական և Սլաւեան տոհմերուն: Ռոմանեան ազգերն են իբր 97 միլիոն և կը բնակին Եւրոպիոյ Հարաւային արեւմտեան և Արեւմտեան կողմերը, ասոնք են Գաղիացիք, Սպանիացիք և Իտալացիք, ասոնց կրօնքն ընդհանրապէս Հռոմէական է: Գերմանական ազգերն են իբր 92 միլիոն և կը բնակին Հիւսիսային և Միջին Եւրոպա. ասոնք են՝ Անգլիացիք, Շըւետք, Դանիացիք և Գերմանացիք. ասոնց կրօնքն ընդհանրապէս բողոքական է:

Սլաւեան ազգերն են իբր 81 միլիոն. ասոնք շատ ճիւղերու կը բաժնուին, ինչպէս Լեհք, Պոհեմիացիք, Խռուաթք, բայց տիրող ազգ մի-

այն Ռուսն է : Ասոնք ալ ընդհանրապէս յունադաւան են :

Հ. Եւրոպիոյ գլխաւոր ծովերը որո՞նք են.

Պ. Եւրոպիոյ գլխաւոր ծովերն են

1. Սպիտակ ծովը որ հիւսիսային սառուցեալ ովկիանոսէն կը կազմուի :

2. Պալթիկ ծովը :

3. Հիւսիսային ծովը :

4. Իրլանտայի ծովը :

5. Պիսքայեան կամ Կասքոնեան ծովը, որ ծովածոց ալ կ'ըսուի :

6. Միջերկրական ծովը.

Այս հինգ ծովերը կը կազմուին Ատլանտեան ովկիանոսէն :

Միջերկրական ծովէն ալ կը կազմուին հետեւեալ երկրորդական ծովերը.

Ա. Տիռենեան ծովը, Իտալիոյ արեւմտեան դին :

Բ. Ադրիական ծովը, Իտալիոյ արեւելեան դին :

Գ. Յոնիական ծովը, Իտալիոյ և Յունաստանի մէջտեղը :

Դ. Եգէական ծովը, որ Յունական Արշիպեղագոս ալ կ'ըսուի :

Ե. Պրոպոնտիս կամ Մարմարայի ծովը :

Զ. Սեւ ծովը հանդերձ Ազովու ծովով :

## ԴԱՍ Ը.

Հ. Եւրոպիոյ գլխաւոր ծովածոցերը որո՞նք են :

Պ. Եւրոպիոյ գլխաւոր ծովածոցերն են



1. Պոթնիոյ, Ֆինլանտի, Լիւոնիոյ և Տանցկոյ ծոցերը, Պալթիկ ծովուն մէջ :

2. Զոյտերզէէ՝ հիւսիսային ծովուն մէջ :

3. Լիոնի ծովածոցը՝ Միջերկրական ծովուն մէջ Գաղիոյ հարաւային եզերքը :

4. Ճենովայի ծովածոցը՝ Միջերկրական ծովուն մէջ Իտալիոյ եզերքը :

5. Տարենթոնի կամ Դարենդի ծովածոցը՝ Յոնիական ծովուն մէջ Իտալիոյ ծայրը :

6. Վենետկոյ և Թրիեստի ծովածոցերն՝ Ադրիական ծովուն մէջ :

7. Լեբանդի. Բադրասի, Կորնթոսի, Նաւբլիոյ և Աթէնքի ծովածոցերը՝ Յունաստանի եզերքը :

8. Վոլոյի և Թեսաղոնիկէի ծովածոցերն՝ Արշիպեղագոսի մէջ :

9. Օտեսայի և Բերեգոփի ծովածոցերը՝ Սեւ ծովուն մէջ :

Հ. Եւրոպիոյ ծովակները կամ մեծամեծ լճերը որո՞նք են :

Պ. Եւրոպայի ծովակները կամ մեծամեծ լճերն են :

1. Օնեկա, Լատոկա, Սայմա, Իլմէն, Բեյբուս, և Պէլոյ կամ Սպիտակ լիճ՝ Ռուսիոյ մէջ :

2. Մելար. Վեներ, Վեթթեր և Թոռնեա՝ Շուէտի մէջ :

3. Պալադոն և Նոյզիտել՝ Աւստրիոյ մէջ :

4. Նեօշադէլի, Ճենեւայի, Գոստանցայի, Ցիւրիխի, Լուցերնի, Լուկանոյի ծովակները՝ Հելուետիոյ կամ Զուիցերիոյ մէջ :

5. Մաճճիորէ կոչուած ծովակը, և Գոմոյի, Կարտայի, Փերուճիոյ, Պոլսենայի և Ջելանոյի ծովակները՝ Իտալիոյ մէջ :

Հ. Եւրոպիոյ նեղուցները որո՞նք են.

Պ. Եւրոպիոյ նեղուցներն են

1. Վայկաչի նեղուցը՝ Հիւսիսային Սառուցեալ ծովուն մէջ։

2. Սքակէրրաք և Գաթէկաթ որոնք Հիւսիսային ծովը Պալթիկ ծովուն հետ կը կցեն։

3. Սունտ, Մեծ և Փոքր Պէլթ՝ Դանիական կղզիներուն մէջտեղ։

4. Սուրբ Գէորգայ ջրանցքն ու Հիւսիսային նեղուցը որոց մին՝ Հարաւէն, միւսը Հիւսիսէն կը տանին Իրլանտոյ ծովը։

5. Գալէի անցքը՝ Հիւսիսային ծովուն և Մանշի մէջտեղ։

6. Մանշ նեղուցը՝ Գալէի անցքին և Ատլանտեան Ովկիանոսի մէջտեղ։

7. Ճիպրալթարի նեղուցը Ատլանտեան ովկիանոսի և Միջերկրական ծովուն մէջտեղ։

8. Պոնիֆաչիոյի նեղուցը՝ Սարտենիոյ և Գորսիգայի մէջտեղ։

9. Մեսինայի նեղուցը՝ Իտալիոյ և Սիկիլիոյ մէջտեղ։

10. Օդրանդոյի ջրանցքը՝ Յոնիական և Ադրիական ծովերուն մէջտեղ։

11. Տարտանէլի (Ջանագ գալէի) նեղուցը՝ Արշիպեղագոսի և Մարմարայի մէջտեղ։

12. Կոստանդնուպոլսոյ կամ Պոսֆորի նեղուցը Մարմարայի և Սեւ ծովուն մէջտեղ։

13. Ենիգալէի նեղուցը՝ Սեւ ծովուն և Ազախու ծովուն մէջտեղ։



## ԴԱՍ Թ.

Հ. Եւրոպիոյ գետերը որո՞նք են և որ ծովերը կը թափին։

Պ. Եւրոպիոյ գետերն են

ա. Ռուսիոյ մէջ

| | | Քիլ. Երկայնութեամբ | Կը Թափի | |
|---|---|---|---|---|
| 1. | Պէչորա | 1,200 | Հիւս. Սառ. Ովկի. | |
| 2. | Տվինա | 670 | Սպիտ. | ծովը |
| 3. | Թոռնէա | 600 | Պալդ. | » |
| 4. | Նէվա | 75 | » | » |
| 5. | Տունա | 800 | » | » |
| 6. | Նիեմէն | 700 | » | » |
| 7. | Տնիեսթէր | 890 | Սեւ | ծովը |
| 8. | Տնիեբեր | 2,000 | » | » |
| 9. | Տոն | 1,800 | Ազախ | » |
| 10. | Վոլկա | 3,700 | Կասպից | ծովը |
| 11. | Ուրալ | 3,100 | » | » |

բ. Գերմանիոյ մէջ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 12. | Վիսթուլ | 1,105 | Պալդ. | ծովը |
| 13. | Օտէր | 900 | » | » |
| 14. | Էլպա | 1,200 | Հիւս. | » |
| 15. | Վէզէր | 380 | » | » |
| 16. | Րէնոս | 1,460 | » | » |

գ. Գաղիոյ մէջ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 17. | Մէօզ | 800 | » | » |
| 18. | Էսքօ | 380 | » | » |
| 19. | Սէն | 750 | Մանշ | |
| 20. | Լուար | 985 | Ատլ. | Ովկ. |
| 21. | Ժիրօնտ | 620 | » | » |

դ. Անգղիոյ մէջ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 22. | Դամիզ | 400 | Ատլ. | Ովկ. |

| | | | |
|---|---|---|---|
| Ե. Իրլանտիոյ մէջ | | | |
| 23. Շէնըն | 220 | Ատլ. | Ովկ. |
| Զ. Սպանիոյ մէջ | | | |
| 24. Տուէրօ | 730 | » | » |
| 25. Դակօ | 1,000 | » | » |
| 26. Կուատիանա | 875 | » | » |
| 27. Կուատալքիվիր | 530 | » | » |
| 28. Էպրօ | 670 | Միջերկ. | ծովը |
| 29. Ռօն | 890 | » | » |
| Է. Իտալիոյ մէջ | | | |
| 30. Տիբեր | 330 | » | » |
| 31. Բօ | 530 | Ադրիակ. | ծովը |
| 32. Ատիճէ | 350 | » | » |
| Ը. Թուրքիոյ մէջ | | | |
| 33. Մարիցա | 380 | Արշիպեղագոս | |
| 34. Դանուբ | 3,000 | Սեւ ծովը | |

## ԴԱՍ Ժ.

Հ. Եւրոպիոյ գլխաւոր կղզիներն որո՞նք են:

Պ. Եւրոպիոյ գլխաւոր կղզիներն են

1. Հիւսիսային Սառուցեալ Ովկիանոսի մէջ

Ա. Սբիցպէրկ:

Բ. Վայկաց և Քոլկոյեվ:

2. Հիւսիսային ծովուն մէջ

Ա. Նորուեկեան կղզիք որ են՝ Լոֆֆոտէնի, Տրոնհայմի և Պերկէնի խումբերը:

Բ. Անգղիական կղզիք որ են՝ Մեծն Բրիտանիա, Իռլանտա, Հուայթ՝ Անգղիոյ հարաւային կողմը, Հէպ-



րիտեան, Օրքատեան և Շեթլէնտի խումբերը՝ Սկովտիոյ հիւսիսային կողմը:

Գ. Հէլկոլանտ:

3. Իրլանտիոյ ծովուն մէջ

Ա. Մէն և Էնկլըսի:

Բ. Հոլանտեան կղզիք որոց գլխաւորն է Թեքսել, Զուխտէրզէի բերանը:

4. Պալդիկ ծովուն մէջ

Ա. Դանիական կղզիները՝ Սէելանտ, Ֆիոնի, Լալանտ Ֆալստէր, Պոռնհոլմ:

Բ. Շուէտեան կղզիք՝ Օլանտ և Կոթլանտ:

Գ. Ռուսական կղզիք՝ Տակօ, Էօզէլ և Ալանտ:

Դ. Բրուսիական կղզիք՝ Ռիւկէն և Ուզէտոմ:

5. Մանշի մէջ

Նորմանտեան կղզիք՝ Ճըրզի, Կըռնզի և Օրինէյ:

6. Ատլանդեան Ովկիանոսի մէջ

Ա. Իսլանտ:

Բ. Ազորեան կղզիք, Փորթուկալէն 900 քիլ. հեռու:

7. Միջերկրական ծովուն մէջ

Ա. Պալէարեան կղզիք՝ Մայորքա. Մինորքա, Իվիցա և Ֆորմենթերա:

Բ. Կորսիքա:

Գ. Սարտինիա, Էլպա ուր Նաբոլէոն Ա. աքսորուեցաւ 1814 ին:

Դ. Սիկիլիա:

Ե. Լիբարեան կղզիք:

Զ. Մալթայի խումբը 4 կղզիք:

8. Յոնիական ծովուն մէջ

Ա. Յոնիական կղզիք որ են՝ Քորֆու, Բաքսօ, Սանթա Մաուրա, Թէաքի, Քեֆալոնիա, Զանթա, Չերիկօ:

Բ. Կրէտէ կամ Գանտիա :

9. Ատրիական ծովուն մէջ

Լէւրէկեան (Իլլիրիոյ) կղզիք :

10. Արշիպեղագոսի մէջ

Ա. Նէկրոբոն (Եւբեա) :

Բ. Կիկլադեան կղզիք որոց գլխաւորներն են Սիրա, Դէլոս, Անդրոս, Նաքսոս, Բարոս, Սանթորին՝ հըրաբուխ :

Գ. Սպորադեան կղզիք որոց գլխաւորներն են՝ Թասոս, Սամոթրակէ, Իմպրոս, Լեմնոս :

Հ. Եւրոպիոյ ցամաքակղզիները որո՞նք են .

Պ. Եւրոպիոյ ցամաքակղզիներն են

1. Սկանտինաւեան ցամաքակղզին որ կը պարունակէ Շուէտ և Նորուեկիա :

2. Դանիական ցամաքակղզին որ և Եուդլանտ կը կոչուի :

3. Իբերեան ցամաքակղզին որ կը պարունակէ Սպանիա և փորթուկալ :

4. Իտալական ցամաքակղզին :

Հ. Եւրոպիոյ թերակղզիները որո՞նք են :

Պ. Եւրոպիոյ թերակղզիներն են

5. Մորէա կամ Պելոպոնէս (Յունաստան) :

6. Քրիմ (Խըրըմ) Սեւ ծովուն մէջ :

Հ. Եւրոպիոյ պարանոցները որո՞նք են :

Պ. Եւրոպիոյ պարանոցներն են

1. Կորնթոսի պարանոցը որ Մորէա կը կցէ Յունաստանի ցամաքին հետ :

2. Բերեկոփի պարանոցը որ Քրիմէն կը կցէ Ռուսիոյ ցամաքին հետ :



## ԴԱՍ ԺԱ.

Հ. Եւրոպիոյ գլխաւոր հրուանդանները ո՞րոնք են :

Պ. Եւրոպիոյ գլխաւոր հրուանդաններն են

1. Նորդ Քէփ՝ Շուէտի հիւսիսային եզերքը :

2. Լանդս Էնդ՝ Մեծին Բրիտանիոյ հարաւային եզերքը :

3. Քլէր և Մէլին՝ Իրլանտայի հարաւային եզերքը :

4. Լա Հոկ՝ Գաղիոյ հիւսիսային եզերքը :

5. Ֆինիսթէր՝ Սպանիոյ արեւմտեան եզերքը :

6. Սուրբ Վինչենցիոս՝ փորթուկալի արեւմտեան եզերքը :

7. Թրաֆալկար՝ Սպանիոյ հարաւային եզերքը :

8. Քորս՝ Գորսիքայի հիւսիսային եզերքը :

9. Թէուլատա՝ Սարտենիա կղզւոյն հարաւային եզերքը :

10. Բասսարօ՝ Սիկիլիոյ հարաւային եզերքը :

11. Սբարդիվենդօ՝ Իտալիոյ հարաւային եզերքը :

12. Մադաբան՝ Մորէայի հարաւային եզերքը :

Հ. Եւրոպիոյ գլխաւոր լեռնագօտիները ո՞րոնք են :

Պ. Եւրոպիոյ գլխաւոր լեռնագօտիներն են

1. Սկանտինաւեան լեռնագօտին կամ Քէօլէն՝ Շուէտի և Նորուեկիոյ մէջտեղ, 2.600 մէթր բարձր .

2. Անգղիական լեռնագօտիները

Ա. Սնովտոն՝ Վալէսի մէջ :

Բ. Շէվիօ՝ Անգղիոյ և Սկովտիոյ մէջտեղ :

3. Պիրենէեան լեռնագօտին՝ Գաղիոյ և Սպանիոյ մէջտեղ։

4. Սպանիական կամ Իբերեան լեռնագօտիները

Ա. Գանտապրեան գօտին։

Բ. Սիերա Նեվադա։

Գ. Սիերա տ'Էստրելլա։

Դ. Սիերա տ'Օքա կամ Գուատարայի գօտին։

Ե. Սիերա Մորենա։

5. Գաղիական լեռնագօտիք

Ա. Վոժ։

Բ. Սեվէն։

Գ. Օվէրնեա։

6. Եուրա լերանց գօտին՝ Գաղիոյ և Զուիցէրիի մէջտեղ։

7. Ալպեան լեռնագօտին՝ մէկ կողմէն Գաղիոյ և Զուիցէրիի և միւս կողմէն Իտալիոյ մէջտեղ։ Այս գօտւոյն կը վերաբերի Մոնպլան, Եւրոպիոյ ամենէն բարձր լեռը։

8. Ապենինեան լեռնագօտին Իտալիոյ մէջ, 2,900 մէթր բարձր։

9. Գարբաթեան լեռնագօտին Հունկարիոյ մէջ, 2,700 մէթր բարձր։

10. Պալքանները՝ Եւրոպական Թուրքիոյ մէջ, 2,700 մէթր բարձր։

11. Հելլենական լերանց գօտին՝ Պինդոս, 2,500 մէթր բարձր։

12. Ուրալ լերանց գօտին Ռուսիոյ մէջ, Ասիոյ և Եւրոպիոյ մէջտեղը, 2,000 մէթր բարձր։

13. Կովկասեան լեռնագօտին որ Ասիա Եւրոպայէն կը բաժնէ։

Հ. Եւրոպիոյ հրաբուխները որո՞նք են։



Պ. Եւրոպիոյ հրաբուխներն են

1. Վեզուվ՝ Նաբոլիի մօտ, 1,200 մէթր բարձր։

2. Էթնա՝ Սիկիլիոյ մէջ, 3,340 մէթր բարձր։

3. Հեքլա՝ Իսլանտի մէջ։

## Ա. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՒՐՈՊԱ

### 1. ՅՈՒՆԱԿԱՆ ՅԱՄԱՔԱԿՂԶԻ

(Տես էջ 14)

### ԴԱՍ ԺԲ.

Հ. Յունական ցամաքակղզւոյն վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ։

Պ. Այս ցամաքակղզւոյն ամենէն հին բնակիչներն են Յոյնք որ գիտութեանց, արուեստից և քաղաքականութեան կողմանէ իրաւամբ հին ատենուան առաջին ազգը կը համարուին։ Հռոմայեցիք քրիստոնէական թուականէն 146 տարի առաջ նուաճեցին Յոյները, բայց Քրիստոսէ ետքը 391ին Հռոմայեցւոց տէրութիւնը երկուքի բաժնուելով, Արեւմտեան և Արեւելեան, Արեւելեանը եղաւ Յոյն կայսրութիւն մը որոյ մայրաքաղաքն էր Բիւզանդիոն կամ Կոստանդնուպոլիս։ Այս կայսրութեան վրայ յարձակեցան նախ Սլաւ ազգեր՝ Սերուիացիք, Պոսնիացիք և Պուլղարք։ Ապա միջին դարուց մէջ Խաչակիրք այսինքն Երուսաղէմ ազատելու համար Եւրոպայէն արեւելք եկող զօրքերը, 1204–1261 Լատինական կայսրութիւն մը հաստատեցին Կոստանդնուպոլիս՝ Յոյն կայսրները Փոքր Ասիա վռնտելով։ Ան-

կէ դար մը ետքը Օսմանեան Թուրքերը Թաթարիստանէն գալով նուաճեցին Մակեդոնիա, Ալպանիա և Սերուիա։ 1361 ին Սուլթան Մուրատ Ա. Ադրիանուպոլիս մայրաքաղաք ըրաւ, և 1453ին Մայիս 29 Սուլթան Մէհմէտ Բ. առաւ Կոստանդինուպոլիս Բալէօլոկոսեան ցեղէն Կոստանդին ԺԱ. ի ժամանակ։ Այսպէս Յունական կայսրութիւնը եղաւ Օսմանեան կայսրութիւն։

Օսմանեանք բոլոր Եւրոպա դողացուցին։ Սուլթան Սիւլէյման Բ. 1529 ին մինչեւ Վիէնա գնաց. Ունկարիա, Մոլտաւիա, Վալաքիա, Քըրիմէ նուաճուեցան։ 1566 էն, նոյն Սուլթանին մահուանէն ետքը, Օսմանեան տէրութիւնը սկսաւ տկարանալ։ 1683 ին Օսմանեանք նորէն գացին մինչեւ Վիէնա, բայց ետ մղուեցան։ Այնուհետեւ մինչեւ 1718 սաէպ պատերազմներ եղան Օսմանեանց և Աւստրիացւոց մէջտեղ որոնց օգնական էին Լեհացիք։

Օսմանեանց ամենէն մեծ թշնամին եղան Ռուսք Մեծէն Պետրոսէ ետքը։ 1683 ին Օսմանցիք կորուսին Քրիմէ, 1812 ին Պեսսարապիա։ 1821 ին Յունաստան ապստամբելով Եւրոպացւոց օգնութեամբ զատ տէրութիւն եղաւ Սուլթան Մահմուտ Բ. ի ժամանակ, որ Ենիչէրիները վերցնելով Եւրոպական կարգեր հաստատեց, և հազիւ ազատեցաւ Եգիպտոսի կուսակալին Մէհմէտ Ալի փաշայի յարձակումէն։ Եւրոպացւոց օգնութեամբ 1853-1856 Ռուսիոյ պատերազմին ատենը աւելի մեծ վտանգէ մը ազատեցաւ Թուրքիա Գաղիոյ և Անգղիոյ օգնութեամբ։

---



## Ա. ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

(ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՈՒՌԸ)

### ԴԱՍ ԺԳ.

Հ. Եւրոպիոյ մասին մէջ Թուրքիոյ երկիրները որո՞նք են։

Պ. Եւրոպիոյ մասին մէջ Թուրքիոյ երկիրներն են

1. Ռումէլի (ըստ հնոյ Թրակիա)։
2. Պուլկարիա (ըստ հնոյ Միւսիա)։
3. Մակեդոնիա։
4. Թեսալիա։
5. Ալպանիա։
6. Պոսնիա։
7. Եգէական (Արշիպեղագոսի) կղզիները։
8. Երեք հարկատու գաւառներ։

Հ. Ռումէլիի երեւելի քաղաքները որո՞նք են։

Պ. Ռումէլիի երեւելի քաղաքներն են

1. Կոստանդնուպոլիս հնոյ Բիւզանդիոնը։

Կոստանդնուպոլիս Օսմանեան տէրութեան մայրաքաղաքն է, ունի 1,075,000 բնակիչ որոնց 480,000 ը Մահմետական է։ Աշխարհիս ամենէն մեծ վաճառաշահ քաղաքներուն մէկն է Սեւ ծովուն բերանը, Եւրոպիոյ և Ասիոյ սահմանին վրայ շինուած։ Երկայն ջրանցքով մը որ ըստ Եւրոպացւոց Ոսկեղջիւր (գօրն տ'օր) կը կոչուի՝ երկու բաժնուած է, բուն Կոստանդնուպոլիս կամ Իսթամպուլ, և Ղալաթիա հանդերձ Բերայիւ։ Հին շէնքերուն մէջ երեւելի են ա. Սուրբ Սո-

փիա (Այասոֆիա) եկեղեցին Յուստինիանոսէն մնացած, հիմա մզկիթ, բ. վաճառանոցը (չարշին), գ. եօթն աշտարակները (Եէտի գուլէ)։ Բերայէ ետքը որ Եւրոպացւոց և Դեսպանաց թաղն է՝ երեւելի է Ֆանար որոյ բնիկ Յոյն ընտանիքներուն շատը հին Բուզանդեան կայսրութեան ազնուականներէն են. ասոնցմէ կ՚ընտրուէին Մոլտովալաքիոյ հին Հոսբոտարները (Ուլահ պէյի)։ Կոստանդնուպոլսոյ դիմացը, Ասիոյ հողին վրայ են Իւսկիւտար և Քաղկեդոն (Գատըքէօյ)։

2. Ադրիանուպոլիս (Էտիրնէ) (90,000) Մարիցա կամ Մէրիճ գետին քով։

3. Ֆիլիպպէ (40,000)։

4. Կէլիպօլու, զինուորական նաւահանգիստ և վաճառաշահ քաղաք (50,000)։

5. Գըրք քիլիսէ (20,000). ունի ընտիր կօգի և պանիր։

6. Իսլիմիէ (22,000). տօնավաճառն անուանի է։

7. Էսքի Զաղրա (20,000). ունի հանքային ջուրեր։

8. Տէտէաղաճ (16,000)։

9. Ռօտօսթօ (Թէքիրտաղ) (40,000), վաճառատեղի և նաւահանգիստ։

10. Սէլիվրի (15,000). նաւահանգիստ։

11. Տարտանէլ (Չանագ գալէ), աւելի քան 800 թնդանօթով ամրացեալ բերդեր ունի՝ համանուն նեղուցին բերանը։

ԴԱՍ ԺԴ.

Հ. Պուլկարիոյ երեւելի քաղաքները որո՞նք են։

Պ. Պուլկարիոյ երեւելի քաղաքներն են

1. Սոֆիա (30,000), Պալգաններուն ստորոտը։

2. Շումլա (60,000), Պալգաններուն ստորոտը։

3. Նիկոպոլիս (15,000)), Վիտին (25,000), Ռուսչուգ (130,000), Սիլիստրէ (20,000) ամուր տեղեր են։

4. Սիստով (21,000)։

5. Վառնա (20,000) Սեւ ծովուն եզերքը. Դըռնովա՝ հին Պուլղար թագաւորութեան մայրաքաղաքը, Փիլիպպէ, Ռասկրատ, Հազկրատ, Իսքրա։

Հ. Մակեդոնիոյ երեւելի քաղաքները որո՞նք են։

Պ. Մակեդոնիոյ երեւելի քաղաքներն են

1. Թեսսալոնիկ կամ Սէլանիկ (100,000), վաճառաշահ քաղաք։

2. Սէրէզ (30,000), բամբակի մշակութեան կողմանէ երեւելի է 300 գեղերով։ Իշթիպ (15,000), Եէնիճէ, Վօտէնա, Տօլու Մօնասթըր։

3. Այնըրօզ կամ Աթոս լեռը ուր կան քանի երկու յոյն վանք, 500 մատուռ, 5,000 աբեղայ։

Հ. Թեսաղիոյ երեւելի քաղաքներն որո՞նք են։

Պ. Թեսաղիոյ երեւելի քաղաքներն են

1. Լարիսսա կամ Եէնիշէհիր (25,000)։ Լարիսայի մօտ է հին բանաստեղծութեան մէջ անուանի Տէմպէի հովիտը և Ոլիմպոս լեռը։

2. Ֆարսալա (Չաթալճա), ըստ հնոց փարսաղ ուր Քրիստոսէ առաջ 48 ին երեւելի պատերազմ մը եղած է Օգոստոսի և Հայոց թշնամւոյն Անտոնիոսի մէջտեղ։

3. Դուրհալը , Զաղրա ։

Հ. Ալպանիոյ երեւելի քաղաքները որո՞նք են ։

Պ. Ալպանիոյ (Առնաւուտլուգ) երեւելի քաղաքներն են Շկօտրա (20,000) , Եանինա կամ Եանէ (40,000) , հոս մեռաւ Թէփէտէլէնլի Ալի փաշա 1822 ին ։ Տուրացցօ , Բերէմէդ , Աւլօնայ ։

Հ. Պօսնիոյ երեւելի քաղաքները որո՞նք են ։

Պ. Պօսնիոյ երեւելի քաղաքներն են

Պօսնասէրայ (50,000) , Տրաւնիկ (8,000) , Զվօռնիկ (14,000) . ունի կապարի հանք . Պանեալուգա , ունի հանքային ջուրեր , Թուզլա ։

Պօսնիա Թուրքիոյ համար կարեւոր տեղ մըն է իբրեւ լեռնային պարիսպ Աւստրիոյ դէմ ։ 1851 էն 'ի վեր Պօսնիոյ կը վերաբերի Հերցեկովինա , Թուրքիոյ Դալմատիան , գլխաւոր քաղաքը Մօստար , որ անուանի կամուրջ ունի քարաշէն ։

Հ. Եգէական կամ Արշիպեղագոսի կղզիները որո՞նք են ։

Պ. Եգէական կամ Արշիպեղագոսի կղզիներն են

1. Հիւսիսային կողմը՝ Թասօս , Սամոթրակէ , Իմբրօս և Լեմնօս ուր ժամանակաւ կար անուանի բաւիղ մը (լաբիւրինթոս) ։

2. Հարաւային կողմը՝ Կրետէ կամ Գանտիա 156 քառ. մղ. ունի լեռնադօտի մը և Իտա լեռը ։ Քաղաքներն են՝ Գանտիա (210,000) և Գանէա (12,000) ընտիր նաւահանգիստով ։



## ԴԱՍ Դ.

Հ. Թուրքիոյ երեք հարկատու եւրոպական գաւառներն որո՞նք են ։

Պ. Թուրքիոյ երեք հարկատու եւրոպական գաւառներն են՝

1. Սերուիա , 791 քռ. մղ , բնակիչը 1,220,000 ։ Սէրպիա Ժ. դարէն մինչեւ ԺԵ. դար թագաւորութիւն էր ։ 1459 ին Օսմանեանք նուաճեցին . 1718 ին Բասսարովիցի դաշնադրութեամբ մեծաւ մասամբ Աւստրիացւոց անցաւ . 1739 ին Պելկրատի խաղաղութեամբ նորէն առին Օսմանցիք ։ Սերուիացիք 1801-1812 կռուեցան Օսմանեանց հետ , և 1815 ին Սերուիա եղաւ հարկատու իշխանութիւն ։ Բարձրագոյն Դուռը Սերուիայէն տարին 200,000 ֆիորինի տուրք մը կ'առնէ , բայց Պելկրատի բերդին մէջ պահապան զօրք ունենալու իրաւունքէն հրաժարեցաւ 1867 ին ։

Սերուիոյ երեւելի քաղաքներն են Պելկրատ Դանուբի եզերքը (22,000) , Սէմէնտրէ , Գրակուժեվաց (5,000) իշխանանիստ , Գլատովա ։

2. Վալաքիա (Ուլահ) , 1330 քռ. մղ ։ Երեւելի քաղաք է Պուքրէշ (142,000) հոս կը նստի Մոլտովալաքիոյ իշխանը . ունի համալսարան ։ Ամուր քաղաքներ են Իպրայիլ (26,000) Վալաքիոյ նաւահանգիստը , երեւելի մանաւանդ ցորենի առուտուրով , և Ճիուրճեվօ ։

3. Մոլտավիա (Պուղտան) , 867 քռ. մղ ։ Երեւելի է ձիոյ և եզան առուտուրով ։ Մոլտաւիա տարին 10,000 ձի և 60,000 եզ դուրս կը ղրկէ ։

Հ. Մոլտովալաքիոյ բնակիչը ո՞րչափ է ։

Պ. Մոլտովալաքիոյ բնակիչն է 4,600,000 :

Երեւելի քաղաքներն են՝ Եաշ (90,000), Կալաց (36,000), Դանուբի եզերքը. Իսմայիլ (21,000) երեւելի է ցորենի առուտուրով :

Հ. Այս երկու իշխանութեանց վրայ գիտելու արժանի ի՞նչ բան կայ :

Պ. Այս երկու իշխանութիւնները կը կոչուին Մոլտովալաքիա կամ Միացեալ Դանուբեան իշխանութիւններ կամ նաեւ Ռումանիա : Երկուքին միանգամայն տարածութիւնն է 2197 քառ. մղ. բն., 4,600,000 :

Ասոնք ԺԳ. դարուն մէջ անկախ տէրութիւն եղան, ԺԵ. դարուն մէջ նուաճուեցան Օսմանեաններէն : 1802 ին Ռուսիա այս իշխանութեանց պաշտպան ըլլալու իրաւունքը ստացաւ Բարձրագոյն Դռնէն : Իշխանները Կոստանդնուպոլսոյ Ֆէնէրի հին յոյն ընտանիքներէն էին : 1821 ին Իփսիլանդի յոյն իշխանը ապստամբելով յաղթուելէն ետքը՝ իշխանութիւնը տրուեցաւ բնիկ Պոյարներու որոնք նախ երեք տարուան համար կ'ընտրուէին, յետոյ ցկեանս եղան : 1858 ին երկու իշխանութիւնները միացան Բարձրագոյն Դրան հաճութեամբը, ըստ խրատու եւրոպական տէրութեանց, և Քուզա իշխանը՝ Աղեքսանդր Յովհաննէս Ա. անուամբ եղաւ իշխան Մոլտովալաքիոյ, բայց 1865 ին հրաժարելով, 1866 Ապր. 20 ին ժողովուրդը ընտրեց Հոհէնցոլլէռնի ազգատոհմէն Կարոլոս իշխանը իբրեւ ժառանգական իշխան Ռումանիոյ :

Հ. Եւրոպական Թուրքիոյ մէջ ուրիշ ի՞նչ իշխանութիւն կայ :



Պ. Եւրոպական Թուրքիոյ կը վերաբերի նաեւ Չէռնակօրա կամ Մոնթէնէկրօ (Գարատաղ) : Այս երկիրը 80 քառ. մղոն է, 200,000 բնակչօք : Մոնթէնէկրոցիք Սլաւ ցեղէն են, յունադաւան, պատերազմող : Պլատիքան, այսինքն իշխանը, աշխարհական իշխան միանգամայն Եպիսկոպոս է. ունի ծերակոյտ մը : 1861 էն 'ի վեր Մոնթէնէկրոյ մտաւ Բարձրագոյն Դրան իշխանութեանը ներքեւ : Գլխաւոր քաղաքն է Չէթինէ :

Հ. Եւրոպական Թուրքիոյ տարածութիւնը և բնակիչները ո՞րչափ են :

Պ. Եւրոպական Թուրքիոյ տարածութիւնն է 9,370 քառ. մղոն : Բնակչաց թիւն է 17 ½ միլիոն, 6 միլիոնը յունադաւան Սլաւ է, Պոսնիացւոց մէկ մասէն զատ որ Մահմետական են : [Այսինքն

5,700,000 Սլաւ :

ա. 200,000 Մոնթէնէկրոցի :

բ. 1,000,000 Պոսնիացի (Պօշնաք) :

գ. 1,500,000 Սերպիացի (Սըրֆ) :

դ. 3,000,000 Պուլկար :

4 միլիոն Ռումէն (Ուլահ) :

1 ½ » Ալպանիացի (Առնաւուտ) :

4 ½ » Օսմանցի :

1 » Յոյն :

400,000 Հայ :

70,000 Հրեայ :

214,000 Գնչու (Չինկեանէ) :

Հ. Թուրքիա ի՞նչ տեսակ կառավարութիւն է :

Պ. Թուրքիա բացարձակ Միապետութիւն է : Թագաւորը որ Սուլթան կամ Փատիշահ կը կոչուի (1861 էն 'ի վեր Ապտիւլ Ազիզ խան), աշխարհա-

յին և հոգևոր բացարձակ գլուխ է ։ Տէրու-
թեան բարձր պաշտօնատարներն են 1․ Եպար-
քոսը կամ մեծ վէզիրը որ գործադիր իշխանու-
թեան կամ վարչութեան գլուխն է , որուն իշ-
խանութեանը ներքև են ուրիշ պաշտօնեայք ․
2․ Դենպետը կամ Շէյխ իւլ Իսլամը ( Իսլամին
ծերը ) որ գլուխ է Իւլէմայից որ Մահմէտական
կրօնքին քահանաները և դատաւորներն են , թէ-
պէտ ինք Շէյխ իւլ Իսլամ ոչ քահանայ է և ոչ
դատաւոր , այլ օրէնքին մեկնիչը ։ Վարչութեան
ամեն պաշտօնարաններուն , և դաւառաց ու քա-
ղաքաց խորհուրդներուն մէջ Միւֆթի կոչուած
օրէնսգէտներ կը նստին ։

Հ․ Թուրքիոյ զինուորական զօրութիւնը ո՞ր-
չափ է ։

Պ․ Թուրքիոյ ցամաքային զօրքը 210 հազար
է , պատերազմի ատեն կրնայ 702 հազար ըլլալ ։
Նաւատորմիղը կը բաղկանայ 109 շոգենաւէ , ո-
րոնց 13 ը զրահաւոր է 1761 թնդանօթով , և 53
առագաստաւոր նաւ ։

## Բ․ ՅՈՒՆԱՍՏԱՆ

### ԴԱՍ ԺԶ․

Հ․ Յունաստանի տարածութիւնը , բնակիչը և
զօրքը ո՞րչափ է , և թագաւորն ո՞վ է ։

Պ․ Յունաստանի տարածութիւնն է 910 քռ ․
մղոն , բնակիչը՝ 1,350,000 , զօրքը՝ 31,300 , նա-
ւատորմիղը 38 նաւ , 2 ը զրահաւոր ։ Թագաւորն
է 1863 էն 'ի վեր Գէորգ Ա ․ Գերմանիոյ Շլէզվիկ
Հոլշթայնի տունէն ։



Հ․ Յունաստանի երևելի քաղաքները որո՞նք
են ։

Պ․ Յունաստանի երևելի քաղաքներն են

1․ Աթէնք , մայրաքաղաք (41,000) , ունի հա-
մալսարան մը ։ Նաւահանգիստն է Բիրէ (10,000)։

2․ Լէբադիա , Սալոնա , Միսոլոնկի , Կորնթոս , Նաւբ-
լիա (11,000) , Բատրաս (18,000) , վաճառաշահ քա-
ղաք ։

3․ Նաւարին , նաւահանգիստ է ․ հոս այրեցաւ
Օսմանեան նաւատորմիղը 1827 ին ։

4․ Միսիթրա , հին Սպարտայի աւերակներուն
մօտ ։

5․ Մեթոն , բերդաքաղաք , Մխիթարեանց հիմ-
նադիրը , Մխիթար հոս վանք մը հաստատեց ։

6․ Էվրիբոս (Էյրիպօղ) կամ Նեկրոբոնդէ կղզի ,
60 քռ ․ մղ ․ , երկայնութիւնը 24 մղոն ։

7․ Կիկլադեան կղզիք՝ Նաքսոս , Պարոս՝ մարմա-
րիոնն անուանի , Սանդորին հրաբուխ որ վերջին
անգամ բորբոքեցաւ 1866 ին ։

8․ Յոնիական եօթն կղզիք որոց գլխաւորն է
Քորֆու 12 քռ ․ մղ ․ համանուն քաղաքով (25,000)
ունի էջ 21 ։

## 2․ ԻՏԱԼԱԿԱՆ ՅԱՄԱՔԱԿՂԶԻ

### ԴԱՍ ԺԷ․

Հ․ Իտալիոյ վրայ ի՞նչ պատմական տեղեկու-
թիւն կայ ։

Պ․ Այս երկիրը քանի մը տարի առաջ կը
բաղկանար Սարտենիոյ , Նաբոլիի , Լոմպարտիոյ

ու Վենետկոյ Թագաւորութիւններէն, Պապին երկրէն և ուրիշ քանի մը դքսութիւններէ։ 1859 ին Գաղիոյ օգնութեամբն Աւստրիոյ դէմ եղած պատերազմէն ետքը, բաց 'ի Վենետկոյ և Պապին երկիրներուն մէկ մասէն, բոլոր Իտալիա միացաւ Սարտենիոյ հետ, և կոչուեցաւ «Իտալիոյ Թագաւորութիւն»։ 1866 ին Բրուսոյ-Աւստրիական պատերազմին ատենը Իտալիոյ հետ միացաւ նաև Վենետիկ որ Աւստրիոյ կը վերաբերէր. վերջապէս 1870 ին Ֆրանգոյ-Գերմանական պատերազմին ատենը Հռոմ առնուելով Պապին աշխարհական իշխանութիւնը ջնջուեցաւ, և բոլոր Իտալիա եղաւ մէկ Թագաւորութիւն։

Հ. Իտալիոյ տարածութիւնը, բնակիչը և զօրքը ո՞րչափ է, և ո՞վ է Թագաւորը։

Պ. Իտալիոյ տարածութիւնն է 5,376 քռ. մղոն, բնակիչը 26 ½ միլիոն, զօրքը 377,000, բայց կրնայ 571,000 զօրք հանել. նաւատորմիղն է 91 նաւ, 22 ը զրահաւոր, 788 Թնդանօթով։ Իտալիոյ Թագաւորն է Վիքթոր Էմմանուէլ Սաւոյայի տունէն։

Հ. Իտալիոյ երեւելի քաղաքները որո՞նք են։

Պ. Իտալիոյ երեւելի քաղաքներն են

1. Հռոմ, 1871էն 'ի վեր մայրաքաղաք (221,000), Տիբեր գետին քով 7 բլուրներու վրայ շինուած։

Հին Հռոմայեցւոց ժամանակէն մնացած երեւելի շէնքերն են Բանթէոնը (ամենադից մեհեան) որ հիմա եկեղեցի է, Տրայանոսի սիւնը, Քոլոսէումը (Ամֆիթէատրոն 100,000 հոգւոյ համար), Տիտոսի, Սեպտիմոս Սեւերոսի և Կոստանդիանոսի յաղթական կամարները։



Ուրիշ երեւելի շէնքերն են Սուրբ Պետրոսի եկեղեցին՝ Հռոմի 400 եկեղեցիներուն, նաև բոլոր աշխարհի եկեղեցիներուն ամենէն մեծը, զոր Յուլիոս Բ. Պապ սկսաւ շինել 1506 ին, Սիքստոս Է. ի ժամանակ 1590 ին գմբէթը լմնցաւ և 1626 ին օծուեցաւ. Վատիկանու (Պապին) պալատը՝ որ կ'ըսուի թէ 11,000 սենեակ ունի, շատ անուանի գրատուն մը և Թանգարան մը. Լատերանու եկեղեցին՝ որ Պապին մայր եկեղեցին է։

Գրեթէ ամբողջ Հռոմ քաղաքը գեղարուեստից Թանգարան մըն է, երեւելի նկարչաց և անդրիագործաց հռչակաւոր գործերովը հարուստ։ Հռոմի մօտ է նաև Քաթագոմպ կոչուած ստորերկրեայ գերեզմանատունը ուր նախնի Քրիստոնեայք հալածանաց ժամանակ կ'ապաւինէին։ Չիվիթա Վէքքիա (10,000) բերդաքաղաք և նաւահանգիստ։

2. Թուրին, Բօ գետին վրայ, (181,000). ունի համալսարան։

3. Միլան (219,000)։ Նշանաւոր է մայր եկեղեցին դուրսէն 4500 անդրիներով (արձաններով) զարդարուած. Սուրբ Ամբրոսիոս կոչուած եկեղեցին ուր Գերմանիոյ կայսերք Իտալիոյ Թագաւորութեան «երկաթի Թագով» կը պսակուէին։

4. Բաւիա (29,000), Քրէմոնա (31,000), Պէրկամօ (25,000), Սոլֆէրինօ, Գոմօ (12,000)։

5. Վէնէտիկ (114,100), ծովուն մէջ շինուած։ Երեւելի են Տոժերուն պալատները և Սուրբ Մարկոսի եկեղեցին, նաւարանը և Թնդանօթի ձուլարանը։ Վենետիկ կէս դար առաջ հանրապետութիւն էր, որոյ նախագահը կը կոչուէր Տոժ։

6. Քրէմօնա (27,000), Մանդովա (28,000), Վերօնա (56,000) և Պրէշա (40,000), այս վերջին երեքը ամուր բերդեր են, Բատովա (52,000), երեւելի է Սրբոյն Անտոնի պատուացուոյն եկեղեցին, Վիչէնցա (35,000), Ուտինէ (24,000) և Թրէվիզօ (22,000) :

7. Ճենովա, ծովեզերեայ քաղաք (128,000) : Կոստանդնուպոլսէն և Նաբոլիէն ետքը երրորդ է գեղեցիկ դիրքը կողմանէ : Ճենովա մինչեւ 1797 հանրապետութիւն էր, վաճառականութեամբ անուանի, մանաւանդ Սեւ ծովուն մէջ :

8. Բարմա (47,000) · առուտուրը մետաքս և պանիր : Բիաչէնցա (39,000) :

9. Մոտենա (32,000) :

10. Պոլոնիա (90,000), համալսարան ունի · Ֆէռրարա (28,000), Ռավէննա (19,000), Ֆայէնցա (18,000), յախճապակին ընտիր :

11. Ֆլորէնցա (115,000), Իտալիոյ Աթէնքը, գեղեցիկ շինուածներով և թանգարաններով երեւելի է : Լիվօռնօ (84,000) ուր Հայոց եկեղեցի կայ (Հռոմէական Հայոց ձեռքը), ծովեզերեայ քաղաք է : Բիզա (34,000) անուանի է Բիզայի աշտարակը 168′ բարձր : Սիէնա (22,000) : Լուգգա (22,000) :

12. Անգոնա (31,000), բերդաքաղաք : Լորէթթօ, հոս կը ցուցուի Աստուածածնի տունը, որ երեւելի ուխտատեղի է : Բէրուճիա (15,000) :

13. Նաբոլի (419,000), անհամեմատ գեղեցիկ դիրքով, այնպէս որ իտալացւոց մէջ առակ է «Վէ՛տի Նա՛բօլի, բօյի մուօ՛րի», տես Նաբօլի, և ապա մեռիր : Երեւելի է Պուրպոնեան թանգարանը հարուստ գրատամբ և հին առենը հրաբուխէ ծածկուած ու մօտ ատեններս գտնուած Հերքուլանոմ և Բոմբէի քաղաքներուն հնութիւններովը : Կայէտա, բերդաքաղաք : Աքուիլա, Տարէնդօ և Կաբուա շատ հին քաղաքներ են : Պրինտիզի, Րէճճիօ, Սալէռնօ նշանաւոր են :



14. Սարտէնեա կղզին 440 ½ քռ. մղ. (600,000) ծովեզերքը լի է բուստով (մերճան) · գլխաւոր քաղաքն է Քալիարի (28,000) :

15. Էլպա կղզին 4 քռ. մղոն :

16. Սիկիլիա կղզին 531 քռ. մղոն, բն. 2½ միլիոն, շատ ծծումբ ունի : Քաղաքներն են՝ Բալէրմօ (168,000) · համալսարան ունի : Մեսսինա (62 հազար) : Հոս մօտ են Լիբարեան կղզիք :

17. Սան Մարինօ, հանրապետութիւն է 469 էն 'ի վեր · բն. 7,000 :

18. Մալթա, 6¾ քռ. մղոն, բն. 147,000 : 1800 էն 'ի վեր Անգղիացւոց կը վերաբերի, որոնք ծաղկեցուցին կղզին, 'ի բնէ անպտուղ : Գլխաւոր քաղաքն է Լա Վալէթ (60,000), ամուր բերդաքաղաք է :

## 3. ԻԲԵՐԵԱՆ ԿԱՄ ՍՊԱՆԻԱԿԱՆ ՑԱՄԱՔԱԿՂԶԻ

### Ա. ՍՊԱՆԻԱ

### ԴԱՍ ԺԸ.

Հ. Սպանիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ :

Պ. Սպանիոյ հին և բնիկ ժողովուրդն են իբերացիք և կելտք : Փիւնիկեցիք և Յոյնք Սպա-

նից հարաւային եզերքը գաղթականներ ունէին։ Քրիստոսէ առաջ նախ Կարքեդոնացիք և ապա Հռոմայեցիք այս երկրին տիրեցին. Հռոմայեցւոց արևմտեան կայսրութեան կործանելէն ետքը եկան հոն Ալանք, Վանտալք և ապա արևմտեան Գոթացիք, և թագաւորութիւն հաստատեցին։ 711 ին Արաբացիք գալով Մահմետական թագաւորութիւն մը հաստատեցին, բայց փախուցեալ քրիստոնեայք կամաց կամաց զօրանալով վռնտեցին Արաբացիները և հաստատուեցան քանի մը թագաւորութիւններ, ինչպէս Արակոն, Նավարրա, Լէոն, Գասթիլիա և Փորթուկալ 1100 ին։ Այս թագաւորութիւնները ժե. դարուն վերջը (1492 ին) միացան Գասդիլիոյ ժառանգին Իզապէլի և Արակոնի ժառանգին Ֆէրտինանտի ամուսնութեամբ։ Այնուհետեւ Սպանիա Եւրոպիոյ առաջին, ամենէն հզօր և հարուստ թագաւորութիւնը եղաւ, բայց երթալով տկարանալով, 1714 ին Պուրպոնեան ցեղը տիրեց, բայց 1868 ին Իզապէլլա Բ. Պուրպոնեան վռնտուելով, 1870 ին Իտալիոյ թագաւորին որդին Ամատէոս ընտրուեցաւ թագաւոր։ 1873 ին Ամատէոս հրաժարեցաւ, և հանրապետութիւնը հրատարակեցաւ Սպանիոյ մէջ։

Հ. Սպանիոյ տարածութիւնը, բնակիչը և զօրքը ո՞րչափ է.

Պ. Սպանիոյ տարածութիւնն է 9200 քռ. մղ. բն. 16,700,000 հռոմէական կաթոլիկ, զօրքը 216,000, նաւատորմիղը 124 շոգենաւ, 10 հատը զրահաւոր, 3 ը առագաստաւոր, 846 թնդանօթով։



Հ. Սպանիոյ երեւելի քաղաքները որո՞նք են։

Պ. Սպանիոյ երեւելի քաղաքներն են՝

1. Մատրիտ, մայրաքաղաք (317,000). համալսարան ունի։ Թոլէտօ (19,000), եպիսկոպոսանիստ քաղաք։

2. Պատաժօզ (22,000), բերդաքաղաք։

3. Գորտովա (36,000)։ Սեվիլլա (82,000)։ Գատիքս (62,000), զինուորական նաւահանգիստ։ Շէրէզ 39,000)։ Ճիպրալթար որուն ամրոցը 1704 էն ի վեր Անգղիացւոց ձեռքն է։

4. Կրանատա (62,000)։ Հոս են Արաբացի իշխանաց պալատին Ալհամպրայի աւերակները։ Մալակա (93,000), երեւելի է գինին։

5. Մուրսիա (27,000) և Գարթաճէնա (22,000)։

6. Վալէնսիա (87,000), մետաքսի գործարաններ ունի, Ալիգանթէ (31,000), գինին անուանի։

7. Պարսելոնա (180,000), բերդաքաղաք, զինուորական նաւահանգիստ։

8. Սարակոսսա (56,000), 1808 ին և 1809 ին քաջութեամբ դիմացաւ Գաղիացւոց։

9. Բամբէլոնա (23,000), ամուր քաղաք։

10. Սան Եակօ (Ս. Յակոբ) տը Գոմբոսթելլա (27,000) հոս կը ցուցուի Յակոբոս առաքելոյն գերեզմանը և երեւելի ուխտատեղի է։ Գորուննա (27,000) և Ֆէրրոլ։

11. Սանթանտէր (25,000), Պուրկոս (23,000), Սեկովիա. հոս մօտ է Փիլիպպոս Բ. ի շինած Էսգորիալ անուն երեւելի շէնքը՝ վանք, եկեղեցի, դրատուն և գերեզմանատեղի թագաւորաց։

12. Վալլատոլիտ (40,000), Լէօն, Սալամանքա, անուանի համալսարանով։

13. Պալէարեան կղզիք՝ Մայօրգա, գլխաւոր քաղաքը Բալմա (40,000). Մինօրգա, գլխ. քաղաքը Մահոն։

14. Գանարեան կղզիք և Գուինէայի կղզիներն՝ Ափրիկէի մէջ.

15. Անթիլեան մեծ կղզիները Գուպա և Բորդօ Րիգօ՝ Ամերիկայի մէջ.

16. Փիլիփփեան կղզիք՝ Ասիոյ մէջ.

17. Մարիանեան կամ Աւազակաց կղզիք, Գարօլինեան կղզիք և Բելէւ կոչուած կղզիք՝ Աւստրալիոյ մէջ։

18. Անտորա, փոքր հանրապետութիւն 8 քռ. մղոն, Պիրենեանց մէջ, բնակիչը 2,000։

## Բ. ԼՈՒՍԻՏԱՆԻԱ ԿԱՄ ՓՈՐԹՈԿԱԼ

### ԴԱՍ ԺԹ.

Հ. Փորթոկալի վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ։

Պ. ԺԲ. դարուն մէջ Գաստիլիոյ թագաւորը Ալֆոնս Զ. այս երկիրը տուաւ Պուրկոնտցի Հենրիկոս իշխանին։ Պուրկոնտի տունը տիրեց մինչեւ 1580։

Այս փոքր տէրութիւնը երեւելի եղաւ ԺԴ. դարէն ետքը Եւրոպայէ դուրս շատ տեղերու տիրելով։ Վասգօ տէ Կամա նաւապետը գտաւ Արեւելեան Հնդկաստանի ճամբան 1498 ին. Պրազիլեա գտնուեցաւ 1500 ին։ 1580 էն ետքը Փորթոկալ կորսնցուց դուրսի երկիրները, և նուաճուեցաւ Սպանիայէն։ 1640 ին նորէն գտաւ իր ազատութիւնը, ունենալով թագաւոր Պրականցայի տունէն։ 1807 էն ետքը թագաւո-



րական երկու ճիւղին, այսինքն՝ Պրազիլեան և Եւրոպական ճիւղերուն, Բէտրոյի և Միկուէլի մէջ տեղ գահակալութեան համար կռիւ ծագեցաւ։ 1834 ին Բէտրոյի աղջիկը Մարիա տէ Կլորիա եղաւ գահը՝ ամուսնանալով Գոպուրկի տունէն Ֆերտինանտ իշխանին հետ։ Մարիամու յաջորդեց որդին Բէտրոս Ե. 1855 ին, որուն յաջորդեց եղբայրը Տոմ Լուտովիկոս Ա. 1861 ին։ Փորթուկալի փառաւոր ժամանակը երգած է Գամէնս բանաստեղծն իր Լուսիական անուն դիւցազնականին մէջ։

Հ. Փորթոկալի տարածութիւնը, բնակիչը և զօրքը ո՞րչափ է։

Պ. Փորթոկալի տարածութիւնն է 1,684 ½ քռ. մղոն, բնակիչը 4,347,000, զօրքը 70,000, նաւատորմիղը 42 նաւ 366 թնդանօթով։

Հ. Փորթոկալի գլխաւոր քաղաքները որո՞նք են։

Պ. Փորթոկալի գլխաւոր քաղաքներն են

1. Լիզպոն (224,000), մայրաքաղաք։

2. Գոյիմպրա (18,000), ունի համալսարան։ Եւօրա (12,000)։

3. Պրականցա, բերդաքաղաք։

4. Օբօրդօ, հին անունը՝ Փօրթօկալ (90,000), ունի մետաքսի գործարաններ և ընտիր գինի։

5. Ազօրեան կղզիք, 160 մղոն դէպ արեւմուտք Լիզպոնայէն։

6. Մատէրա և Կանաչ Գլխոյ կղզիները և ուրիշ տեղեր Ափրիկէի մէջ։

7. Ասիոյ մէջ Կօա և Տիմօ Մալապարի եզերքը. Մագաօ՝ Չինու մէջ Քանդոնի մօտ։

## Բ. ՄԻՋԻՆ ԵՒՐՈՊԱ

### 4. ԳԱՂԻԱ ԿԱՄ ՖՐԱՆՍԱ

### ԴԱՍ Ի.

Հ. Գաղիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ :

Պ. Գաղիա հին ատենը Կեղտաց կամ Գաղատաց կը վերաբերէր, յետոյ Հռոմայեցիք տիրեցին այս երկրին : Ե. Դարուն սկիզբը գերմանական ազգերուն Ֆրանք կոչուած ցեղը տիրեց Գաղիոյ և երկիրը կոչուեցաւ Ֆրանսա : Ֆրանք թագաւորաց ցեղը կը կոչուի Մերովեան . ասոնցմէ անցաւ իշխանութիւնը Կարոլոսեան ցեղին որոնցմէ մեծն Կարոլոս Թ. դարուն սկիզբը բոլոր Եւրոպիոյ վրայ տարածեց իր իշխանութիւնը : Կարոլոսի մահուընէն ետքը Ֆրանսա զատ թագաւորութիւն եղաւ : Ժ. դարուն վերջերը իշխանութիւնը Գաբեդեան ցեղին անցաւ : Այս ցեղին թագաւորները շատ տկար էին, և երկիրը բաժնուած էր այլեւայլ գրեթէ ինքնագլուխ իշխաններու : Լուտովիկոս ԺԱ. ի ժամանակէն (1461) սկսաւ զօրանալ թագաւորութիւնը, ինքնագլուխ իշխանութիւնները նուաճուեցան : ԺԶ. դարուն Պուրպոնեան ցեղը գահակալեց, և Լուտովիկոս ԺԴ. ի ժամանակը թէ զօրութեան և թէ ուսման և գիտութեան կողմանէ Ֆրանսայի ամենէն ծաղկեալ ժամանակն էր : ԺԸ. դարուն վերջերը (1789) մեծ յեղափոխութենէն ետքը Նաբոլէոն Ա. իշխանութեան հասնելով, Ֆրանսա եղաւ կայսրութիւն 1804 : Նաբոլէոն աքսորուելէն ետքը 1814, Պուրպոնեանք նորէն եկան : 1830 ին Պուրպոնեանք վռընտուելով եկաւ Լուի Ֆիլիփ Օրլէանեան : 1848 ին Լուի Ֆիլիփ վռնտուելով եկաւ Նաբոլէոն Գ. կայսր որ 1870 ին Գերմանացիներէն յաղթուեցաւ, և Ֆրանսա եղաւ հանրապետութիւն որուն նախագահն է հիմա Թիէր :



Հ. Գաղիոյ տարածութիւնը, բնակիչը և զօրքը որչափ են և երկիրը ինչպէս կը բաժնուի :

Պ. Գաղիոյ տարածութիւնն է 9,588 քռ. մղոն, բնակիչը 36,428,000 : Զօրքը 800,000 պատերազմի ժամանակ : Նաւատորմիղը 470 նաւ 5,000 թնդանօթով : Առաջ կը բաժնուէր Գաղիա 36 գաւառ, հիմա Տեբարթըման կոչուած 86 մաս կը բաժնուի :

Հ. Գաղիոյ գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Գաղիոյ գլխաւոր քաղաքներն են՝ Հիւսիսային կողմը,

1. Բարիզ, մայրաքաղաք, (1,825,000), Լոնտրայէն ետքը աշխարհիս ամենէն հռչակաւոր քաղաքն է : Երեւելի շէնքերն են՝ համալսարանը, թագաւորական գրատունը, բանթէոնը ուր են Վոլթէրի և Ժան Ժագ Րուսոյի գերեզմանները, Լիւքսամպուրի պալատը, Էնվալիտ կոչուած ծեր զինուորաց տունը որոյ փառաւոր եկեղեցւոյն մէջն է մեծին Նաբոլէոնի մարմինը, զինուորական դպրոցը, Բալէ Րոյալ, Թիւյլըրրի և Լուվր : Երեւելի են՝ Շան տը Մարս, Շանզ Էլիզէ կոչուած տեղերը, Թիւյլըրրիի պարտէզը, Գոնգորտի և Վանտոմի հրապարակները, որոց առաջնոյն մէջն է Լուքսորի եգիպտական կոթողը : Բարիզի մէջ կան շատ երեւելի դպրոցներ, տպարաններ, թանգարաններ, պարտէզներ :

2· Սէն տընի Բարիզի մօտ, ուր են Թագաւորաց գերեզմանները:

3· Վէրսայլ (44,000)· հոս է Լուի ԺԴ·ի պալատը, և պատկերաց Թանգարան մը:

4· Սէն Քլու, փարիզէն 2 մղոն դէպ արեւմուտք: Այս տեղի պալատը Գաղղիացիք այրեցին 1870 ին:

5· Օռլէան (49,000)· ունի ասուի և բամբակի գործարաններ:

6· Անժէ (55,000), ունի կտաւի (քթանի) գործարաններ:

7· Թուռ (43,000), ունի գինի և պտուղ:

8· Լը Ման (45,000), անուանի է կտաւեղէնի առուտուրով:

9· Ամիէն (61,000), երեւելի է մետաքսի գործարաններով:

10· Պուլօնեը (40,000), բերդաքաղաք և նաւահանգիստ· ունի ծովային բաղանիք:

11· Գալէ, ամուր նաւահանգիստ· ասկէ կ'անցնուի Անգղիա 1⅔ ժամու մէջ:

12· Լիլ (155,000), բերդաքաղաք, արուեստագիտութիւնն անուանի է:

13· Վալանսիէն (25,000), երեւելի են գոպըլէն կոչուած կտաւը և թանթէլները:

14· Տէօնքէրք (33,000), զինուորական և առեւտրական նաւահանգիստ:

15· Րուպէն (1,000), ունի բամբակեղինաց երեւելի գործարաններ:

16· Լը Հավր (75,000), երեւելի նաւահանգիստ:

17· Շէրպուր (37,000), զինուորական ամուր նաւահանգիստ ունի:



18. Պրէստ (80,000), Գաղղիոյ երկրորդ զինուորական նաւահանգիստն է 500 պատերազմական նաւ առնելու չափ մեծ:

19· Րէնն (49,000), Գաղղիոյ Թագաւորներն այս քաղքին եկեղեցին կ'օծուէին:

20· Նափօլէոն վանտէ, առաջ՝ Պուրպոն վանտէ կ'ըսուէր: Վանտէի ժողովուրդը նշանաւոր է ԺՋ· դարուն կրօնքի համար, և 1792 ին Թագաւորական տան համար ըրած քաղաքական պատերազմներուն համար:

21· Րօշֆօր (30,000), 4 մեծ զինուորական նաւահանգիստներէն մէկն է:

## ԴԱՍ ԻԱ·

Հարաւային կողմը

22· Պօրտօ (194,000), երեւելի է գինւոյն համար:

23· Պիարից, ունի ծովային բաղանիք և ձկնորսութիւն:

24· Թուլուզ (127,000), անուանի է երկաթեղէն գործուածներուն համար:

25· Գարգասօն (22,000), հոս ասուի (չուխայ) կը գործուի:

26· Մօնփէլիէ (55,000), ունի բժշկական ճեմարան:

27· Նիմ (60,000)· ունի մետաքսեղէնի և բամբակեղէնի գործարաններ:

28· Մարսիլիա (300,000), այս քաղաքը հիմնած են Յոյնք Քրիստոսէ 600 տարի առաջ: Գաղղիոյ ամենէն մեծ ծովեզերեայ քաղաքն է:

29. Թուլոն (77,000), զինուորական նաւահանգիստ ։

30. Ավինեոն (37,000), Պապերը 70 տարի հոս նստան ։

31. Լիոն (324,000), Գաղիոյ երկրորդ քաղաքն է Բարիզէն ետքը, և մետաքսեղինաց կողմանէ առաջին, որոնց համար 90,000 գործաւոր կ'աշխատին ։ Ոսկերչութեան գործուածներու կողմանէ ալ երեւելի է ։

32. Սէնթ Էթիէն (97,000), 40 գործարան ունի զինուց ։

33. Պըզանսոն (47,000), բերդաքաղաք. երեւելի գործարաններ ունի ։

34. Ռէմս (61,000), ունի ասուի և բամբակի գործարաններ ։ Հոս կը շինուի նաեւ շամբանեա ։

35. Երեւելի են նաեւ Վիշի՝ ջերմուկներուն համար, և Սէտան ուր Գերմանացւոց անձնատուր եղաւ Նաբօլէոն Գ. 84,000 զօրքով 1870, Սեպտեմբեր 2 ին ։

36. Գորսիգա կղզին, մայրաքաղաքն է Այաչչիօ ։

37. Նիս (50,000) և Շամպէրի (20,000). ասոնք Նաբօլէոն Գ. Սավոյայէն առաւ 1860 ին, Իտալիոյ պատերազմէն ետքը ։

39. Գաղիոյ երկիրները Եւրոպայէն դուրս.

ա. Ափրիկէի մէջ՝ Ալճէրի, 12,050 քռ. մղոն ։ Այս երկիրը 1830 էն 'ի վեր ունի Գաղիա, Պուրպոն կղզին, Մատակասգար կղզւոյն վրայ տեղեր ։

բ. Ասիոյ մէջ՝ Պոնտիշէրի, Շանտէրնակոր, և Քօչինչինի մէջ տեղեր ։

գ. Ամերիկայի մէջ՝ Կայան, և Մարթինիք ու Կուատալուբ կղզիները ։



դ. Ովկիանիոյ մէջ՝ Նոր Քալէտոնիա և Մարքիզեան կղզիները ։

## 5. ՀԵԼՈՒԵՏԻԱ ԿԱՄ ԶՈՒԻՑԵՐԻ

### ԴԱՍ ԻԲ.

Հ. Հելուետիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ ։

Պ. Հելուետիոյ մէջ կը բնակէին Կեղտեր, որ նախ Հռոմայեցիներէն, ապա Ֆրանքներէն, և ապա Գերմանացիներէն նուաճուեցան ։ Հելուետիոյ տիրող գլխաւոր ցեղն եղաւ Հապսպուրկի կոմսերուն տունը ։ Առաջին անգամ 1291 ին երեք գաւառ ապստամբելով Հապսպուրկի տունէն եղան հանրապետութիւն ։ 1315 ին նոյն կոմսերուն դէմ եղած պատերազմներէն ետքը՝ ուրիշ հինգ գաւառ ալ յարեցաւ առջի երեքին, այնուհետեւ մինչեւ ԺԳ. դար ազատ գաւառներուն թիւը եղաւ 13, և այնպէս տեւեց մինչեւ Գաղիոյ մեծ յեղափոխութիւնը 1798 ։ Ներկայ դարուս մէջ ուրիշ 12 գաւառ ալ աւելցաւ մինչեւ 1833, այնպէս որ Հելուետիական հանրապետութիւնը կազմող և Քանթոն կոչուած գաւառաց թիւն է հիմա 25, և տէրութիւնը կը կոչուի Հելուէթիական Դաշնակցութիւն կամ հասարակ անուամբ Զուիցերի ։

Օրէնսդրական իշխանութիւնը և գլխաւոր պաշտօնեաներն ընտրելու իրաւունքը կը վերաբերի Դաշնակցական Ժողովին որ գաւառային երեսփոխաններէ կը բաղկանայ, իսկ գործադիր իշխանութիւնը կը վարէ Դաշնակցական Խորհուրդը որ 7 անդամէ կը

բաղկանայ, և կը նստի Պէռն որ այս պատճառաւ դաշնակցութեան գլխաւոր քաղաքն համարուած է :

Հ. Հելուետիական դաշնակցութեան տարածութիւնը, բնակիչը և զօրքը ո՞րչափ է, և գաւառները քանի՞ ցեղ ժողովուրդներէ կը բաղկանան :

Պ. Հելուետիական դաշնակցութեան երկիրներուն տարածութիւնն է 752 քռ. մղոն. բնակիչը 2,510,500, զօրքը 203,000. և գաւառները կը բաղկանան 3 սահմանակից ազգերու վերաբերեալ, այսինքն՝ Գերմանական, Գաղղիական և Իտալական ժողովուրդներէ :

Հ. Հելուետիական դաշնակցութեան գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Հելուետիական Դաշնակցութեան գլխաւոր քաղաքներն են

Գերմանական մասին մէջ՝

1. Պէռն (30,000), դաշնակցութեան քաղաքն է. ունի համալսարան : Մայր եկեղեցւոյն երգեհոնն անուանի է :

2. Պազէլ կամ Պալ (38,000). հարուստ և առաջին վաճառաշահ քաղաքն է Հելուետիոյ, ունի համալսարան և երեւելի տպարան մը :

3. Ցիւրիխ (20,000). ունի համալսարան, բազմարուեստեան դպրոց, երեւելի գործարաններ բաբակեղէնի և մետաքսեղէնի :

4. Լուցէրն (12,000) :

5. Սէն Կալ (15,000). հոն է Սուրբ Կալլոս անուն մէկու մը հիմնած վանքը որ երեւելի է : Ունի բամբակեղէնի գործարաններ :



6. Շաֆհաուզէն (10,000), ասոր մօտ է Ռենոսի Լաուֆէն անուն ջրվէժը :

Գաղղիական և Իտալական մասերուն մէջ՝

1. Ժընեւ (31,000). ունի համալսարան և երեւելի դպրոցներ : Արուեստագիտութեան, մանաւանդ ժամացուցագործութեան մէջ անուանի է :

2. Լօզան (21,000) :

3. Նէօշաթէլ կամ Նայէնպուրկ (10,000). ունի ժամացուցի գործարաններ.

4. Ֆրէյպուրկ (11,000) :

## 6. ՀՈԼԱՆՏԱ.

### ԴԱՍ ԻԳ.

Հ. Հոլանտայի վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ :

Պ. Այս երկիրն հին ատենը քանի մը Գերմանական ցեղեր կը բնակէին : Մեծին Կարոլոսի տէրութիւնը բաժնուելէն ետքը՝ Հոլանտա Գերմանական դքսութիւն եղաւ, և Կարոլոս Ե. էն ետքը որ Գերմանիոյ միանգամայն Սպանիոյ թագաւոր էր, երբ Սպանիա զատ թագաւորութիւն եղաւ, Հոլանտա Սպանիոյ անցաւ, և Փիլիպպոս Բ. Սպանիոյ թագաւորին բռնութիւններուն պատճառաւ 7 հոլանտական գաւառ ապստամբելով 1575ին հաստատեցին հանրապետութիւն մը որ եղաւ մեծ ծովային տէրութիւն մը անուանի հարստութեամբ և վաճառականութեամբ, նաեւ

դիտութեանց և դեղարուեստից կողմանէ ։ Հոլանտացիք հաստատեցին 1602 ին Արեւելեան Հնդկաստանի ընկերութիւնը ։ Բայց ԺԸ. դարուն սկիզբները , 1714 էն ետքը Հոլանտա սկսաւ ծովային զօրութեան և վաճառականութեան մասին տեղի տալ Անգղիոյ ։ Մեծին Նաբոլէոնի ժամանակ 1806 Հոլանտա կորսնցուց նաեւ իր անկախութիւնը , և 1814 ին եղաւ թագաւորութիւն , բայց հարաւային հռոմէադաւան և արհեստագէտ մասը որ են Բելգիացիք , հիւսիսային բողոքական և վաճառական մասէն ապստամբելով 1830 ին եղաւ զատ թագաւորութիւն որ կը կոչուի Բելգիա (Պէլճիգա) ։

Հ. Հոլանտայի տարածութիւնը , բնակիչը , զօրքը ո՞րչափ է և թագաւորն ո՞վ է ։

Պ. Հոլանտայի տարածութիւնն է 643 քռ. մղոն , բնակիչը 3,652,000 , զօրքը 63,000 , նաւատորմիղը 122 նաւ 1245 թնդանօթով , թագաւորն է Գուլիէլմոս Գ. որոյ իշխանութիւնը չափաւորեալ է երկու սենեակներէ բաղկացեալ ազգային ժողովով մը ։

Հ. Հոլանտայի գլխաւոր քաղաքները ո՞րո՞նք են ։

Պ. Հոլանտայի գլխաւոր քաղաքներն են

1. Հաակ (92,000) , մայրաքաղաք ։

2. Ամստերտամ (275,000) , Եւրոպիոյ ամենէն հարուստ և վաճառաշահ քաղաքներէն մէկն է ։ Հիւսիսային ծովուն եզերքը Ամսդէլ գետին բերանը շինուած ըլլալով 90 կղզեակներու բաժնուած է որոնք 292 կամուրջներով իրարու հետ կապուած են ։



3. Ռոտտերտամ (121,000) , վաճառաշահ քաղաք , մանաւանդ ցորենի և ծխախոտոյ ։

4. Լէյտէն (40,000) , ունի համալսարան ։

5. Ուտրէխտ (61,000) , ունի համալսարան ։

6. Նէյմէկէն (23,000) , արուեստներով ծաղկեալ ։

Հ. Ուրիշ ինչ երկիր կը վերաբերի Հոլանտայի ։

Պ. Հոլանտայի կը վերաբերի նաեւ Լիւքսեմպուրկի դքսութիւնը որ Գերմանիոյ մաս է Հոլանտայի իշխանութեան ներքեւ յատուկ սահմանադրութեամբ ։ Գլխաւոր քաղաքն է Լիւքսէմպուրկ (15,000) որուն ամրութիւնները փլցնել տուաւ Նաբոլէոն Գ. 1867 ին ։

Հ. Հոլանտայի Եւրոպայէն դուրս երկիրները ո՞րո՞նք են ։

Պ. Հոլանտայի Եւրոպայէն դուրս երկիրներն են՝

1. Ասիոյ մէջ՝ Ճավա 15 ½ միլիոն բնակչօք, և Մոլուքեան կղզիք ։

2. Ափրիկէի մէջ՝ Սուրբ Գէորգ ։

3. Ամերիկայի մէջ՝ կուիանայի մէկ մասը , և փոքր Անդիլեան կղզիներէն Ս. Եւստաթէոս , Ս. Մարթինոս , Սապա , և Քիւրասաօ ։

## 7. ԲԵԼԳԻԱ

### ԴԱՍ ԻԴ.

Հ. Բելգիոյ տարածութիւնը , բնակիչը և զօրքը ո՞րչափ է , և թագաւորն ո՞վ է ։

Պ. Բելգիոյ տարածութիւնն է 535 քռ. մղոն , բնակիչը 4,900,000 , զօրքը 100,000 , նաւատորմի-

ղը 10 հաւ 50 թնդանօթով ։ Թագաւորն է Լէոպոլտ Բ. որոյ իշխանութիւնը չափաւորեալ է երկու սենեակներէ բաղկացեալ ազգային ժողովով ։

Հ. Բելգիոյ գլխաւոր քաղաքները որո՞նք են ։

Պ. Բելգիոյ գլխաւոր քաղաքներն են

1. Պրիւքսէլ (170,000), մայրաքաղաք է, արհեստից և վաճառականութեամբ ծաղկեալ ։ Ասոր մօտ է Վաթէրլօօ գեղը ուր Նաբոլէոն մեծ 1815 ին յաղթուեցաւ ։

2. Անվէրս (124,000), բերդաքաղաք և նաւահանգիստ, ունի նաւարան ։

3. Կէնտ (120,000). Շէլտէ և Լայս գետերուն բերանը ուր 26 կղզի կը ձեւանան որոնք 309 կամրջով իրարու հետ կապուած են ։ Ունի համալսարան, բամբակեղէնի գործարաններ և տպարաններ ։

4. Պրիւժ (47,000). ունի կտաւի, տամասքոյի և տանթէլայի գործարաններ ։

5. Օսթէնտ (17,000). ունի ծովային բաղնիք ։

6. Մօնս կամ Պէրկէն (23,000), բերդաքաղաք արուեստագիտութեան կողմանէ անուանի ։

7. Լիէժ կամ Լիւթթիխ (104,000), ունի պողպատի, երկաթի գործարաններ, թնդանօթի ձուլարաններ. գլխաւոր առուտուրն է հանքածուխ ։

8. Նամիւր (23,000). բերդաքաղաք ։

9. Լուվէն (33,000). ունի համալսարան ։



# 8. ԳԵՐՄԱՆԻԱ.

## ԴԱՍ ԻԵ.

Հ. Գերմանիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ ։

Պ. Գերմանական ազգը կը սկսի յիշուիլ պատմութեան մէջ Քրիստոսէ իբր դար մը առաջ ։ Իբր հազար տարի ետքը 843 ին, մեծին Կարոլոսի մահուամբը Ֆրանքեան կայսրութիւնը բաժնուելով՝ Գերմանիա զատ թագաւորութիւն եղաւ ։ 911 էն ետքը Գերմանիոյ թագաւորները Հռոմի Պապերէն պսակուելով կը կոչուէին կայսր, և գերմանական թագաւորութիւնը կոչուեցաւ «Սուրբ Հռոմէական կայսրութիւն» ։ Գերմանիոյ կայսերք մինչեւ մեծն Նաբոլէոն « Հռոմէական կայսր » տիտղոսը կրեցին ։ 1815 ին կազմուեցաւ « Գերմանական դաշնակցութիւնը » որ 39 մեծ և փոքր տէրութիւններէ կը բաղկանար, որոնց մէջ գլխաւոր էին Աւստրիա և Բրուսիա ։ Շլէզուիկ Հոլշդայնի պատճառաւ այս երկու մեծ գերմանական տէրութիւնները չկրցան իրենց մէջ միաբանիլ, և 1866 ին ծագեցաւ Աւստրոյ-Բրուսիական պատերազմը, և Բրուսիա յաղթելով հիւսիսային Գերմանիոյ փոքր տէրութեանց մէկ մասը միացուց իրեն հետ, մնացածներուն հետ ալ դաշնակցութիւն մը կազմեց, որ կոչուեցաւ «Հիւսիսային գերմանական դաշնակցութիւն», բաց 'ի հարաւային Գերմանիոյ տէրութիւններէն որ են՝ Պաւիէրա, Վիւրթէմպէրկ, Պատըն և Հէս ։ Այսպէս հին գերմանական դաշնակցութիւնն աւ-

րուեցաւ, և Աւստրիա բոլորովին զատուեցաւ Գերմանիայէն։ 1866 ին և 67 ին Բրուսիա առանձին դաշամբ իրեն հետ կապեց նաեւ վերոյիշեալ հարաւային տէրութիւնները, այնպէս որ երբ 1870 ին Ֆրանգօ-Բրուսիական պատերազմը ծագեցաւ, արդէն բոլոր Գերմանիա, բաց յԱւստրիոյ, ներքուստ կապուած էին իրարու հետ։ Գաղիոյ յաղթելէն ետքը՝ 1871, յունուար 18 ին բոլոր գերմանական տէրութիւնները Բրուսիոյ Կուլիէլմոս (Վիլհէլմ) թագաւորը ընդհանուր Գերմանիոյ ժառանգական կայսր ընտրեցին, և այսպէս բոլոր Գերմանիա եղաւ այլ և այլ տէրութիւններէ բաղկացեալ կայսրութիւն մը։

Հ. Գերմանիոյ կայսրութեան մէջ քանի՞ տէրութիւն կայ։

Պ. Գերմանիոյ կայսրութեան մէջ 25 տէրութիւն կայ, որոց գլխաւորներն են չորս թագաւորութիւն՝ 1. Բրուսիա, 2. Պաւիէրա, 3. Սաքսոնիա և 4. Վիւրթէմպէրկ, և 5. Պատընի ու 6. Հէսի մեծ դքսութիւնները։

## 1. ԲՐՈՒՍԻԱ

### ԴԱՍ ԻԶ.

Հ. Բրուսիոյ թագաւորութեան տարածութիւնը և բնակիչները ո՞րչափ են, և գլխաւոր քաղաքները որո՞նք են։

Պ. Բրուսիոյ տարածութիւնն է իբր 9400 քառ. մղոն, բնակչաց թիւն է 24 միլիոն, և գլխաւոր քաղաքներն են՝



1. Պերլին, մայրաքաղաք (702,000)։ Գեղեցիկ և կանոնաւոր կերպով շինուած. ունի երեւելի համալսարաններ, դպրոցներ, հրապարակներ, հոյակապ շէնքեր, եկեղեցիներ, պարտէզներ։ Պէռլին առուտուրի, արհեստներու և դրամական գործողութեանց կողմանէ Եւրոպիոյ երկրորդ կարգի քաղաքներուն մէկն է։

2. Բոցտամ (43,000), երկրորդ արքայանիստ քաղաք։

3. Պրանտէնպուրկ (26,000)։

4. Շառլոտտէնպուրկ (15,000). հոս է Կուլիէլմոս Գ.ի շիրիմը։

5. Պրէսլաւ (200,000). ունի համալսարան։

6. Մակտէպուրկ (104,000)։

7. Շնէպէք, երեւելի աղահանք ունի որմէ տարին 800,000 կենդինար աղ կ՚ելլէ։

8. Հալլէ (49,000), ունի երեւելի համալսարան։

9. Մինսթէր (25,000). հոս Հռոմէականք ունին աստուածաբանական և փիլիսոփայական ճեմարան։

10. Քէօլն (Քոլոնիա) (125,000) Ռէնոսի վրայ. ունի երեւելի եկեղեցի մը։ Ռուպէնս անուանի պատկերհանը հոս ծնած է։

11. Սոլինկէն (13,000), երկաթէ և պողպատէ գործուածներուն համար անուանի է։

12. Աախէն (68,000). կարոլոս մեծին քաղաքն էր, ուր է նաեւ անոր մարմինը։ Գերմանիոյ կայսերք հոս կը պսակուէին։

13. Քէօնիկսպէրկ (106,000). ունի համալսարան. հոս է Քանթ փիլիսոփային գերեզմանը։

14. Տանցիկ (80,000), երեւելի է ծովային վաճառականութեամբ։

15· Շվէրին (13,000) ։

16· Քասսէլ (42,000) · ասոր մօտ է Վիլհէլմահէօհէ կոչուած տեղն ուր Նաբոլէոն Գ · գրուեցաւ Գերմանացւոց անձնատուր ըլլալէն ետքը ։

17. Հաննովէր (47,000) · հոս է Լայպնից փիլիսոփային բնակարանը ։

## 2· ՊԱՒԻԷՐԱ

### ԴԱՍ ԻԷ·

Հ· Պաւիէրայի տարածութիւնը և բնակիչները ո՞րչափ են, Թագաւորն ո՛վ է ։

Պ· Պաւիէրայի տարածութիւնն է 1377 ¾ քռ· մղոն · բնակչաց թիւն է 4,824,000, Թագաւորը Լուտվիկ Բ ։

Հ· Պաւիէրայի գլխաւոր քաղաքները որո՞նք են ։

1· Միւնիխ կամ Միւնխէն, մայրաքաղաք, 171 հազար բնակչօք ։ Ունի համալսարան, ճարտարապետութեան այլ և այլ տեսակներուն համեմատ շինուած հոյակապ եկեղեցիներ, պատկերներու և արձաններու թանգարաններ և պալատներ ։

2· Աուկսպուրկ (50,000) · հոս կը հրատարակուի Գերմանիոյ ամենէն երեւելի լրագիրը որ կը կոչուի «Ընդհանուր լրագիր» ։

3· Րէկէնսպուրկ (30,000) · հոս է Վալհալլա կոչուած մարմարիոնէ տաճարը ուր կան անուանի Գերմանացւոց կիսարձանները ։



4· Սփայէր (15,000) · Գերմանիոյ կայսերաց գերեզմանը հոս էր ։

## 3· ՍԱՔՍՈՆԻԱ

Հ· Սաքսոնիոյ թագաւորութեան տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է, Թագաւորն ո՞վ է ։

Պ· Սաքսոնիոյ թագաւորութեան տարածութիւնն է 272 քռ · մղ, բնակչաց թիւն է 2,500,000, Թագաւորը Եոհան ։

Հ· Սաքսոնիոյ գլխաւոր քաղաքները որո՞նք են ։

Պ· Սաքսոնիոյ գլխաւոր քաղաքներն են՝

1· Տրէզտըն (156,000), ունի երեւելի կամուրջ Էլպա գետին վրայ 720 կանգուն երկայն և 18 կանգուն լայն · պատկերաց, հնութեանց, պատմութեան և ուրիշ թանգարաններ, երեւելի պալատ մը «Ճաբոնեան պալատ» կոչուած ուր կայ հարուստ մատենադարան մը ։ Ընտիր թանգարաններուն համար կը կոչուի «Գերմանիոյ Ֆլորէնցան» ։

2· Լայփցիկ կամ Լիփսիա (91,000), մէկ ու կէս ժամ հեռաւորութեան մէջ 23 գիւղ ունի բոլորտիքը 52,000 բնակչօք · համալսարան մը, երեք մեծ տօնավաճառ ։ Տպարանները և գրոց վաճառը երեւելի է ։

## 4· ՎԻՒՐԹԷՄՊԷՐԿ

### ԴԱՍ ԻԸ·

Հ· Վիւրթէմպէրկի թագաւորութեան տարածութիւնն ու բնակիչները ո՞րչափ են, թագաւորն ո՞վ է ։

Պ· Վիւրթէմպէրկի թագաւորութեան տարածութիւնն է 354 քռ· մղոն, բնակչաց թիւն է 1,200,000, թագաւորը Քարլ Բ ։

Հ· Վիւրթէմպէրկի երեւելի քաղաքները ո՞րո՞նք են ։

Պ· Վիւրթէմպէրկի երեւելի քաղաքներն են՝

1· Շթութկարթ (76,000), մայրաքաղաք է· ինչպէս Լայփցիկ և Պէրլին, այնպէս հոս երեւելի է գրոց առուտուրը ։

2· Թիւպինկէն (9000), ունի համալսարան ։

## 5· ՊԱՏԷՆ

Հ· Պատէնի տարածութիւնը և բնակիչք ո՞րչափ է, դուքսը ո՞վ է ։

Պ· Պատենի մեծ դքսութեան տարածութիւնն է 278 քռ· մղոն, բնակչաց թիւը՝ 1,435,000, դուքսը՝ Ֆրիտրիք ։

Հ· Պատենի գլխաւոր քաղաքները որո՞նք են ։

Պ· Պատենի գլխաւոր քաղաքներն են՝

1· Ռաստատ (9000)· հոս է մեծ դուքսին ամարանոցը ։

2· Պատէն–Պատէն (9000)· ունի երեւելի ջերմուկներ ։

3· Գարլսրուհէ (32,000), մայրաքաղաք, փողոցներուն և շէնքերուն կանոնաւորութեանը և գեղեցկութեանը կողմանէ անուանի ։ Այս քաղաքը շինուեցաւ 1715 ին ։



## 6· ՀԷՍՍ

### ԴԱՍ ԻԹ·

Հ· Հէսի մեծ դքսութեան տարածութիւնն ու բնակիչները ո՞րչափ են, դուքսը ո՞վ է ։

Պ· Հէսի մեծ դքսութեան տարածութիւնն է 139 քռ· մղոն, բնակչաց թիւն է 823,000, դուքսը՝ Լուտվիկ Գ ։

Հ· Հէսի գլխաւոր քաղաքները որո՞նք են ։

Պ· Հէսի գլխաւոր քաղաքներն են,

1· Մայնց (43,000)· հոս կայ տպագրութիւնը հնարող Կութթէմպէրկի արձանը ։

2· Վորմս (13,000) ։

Հ· Գերմանիոյ ուրիշ երեւելի քաղաքները որո՞նք են ։

Պ· Գերմանիոյ ուրիշ երեւելի քաղաքներն են՝

Վայմար (15,200)· այս քաղքէն էին Շիլլէր, Կէօթէ և Հէրտէր երեւելի մատենագիրներ ։ Եէնա, ունի համալսարան ։ Կոպուրկ (11,000) ։ Կոթա (19,000) ։ Համպուրկ (225,000)· Եւրոպայի ամենէն երեւելի նաւահանգիստներէն մէկն է, առուտուրի կողմանէ Լոնտրայի և Լիվրբուլի կը մօտենայ ։

## ԱԼԶԱՍ ԵՒ ԼՈՐԷՆ

Հ. Այս գաւառներուն տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է։

Պ. Այս գաւառներուն տարածութիւնն է 275 քռ. մղոն, բնակչաց թիւն է 1,663,000։

Հ. Այս գաւառներուն գլխաւոր քաղաքները որո՞նք են։

Պ. Այս գաւառներուն գլխաւոր քաղաքներն են՝

1. Ստրասպուրկ (84,000). ունի երեւելի եկեղեցի մը, համալսարան, գործարաններ։ Այս քաղաքը 1681, Սեպտ. 28 և 30 ին առին Գաղիացիք, և 1870, դարձեալ Սեպտ. 28 և 30 ին նորէն անցաւ Գերմանացւոց։

2. Մարքիրխ (12,900), անուանի է բամպակի գործուածներուն համար, 40 հազար գործաւոր կ'աշխատին այս գործին մէջ։

3. Քոլմար (24,000). արուեստագիտութեան մասին անուանի։

4. Միւլհաուզն (59,000), բամպակի գործուածներուն համար անուանի. 60 հազար գործաւոր կը զբաղին այս գործին։

5. Մէց (55,000). հոս 1872, Հոկտ. 27 ին Պազէն գաղիացի զօրապետն անձնատուր եղաւ Գերմանացւոց 173 հազար զօրքով որոնց մէջ կային 3 Մարաջախտ և 6 հազար պաշտօնակալ։



## 9. ԱՒՍՏՐՈ-ՈՒՆԿԱՐԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆ

### ԴԱՍ Լ.

Հ. Աւստրիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ։

Պ. Աւստրիա հին ատենները Գերմանիոյ մէջ դքսութիւն էր։ ԺԳ. դարուն վերջերը Ռուդոլֆ Հապսպուրկի կոմսութեան իշխանը Րուտոլֆ զԱւստրիա Հապսպուրկի հետ միացուց, և եղաւ կայսր Գերմանիոյ։ Անկէ ետքը Գերմանիոյ կայսերք եղան Հապսպուրկ-Աւստրիոյ տունէն։ 1806 ին Փրանկիսկոս Բ. հրաժարելով Գերմանիոյ կայսր տիտղոսէն՝ սկսաւ կոչուիլ Աւստրիոյ կայսր։ Աւստրիոյ կայսրութիւնը քանի մը տարիէ ի վեր սկսաւ կոչուիլ Աւստրոյ-Ունկարական կայսրութիւն, և կայսրը նոյն Հապսպուրկ-Աւստրիոյ տունէն է Փրանկիսկոս Յովսէփ (Ֆրանց Եօզէֆ)։

Հ. Աւստրոյ-Ունկարական կայսրութեան երկիրները որո՞նք են։

Պ. Հապսպուրկի տունէն եղող գերմանական կայսերք առաջ շատ երկիրներ ունէին Եւրոպայի մէջ, բայց անոնց մեծ մասը կորսնցուցին։ Աւստրիոյ այժմու երկիրներն են։

1. Աւստրիա և Սալցպուրկ որ դքսութիւն են և ժողովուրդը Գերմանացի։

2. Իլլիրիա կամ Լէորէկէ, ժողովուրդը մեծաւ մասամբ Սլաւոն։

3. Թիրոլ, ժողովուրդը Գերմանացի և իտալացի։

4. Բոհեմիա, Մորավիա և Սիլեզիա, ժողովուրդը մեծաւ մասամբ Սլաւ ։

5. Ունկարիոյ Թագաւորութիւնը, ժողովուրդը Ունկարացի ։ Աւստրիոյ կայսրը Ունկարիոյ Թագաւոր կը կոչուի ։

6. Թրանսիլվանիա (Սիպէնպիւրկէն), ժողովուրդը խառն, Գերմանացի, Րումէն (Վալաք) և Ունկարացի ։

7. Սլավոնիա, Խրուաթիա և Զինուորական սահմաններ կոչուած գաւառները որ Տաճկաստանի սահմանակից են ։ Այս գաւառներուն ժողովուրդն ալ Սլաւ է ։

8. Դալմաթիա (Տալմացիա), ժողովուրդը Սլաւ ։

9. Կալիցիա և Քրաքով, ժողովուրդը Բոլոնիացի (Լեհ) ։

10. Պուքովինա, ժողովուրդը խառն ։

Հ. Աւստրիոյ կայսրութեան տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է ։

Պ. Աւստրիոյ տարածութիւնն է 11,267 քռ. մղոն, բնակչաց թիւն է 36 միլիոն ։

9 միլիոնը՝ Գերմանացի.
16 » Սլաւ.
3 ½ » Րումէն (Վալաք).

Մնացածը՝ Հայ, Հրեայ և Գնչու ։

Հ. Այս ժողովրդոց մէջ քանի՞ տեսակ կրօնք կամ դաւանութիւն կայ ։

Պ. 23 միլիոն Հռոմէական ։
3 » Յոյն և Հայ (ոչ հռոմէադաւան)։
3 » Բողոքական (մեծաւ մասամբ Ունկարիոյ մէջ)։
1 » Հրեայ ։



## ԴԱՍ ԼԱ.

Հ. Աւստրիոյ կայսրութեան գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Աւստրիոյ կայսրութեան գլխաւոր քաղաքներն են

1. Վիէնա կամ Վիեննա (225,000), կայսրութեան մայրաքաղաքն է, ունի անուանի սեղանաւորներ, ծաղկեալ վաճառականութիւն, ամեն տեսակ երեւելի գործարաններ, գեղեցիկ պարտէզներ որոնց մէջ հռչակաւոր են Շէօնպրուն և Լիւքսէնպուրկ կոչուած կայսերական պարտէզները, համալսարան ։ Վիէնա ամեն տեսակ գիտնական, զինուորական և արհեստական հաստատութեանց կողմանէ Եւրոպայի ամենէն երեւելի մայրաքաղաքաց մէկն է. երկուանգամ, 1529 և 1683, պաշարուած է Օսմանցիներէն ։

2. Պատէն, ունի ծծմբային ջերմուկներ, ուր հին ատենը Հռոմայեցիք յաճախ կ՚երթային ։

3. Սալցպուրկ (20,000), իտալական ոճով շինուած գեղեցիկ շէնքերուն համար «Գերմանական Հռոմ» կոչուած է ։

4. Կրաց (81,000), ունի համալսարան, շատ գործարաններ ։

5. Լայպախ (23,000) ։

6. Ադելսպերկ, անուանի է քարայեալ ջրոյ կաթիլներէ գոյացեալ սիւներով անձաւներուն և ստորերկրեայ ջուրերուն համար ։

7. Թրիէստ (70,020), ազատ նաւահանգիստ Ադրիական ծովուն եզերքը, առուտուրը ծաղկեալ ։

8· Տրէնտօ (17,000) ուր եղած է արեւմտեան եկեղեցւոյ ընդհանուր ժողովը լուտերականութեան դէմ ։

9· Բրակ (157,000), Պոհեմիոյ մայրաքաղաքն է․ Գերմանիոյ մէջ առաջին անգամ համալսարան հոս հաստատուեցաւ 1348 ին ։

Պոհեմիա ունի յախճապակւոյ, ապակեղինաց և կտաւեղինաց երեւելի գործարաններ ։

10· Պրիւն (73,000), Մորաւիոյ մայրաքաղաքն է․ ունի բամբակեղինաց, մորթեղինաց և շաքարի գործարաններ ։

Մորաւիոյ մէջ այս տեսակ գործարաններ շատ կան ։

11· Աւստէրլից, հոս եղած է 1805 ին մեծին Նաբոլէոնի դէմ անուանի պատերազմը ուր երեք կայսերք ներկայ էին ։

## ԴԱՍ ԼԲ․

12· Պուտա, Գերմաներէն Օֆէն (55,000), Դանուբի աջակողմեան եզերքը, Ունկարական կառավարութեան նիստն է ։

13· Բէշդ (202,000), Դանուբի ձախակողմեան եզերքը, Պուտայի դիմացը որուն հետ կամուրջով մը կապուած է․ ունի համալսարան ։

14· Բրէսպուրկ (47,000), Վիէնայի և Պուտայի մէջտեղ ։

15· Շդուհլվայսէնպուրկ, հին Ունկարացի թագաւորք հոս կը պսակուէին և կը թաղուէին ։

16· Կրան, Ունկարիոյ եպիսկոպոսանիստ քաղաքն է ։



17· Տէպրէցին (44,000), հին ունկարացի ոճով շինուած քաղաք է, տուներն իրարմէ բաց և միայարկ ։

18· Թօքայ, Ունկարիոյ ամենէն ազնիւ գինին հոս կ'ելլէ ։

19· Քրէմնից և Շէմնից (15,000), ունին ոսկւոյ և արծաթի հանքեր ։

20· Քլաուզէնպուրկ (25,000), Քրօնշտատ (128,000) և Հէրմանշտատ (19,000) Թրանսիլուանիոյ գլխաւոր քաղաքներն են ։

21· Ագրամ (21,000) Խռուաթիոյ մայրաքաղաքն է ։

22· Ֆիումէ (19,000), ծովեզերեայ քաղաք վաճառաշահ ։

23· Լայպախ (17,000), Սլաւոնիոյ մայրաքաղաքն է ։

24· Զարա (18,000) Դալմատիոյ մայրաքաղաքը ։

25· Սբալադօ, Ռակուզա, Գատտարօ ։

26· Քրաքօ կամ Քրաքօվիա (50,000), Բոլոնիոյ երեւելի քաղաքներէն մին, ունի համալսարան ։

27· Լէմպէրկ (87,000 · 30 հազարը Հրեայ), ունի համալսարան ։

28· Զէմլին (14,000), Բէտէրվարատին (7,000), Զինուորական սահմանաց գլխաւոր քաղաքներն են ։

Հ· Աւստրիա ի՞նչ տեսակ կառավարութիւն է ։

Պ· Աւստրիա մինչեւ 1867 բացարձակ միապետութիւն էր, այսինքն օրէնսդիր և գործադիր իշխանութիւնը կայսեր միայն ձեռքն էր ։ 1867 ին եղաւ սահմանադրական միապետութիւն ։ Հիմայ կայսեր իշխանութիւնը չափաւորեալ է եր-

կու Րայխսրադ կոչուած ազգային ժողովներով, որոնց մէկը Գերմանոյ-Սլաւական երկիրներուն համար է, միւսը՝ Ունկարիոյ համար: Իւրաքանչիւր գաւառ երեսփոխան կը ղրկէ ազգային ժողովներուն. ասոնք կայսեր հետ մէկտեղ օրէնք կը դնեն, և ընդհանուր գործերը կը հոգան. առանձին գործերու համար իւրաքանչիւր գաւառ Լանդթագ կոչուած գաւառային ժողով ունի:

Հ. Աւստրիոյ զինուորական զօրութիւնը ո՞րչափ է:

Պ. Ցամաքային զօրքը 250 հազար է խաղաղութեան ատեն, պատերազմի ատեն 830 հազար. ծովային զօրքը խաղաղութեան ատեն 5 հազար, պատերազմի ատեն 15 հազար: Նաւատորմիղը կը բաղկանայ 44 շոգենաւէ որոնց 7ը զրահաւոր է, և 24ը առագաստաւոր, աւելի քան 486 թնդանօթով: Առեւտրական նաւերուն թիւը 7,853 է:

## Գ. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱ

### 10 ՍԿԱՆՏԻՆԱՒԵԱՆ ՑԱՄԱՔԱԿՂԶԻ

### ԴԱՍ ԼԳ.

Հ. Սկանտինաւեան ցամաքակղզին քանի՞ տէրութիւն կը պարունակէ:

Պ. Սկանտինաւեան ցամաքակղզին կը պարունակէ երկու տէրութիւն, Շուէտ և Նորուէկիա:

Հ. Այս ցամաքակղզւոյն վրայ ի՞նչ պատմական տեղեկութիւն կայ:

Պ. Հին աւանդութեան մը նայելով Օտին ա-



նուն մէկը Տոն (Տանայիս) գետին կողմերէն գաղթականութիւն մը բերաւ հոս: Օտին իր մահուընէն ետքը իբրեւ աստուած պաշտուեցաւ, բայց անոր յաջորդներուն ժամանակ երկիրը բաժնուեցաւ այլեւայլ թագաւորութեանց որոնք Թ. դարուն մէջ միանալով եղան երեք թագաւորութիւն՝ Շուէտ, Նորուէկիա և Դանիա (Տանիմարքա): Ասոնցմէ էին Նորման կոչուած ծովագնաց ժողովուրդը որ շատ երկիրներու տիրեցին, գլխաւորաբար Անգղիոյ, Գաղիոյ հիւսիսային մասին և Սիկիլիոյ: 1397ին յիշեալ երեք տէրութիւններ միանալով մէկ թագաւորութիւն եղան. այս միութիւնը կը կոչուի «Քալմարեան միութիւն»: 1520ին Շուէտ բաժնուելով զատ թագաւորութիւն եղաւ և շատ զօրացաւ: Կուստաւ Վազա, Կուստաւ Ադոլֆ և Կարոլոս ԺԲ. Շուէտի երեւելի թագաւորներ են. 1709էն ետքը Շուէտ կորսնցուց իր մեծութիւնը: 1814ին Շուէտ և Նորուէկիա միանալով մէկ թագաւորութիւն եղան, թէպէտ երկուքն ալ իրենց առանձին սահմանադրութիւնն ունին:

Հ. Շուէտի և Նորուէկիոյ տարածութիւնը, բնակիչը, զինուորական զօրութիւնը ո՞րչափ են, և թագաւորն ո՞վ է:

Պ. Շուէտի և Նորուէկիոյ տարածութիւնն է 13,771 քռ. մղոն, բնակչաց թիւն է իբր 6 միլիոն, զօրքը 125 հազար, նաւատորմիղը կը բաղկանայ 17 շոգենաւէ, 31 առագաստաւոր նաւէ, և 144 ուրիշ նաւերէ, ամէնը 660 թնդանօթով: Թագաւորն է Օսկար Բ:

Հ. Շուէտի գլխաւոր քաղաքները որո՞նք են:

Պ. Շուեդի գլխաւոր քաղաքներն են՝

1. Սթօքհօլմ (135,000), մայրաքաղաք է։

2. Ուփսալա (11,000), եպիսկոպոսանիստ, ունի համալսարան։

3. Կէլֆ (13,000), Ֆալուն (9,000)։

4. Քարլսքրօնա (18,000), զինուորական նաւահանգիստ։

5. Կօթթէնպուրկ (55,000)։

Հ. Նորուեկիոյ երեւելի քաղաքները ո՞րոնք են։

Պ. Նորուեկիոյ երեւելի քաղաքներն են՝

Քրիստիանիա (65,000). մայրաքաղաք։ Տրամմէն (14,000)։ Պէրկէն (30,000)։ Տրօնհէյմ (19,000)։

## 11. ԴԱՆԻԱ ԿԱՄ ՏԱՆԻՄԱՐՔԱ.

### ԴԱՍ ԼԴ.

Հ. Տանիմարքայի վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ։

Պ. Տանիմարքայի ժողովուրդը տասներորդ դարէն առաջ հինութեամբ և աւազակութեամբ կ'ապրէր։ Տասներորդ դարուն սկիզբը թագաւորութիւն եղաւ։ Այնուհետեւ Տանիմարքացիք զօրանալով շատ տեղերու, գլխաւորաբար Անգղիոյ, տիրեցին։ 1397 ին Տանիմարքա Շուեդի հետ միացաւ, 1523 ին բաժնուելով զատ թագաւորութիւն եղաւ, բայց տկարացաւ և հետզհետէ շատ տեղեր կորսնցուց։ 1863 ին Գերմանացիք առին Տանիմարքացւոց ձեռքէն նաեւ Շլեզուիկ-Հոլշդայնի դքսութիւնը որ բուն Գերմանիոյ մաս էր։



1849 էն 'ի վեր Տանիմարքա եղաւ Սահմանադրական թագաւորութիւն, և այժմու թագաւորն է Քրիստիան Թ.։

Հ. Տանիմարքայի Տարածութիւնը, բնակիչը և զօրքը ո՞րչափ է։

Պ. Տանիմարքայի տարածութիւնն է 694 քառ. մղոն, բնակիչը 1,784,000, զօրքը 53,000, նաւատորմիղը կը բաղկանայ 88 նաւէ 312 թնդանօթով, 30 ը շոգենաւ, 6 ը զրահաւոր։

Հ. Տանիմարքայի գլխաւոր քաղաքները ո՞րոնք են։

Պ. Տանիմարքայի գլխաւոր քաղաքներն են

Քօբէնհակէն (181,000), մայրաքաղաք Սէէլանտ կղզւոյն վրայ։ Ունի համալսարան և նաւարան։ Օտէնսէ (17,000)։

Տանիմարքա մեծաւ մասամբ կղզիներէ կը բաղկանայ, ցամաքային մասը որ թերակղզի է՝ կը կոչուի Եիւթլանտ։

Տանիմարքայի կը վերաբերին Ֆէրօէր կոչուած կղզեաց խումբը Սկովտիոյ հիւսիսային դին, և Իզլանտ կղզին որոյ գլխաւոր քաղաքն է Րէյքեավիք (700)։

Հ. Տանիմարքա Եւրոպայէն դուրս ի՞նչ երկիրներ ունի։

Պ. Տանիմարքա ունի Ամերիկայի մէջ Կրէօնլանտ, և Անգղիեան կղզիներուն մէջ քանի մը փոքր կղզիներ։

## 12. ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ

### ԴԱՍ ԼԵ.

Հ. Մեծին Բրիտանիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ ։

Պ. Բրիտանիա հին ատենը վայրենի երկիր էր․ քրիստոնէական թուականէն առաջ Հռոմայեցիք տիրեցին անոր ։ Հռոմայեցւոց տէրութիւնը կործանելէն ետքը, Ե․ դարուն մէջ Գերմանիայէն Անկլօ-Սաքսոններն Անգլիա գալով քանի մը թագաւորութիւններ հաստատեցին, որոնք յետոյ միանալով մէկ թագաւորութիւն եղան, որ կոչուեցաւ Անգլիոյ թագաւորութիւն ։ Անգլիացիք 1171 ին տիրեցին Իրլանտայի, 1603 ին Սկովտիոյ, և այս միացեալ թագաւորութիւնը կոչուեցաւ Միացեալ թագաւորութիւն Մեծին Բրիտանիոյ ։ Անցեալ դարուն սկիզբէն Բրիտանիա սկսաւ զօրանալ․ աշխարհիս գրեթէ ամեն մասերուն մէջ ունի հիմա հարուստ և մեծամեծ երկիրներ, և առաջին ծովային տէրութիւն կը համարուի ։

Հ. Բրիտանիոյ տարածութիւնը, բնակիչը և զօրքը ո՞րչափ է, և թագաւորն ո՞վ է ։

Պ. Մեծին Բրիտանիոյ տարածութիւնն է 5732 քառ. մղոն, բնակիչը 30,838,000. Եւրոպայէ դուրս ունեցած երկիրներն ալ մէկ տեղ հաշուելով՝ բոլոր տէրութեան տարածութիւնն է 381,000 քառ. մղոն, և բոլոր բնակչաց թիւն է 192 միլիոն ։ Զինուորական զօրութիւնը մեծաւ մասամբ ծովային է․ Նաւատորմիղը կը բաղկանայ



409 նաւէ 60 հազար ծովային զօրքով․ նաւերուն 51 ը զրահաւոր է ։

Այժմու տիրող իշխանն է Վիքթորիա թագուհին ։

Հ. Մեծն Բրիտանիա ի՞նչ տեսակ կառավարութիւն է ։

Պ. Մեծն Բրիտանիա Սահմանադրական կառավարութիւն է, օրէնսդիր իշխանութիւնը Բարլըմէնդ կոչուած ընդհանուր ժողովի մը ձեռքն է որ տուն կոչուած երկու խորհրդարաններէ կը բաղկանայ, այսինքն՝ Լօրտերուն (ազնուականներուն) խորհրդարանէն և ժողովրդեան կողմէն ընտրուած երեսփոխաններու խորհրդարանէն ։

Հ. Մեծն Բրիտանիա ի՞նչպէս կը բաժնուի ։

Պ. Մեծն Բրիտանիա կը բաղկանայ երեք թագաւորութենէ, որ են Անգլիա Վալէսի կամ Կալլի դքսութեամբ, Սկովտիա և Իրլանտա ։

### ԴԱՍ ԼԶ.

Հ. Անգլիոյ գլխաւոր քաղաքները որո՞նք են.

Պ. Անգլիոյ գլխաւոր քաղաքներն են՝

1. Լոնտոն կամ Լոնտրա (3,215,000) մայրաքաղաք Դամիզ գետին վրայ ։ Բազմամարդութեան, հարստութեան, մեծագործութեան և մանաւանդ առեւտրական և ճարտարական գործողութեանց կողմանէ աշխարհիս առաջին քաղաքն է ։ Երեք գլխաւոր մաս կը բաժնուի.

Ա. Վաճառականաց թաղը (Սիթի), հոս է Դրամասեղանը (Պանգան) ։

Բ. Ազնուականաց Թաղը (Ուէսթմինսթէր) Կրօսվընըր Սքուէյր կոչուած գեղեցիկ հրապարակով ։

Գ. Արհեստաւորաց Թաղը (Սաութուըրք) ։

Երեւելի շէնքերն են՝ Ս. Պօղոսի եկեղեցին, Ուէսթմինսթէրի եկեղեցին ուր են Թագաւորաց և երեւելի արանց գերեզմանները, մեծամեծ կամուրջներ, պալատներ, երկու համալսարան, Բրիտանական Թանգարանը հանդերձ գրատամբ, Թամիզ գետին տակը Թըննէլ կոչուած ճամբան ։ Լոնտոնի մէջ կան նաեւ շատ գիտնական ընկերութիւններ,

2. Քէմպրիճ (26,000), ունի համալսարան ։

3. Օքսֆորտ (28,000), ունի համալսարան ։

4. Պըրմինկհէմ (370,000), ունի շատ երեւելի գործարաններ պողպատի, արուրի և ապակւոյ ։

5. Պրիսթըլ (171,000) ։

6. Լիվըրփուլ (518,000) ։

7. Մէնչէսթըր (375,000), ունի երեւելի գործարաններ բամբակեղինաց ։

8. Հալ (131,000), Լիտս (250,000), Հալիֆաքս (110,000), Պրատֆորտ (143,000), Շէֆֆիլտ (247,000). ամէնքն ալ երեւելի գործարաններ ունին այլեւայլ արհեստներու ։

9. Բլիմըթ (80,000), Բորթսմըթ (100,000), Տովըր (12,000) երեւելի նաւահանգիստներ են ։

10. Նիւքասըլ (112,000), ունի հանքածուխ ։

11. Կրինիչ (50,000), երեւելի է աստեղագիտական դիտանոցը ։

12. Եորք (3 ,000), հին քաղաք է ։

13. Քէնթըրպըրի (14,000), եպիսկոպոսանիստ ։

Հ. Սկովտիոյ գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։



Պ. Սկովտիոյ գլխաւոր քաղաքներն են՝

1. Էտինպուրկ (180,000), ունի համալսարան ։

2. Կլասկօ (468,000), ունի համալսարան ։

3. Ապըրտին (75,000), նաւահանգիստ ։

Հ. Իրլանտայի երեւելի քաղաքները որո՞նք են ։

Պ. Իրլանտայի երեւելի քաղաքներն են՝

1. Տըպլին (322,000), մայրաքաղաք. ունի համալսարան ։

2. Պելֆասթ (121,000) ։

3. Գորք (80,000), առատ միս տալուն համար «Անգղիոյ սպանդանոց» կոչուած է ։

Մեծին Բրիտանիոյ քաղաքներուն շատը լի են ամեն տեսակ գործարաններով ։ Երկրագործութիւնը և անասնաբուծութիւնն ալ ծաղկած է ։

Հ. Անգղիոյ երկիրները Բրիտանիայէն դուրս որո՞նք են ։

Հ. Անգղիոյ երկիրները Բրիտանիայէն դուրս ասոնք են՝

1. Եւրոպայի մէջ՝ Ճիպրալթար, Մալթա, Հէլիկոլանտ ։

2. Ասիոյ մէջ՝ Ադէն Արաբիոյ մէջ, Հնդկաստան, հանդերձ Սէյլան, Սինկափուր և ուրիշ կղզիներով ։

3. Ափրիկէի մէջ՝ Գլուխ Բարեյուսոյ, Նաթալ, ուրիշ երկիրներ Ափրիկէի հարաւային եզերքը և քանի մը կղզիներ որոնց մէկն է Սուրբ Հեղինէ ուր աքսորուեցաւ և մեռաւ մեծն Նաբոլէոն 1821 ին ։

4. Ամերիկայի մէջ՝ Միացեալ Նահանգներէն անդին բոլոր հիւսիսային մասը, Ճամայքա կղզին, փոքր Անթիլեան կղզիներուն մեծ մասը, և ուրիշ տեղեր ։

5. Աւստրալիոյ մէջ՝ բոլոր Նոր Հոլանտա, և ուրիշ շատ կղզիներ ։

## Դ· ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒՐՈՊԱ

### 13· ՌՈՒՍԻԱ

### ԴԱՍ ԼԷ·

Հ· Ռուսիոյ վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ ։

Պ· Ռուրիք անուն Սլաւ իշխան մը հիմնեց Ռուսաց տէրութիւնը Թ· դարուն մէջ, և ԺԱ· դարուն մէջ Վլատիմիրի թագաւորութեան ատենը քրիստոնէութիւնը մտաւ Ռուսաց մէջ, բայց Մոնկոլները յարձակելով և տիրելով Ռուսիոյ 1235 ին՝ արգելք եղան այս երկրին յառաջադիմութեանը ։ Իվան Գ· Մոսքուի իշխանը 1481 ին ազատեց Ռուսիա անոնց լուծէն, բայց 1660 էն ետքը սկսաւ Ռուսիա կարեւորութիւն ստանալ Եւրոպայի մէջ, և Պետրոս մեծ ԺԸ· դարուն սկիզբը (1680-1725) ընդարձակեց տէրութիւնը, և այնուհետեւ եղաւ Ռուսիա Եւրոպայի մեծ տէրութեանց մէկը ։ Քաթերինա Բ·, Աղեքսանդր Ա· և Նիկողայոս Ա· ընդարձակեցին և յառաջացուցին տէրութիւնը ։ Այժմու թագաւորն է Աղեքսանդր Բ· ։

Հ· Ռուսիոյ տարածութիւնը, բնակիչը, և զինուորական զօրութիւնը ո՞րչափ է ։

Պ· Ռուսիոյ տարածութիւնն է 380,000 քռ. մղոն · 106,000 ը Եւրոպայի մէջ · բնակիչը 78 ½ միլիոն, Եւրոպայի մէջ՝ 73 միլիոն ։ Զինուորական զօրութիւնը 1,357,000 · Նաւատորմիղը կը բաղկանայ 274 նաւէ, որոնց 24 ը զրահաւոր է և 211 ը՝ շոգենաւ ։



Հ· Ռուսիոյ գլխաւոր քաղաքները որո՞նք են ։

Պ· Ռուսիոյ գլխաւոր քաղաքներն են՝

1· Պետերբուրգ (667,000), Պալդիկ ծովին մօտ, մեծն Պետրոս հիմնեց այս քաղաքը 1703 ին · Եւրոպայի գեղեցիկ մայրաքաղաքներէն մէկն է · ունի հոյակապ պալատներ և շէնքեր, վայելուչ փողոցներ ։ Երեւելի է Սրբոյն Իսահակայ եկեղեցին և համալսարանը ։ Լազարեանք եկեղեցի մը շինած են հոս Հայոց համար ։

2· Կրոնշտադ (45,000), ունի զինուորական նաւահանգիստ անուանի նաւարանով ։

3· Ռիգա (120,000) · Տորբատ (21,000), ունի համալսարան և գիտարան ։

4· Նովկորոդ (20,000) · Ռիւրիք հոս սկսաւ թագաւորութիւնը 862 ին ։

5· Արխանկել (20,000), ունի մուշտակի առուտուր · Ռուսիոյ երկրորդ նաւարանը հոս է ։ Հոս ամենէն կարճ օրը 3 ժամ 12 րոպէ է ։

6· Մոսքուա կամ Մոսկովա (400,000), Ռուսիոյ հին մայրաքաղաքն է · ունի համալսարան ։ Հոս է Հայոց Լազարեան վարժարանը ։

7· Նիժնի-Նովկորոդ (41,000) ունի մեծ տօնավաճառ, ուր 300,000 մարդ կուգայ առուտուրի համար այլ և այլ արեւելեան ազգերէ ։

8· Խազան (62,000), Թաթարաց մայրաքաղաքն էր, ունի համալսարան և աստեղագիտութեան գիտարան ։

9· Քիեվ (74,000) · ունի համալսարան, և հին վանք մը, ուր Ցոյն եկեղեցւոյն սուրբերէն հարիւրին մարմինները կան ։

10· Պոլտավա (32,000) · հոս եղած է մեծին

Պետրոսի յաղթութիւնը Շուէտի Կարոլոս ԺԲ.ի դէմ 1709ին ։

11. Օտեսսա (121,000) Սեւ ծովուն վրայ անուանի նաւահանգիստ է, ունի համալսարան ։ Այս քաղաքը հիմնուեցաւ 1762ին ։

Ռուսիոյ այս հարաւային մասին մէջ անուանի են՝ Նիքոլայեւ, Քերսոն, Տագանրոգ (Թայղան), Քիշնեւ, Սիմֆերոբոլ, Կերչ, Քաֆֆա, կամ Թէոդոսիա, Սեւաստոպոլ։ Շատ Հայեր կան Քարասու, Նոր Նախիջեւան և Գրիգորիոպոլիս ։

12. Օրէնպուրկ (30,000) Ուրալ գետին քով. հոս կը չինուի խաւեար ։

Հ. Ռուսիա Եւրոպայի մէջ ուրիշ ի՞նչ երկիր ունի ։

Պ. Ռուսիոյ կը վերաբերի նաեւ Լեհի թագաւորութեան մեծ մասը որոյ մայրաքաղաքն է Վարշաւա (255,000) . ունի համալսարան ։

Հ. Եւրոպայէ դուրս Ռուսի երկիրները ո՞րոնք են ։

Պ. Եւրոպայէ դուրս Ռուսի երկիրներն Ասիոյ մէջ են, այսինքն՝ Սիպերիա, Թուրքաստան, Վրաստան, Չէրքէզ, Հայաստանի մէկ մասը հանդերձ Էջմիածնիւ ուր կը նստի Հայոց կաթողիկոսը ։

## ԱՍԻԱ

### ԴԱՍ ԼԸ.

Հ. Ասիա ո՞ր կիսագունտին վրայ է, ո՞րոնք են անոր սահմանները, տարածութիւնը և բնակչաց թիւը ։



Պ. Ասիա՝ հին ցամաքը պարունակող կիսագունտին արեւելեան կողմն է ։ Սահմաններն են՝ հիւսիսէն Սառուցեալ Ովկիանոսը, արեւմուտքէն՝ Ուրալ և Կովկաս լեռները, և Կասպից, Միջերկրական և Կարմիր ծովերը, հարաւէն՝ Հնդկաց Ովկիանոսը, արեւելքէն՝ Խաղաղական Ովկիանոսը ։ Տարածութիւնն է 807,000 քռ. մղոն, բնակիչը՝ 782 միլիոն ։

Հ. Ասիա քանի՞ մաս կը բաժնուի ։

Պ. Ասիա չորս մաս կը բաժնուի, Հարաւային, Միջին, Հիւսիսային և Արեւելեան ։

Ա. Հարաւային Ասիա կը պարունակէ՝ 1. Ասիական Թուրքիա, 2. Արաբիա, 3. Իրան, 4. Հնդկաստան և 5. Հնդկաց արշիպեղագոսը կամ Մալեզիա ։

Բ. Միջին Ասիա կը պարունակէ՝ 1. Թուրքաստան կամ Ազատ Թաթարիստան և Կովկասիա ։

Գ. Հիւսիսային Ասիա կը պարունակէ Ասիոյ Ռուսաստան կամ Սիպերիա ։

Դ. Արեւելեան Ասիա կը պարունակէ Չին և Ճափոն ։

Հ. Ասիոյ գլխաւոր ծովերը ո՞րոնք են .

Պ. Ասիոյ գլխաւոր ծովերն են՝

1. Պէհրինկի, Օխոտսքի, Ճափոնի, Չինաց ծովերը և Դեղին ծովը . ասոնք Խաղաղական Ովկիանոսէն կը կազմուին ։

2. Պէնկալայի, Օմանի, Պարսից ծովերը որ ծոց կը կոչուին, և Կարմիր ծովը . ասոնք Հնդկաց Ովկիանոսէն կը կազմուին ։

3. Կասպից ծովը որ շատ մեծ լիճ մըն է ։ Ասիոյ կը վերաբերին նաեւ Միջերկրականը, Արշիպեղագոսը, Մարմարայի և Սեւ ծովերը ։

Հ. Ասիոյ ծովածոցերը որո՞նք են ։

Պ. Ասիոյ ծովածոցերն են Արաբիոյ, Պարսից, Օմանի, Պէնկալայի, Սիամայ, Թոնքինայի, Օխոթի ծոցերը և Անատիրը ։

Հ. Ասիոյ ծովակները որո՞նք են ։

Պ. Ասիոյ ծովակներն են՝

1. Զէրէհ՝ Աֆղանիստան ։

2. Պալքաշ, Քուքունոր, Թունկ-Թինկ՝ Չին ։

3. Արալ՝ Թաթարիստան ։

4. Մեռեալ ծով՝ Պաղեստին ։

5. Պայքալ՝ Սիպերիա ։

6. Վանայ, Ուրմիոյ և Սեւանայ ծովերը՝ Հայաստան ։

Հ. Ասիոյ նեղուցները որո՞նք են ։

Պ. Ասիոյ նեղուցներն են

1. Տարտանէլ և Պոսֆոր՝ Եւրոպական և Ասիական Թուրքիոյ մէջտեղ ։

2. Պապէլմանտէպ՝ Արաբիոյ և Ափրիկէի մէջտեղ ։

3. Հէօրմիւզ նեղուցը՝ Արաբիոյ և Պարսկաստանի մէջտեղ ։

4. Սինկափուրի նեղուցը՝ Հնդկաստանի հարաւային եզերքը ։

5. Մալաքքայի նեղուցը՝ Չինու հարաւային եզերքը ։

6. Քորէայի նեղուցը՝ Չինու և Ճափոնի մէջտեղ ։

7. Թաթարիստանի նեղուցը (ջրանցք) Չոքա կղզւոյն և Չինու մէջտեղ ։

8. Պէհրինկեայ նեղուցը Ասիոյ և Ամերիկայի մէջտեղ ։

Հ. Ասիոյ գետերը որո՞նք են ։

Պ. Ասիոյ գետերն են՝

1. Օպի, Ենիսէյ և Լենա որոնք կը թափին Սառուցեալ Ովկիանոսը ։



2. Ամուր կամ Սաղալիան կը թափի Օխոտսքի ծովը ։

3. Վոլկա և Ուրալ՝ կասպից ծովը ։

4. Հօանկհօ կամ Դեղին գետ և Քեանկ կամ Կապոյտ գետ՝ Դեղին ծովը ։

5. Քամպօճ և Մէյնամ՝ Չինու ծովը ։

6. Իրավատի կամ Ավա, Պրահմափութրա, Գանգէս, Կոտավէրի՝ Պէնկալայի ծոցը ։

7. Ինտոս՝ Օմանի ծոցը ։

8. Տիգրիս և Եփրատ կամ Շատէլ Արապ՝ Պարսից ծոցը ։

9. Սեհոն և Ջեհոն՝ Արալ լիճը ։

10. Սուր և Երասխ՝ կասպից ծովը ։

11. Ճորոխ և Ալիս գետ՝ Սեւ ծովը ։

## ԴԱՍ ԼԹ.

Հ. Ասիոյ կղզիները որո՞նք են ։

Պ. Ասիոյ կղզիներն են՝

1. Նոր Զեմլիա՝ Սառուցեալ Ովկիանոսի մէջ ։

2. Քուրիլեան, Ճափոնեան, Լիու-Քիու, Ֆորմոզա, Հայնան կղզիները՝ Խաղաղական Ովկիանոսի մէջ ։

3. Նիքոպար, Անտաման, Սէյլան, Մալտիւեան, Լաքետիւեան կղզիք՝ Հնդկաց Ովկիանոսի մէջ ։

4. Սփորատեան կղզիք որոնց գլխաւորն է Քիօս կամ Սագըզ Արշիպեղագոսի մէջ ։

5. Հռոդոս, Կիպրոս՝ Միջերկրականին մէջ ։

Հ. Ասիոյ ցամաքակղզիք և թերակղզիք որո՞նք են ։

Պ. Ասիոյ ցամաքակղզիք են՝ Անատօլու կամ

փոքր Ասիա, Արաբիա, Հնդկաստան այսկոյս և այնկոյս Գանգէսի ։

Թերակղզիներն են՝ Կիւզերաթ, Մալաքքա, Գորէա և Քամչատկա ։

Հ. Ասիոյ հրուանդանները որո՞նք են ։

Պ. Ասիոյ հրուանդաններն են՝

1. Պապա պուրունու՝ Թուրքիա ։

2. Պապէլմանտէպ և Ռասէլհատ՝ Արաբիա ։

3. Քոմորին՝ Հնդկաստան ։

4. Լոփաթքա՝ Քամչաթքայի ծայրը ։

Հ. Ասիոյ լեռնագօտիք որո՞նք են ։

Պ. Ասիոյ լեռնագօտիք են՝

1. Ուրալ լեռները ։

2. Կովկասեան գօտին ։

3. Կորդուաց գօտին՝ Հայաստանի հարաւային կողմը ։

4. Ալթայ՝ Սիպերիոյ մէջ ։

5. Պոլոր լեռները՝ Թուրքաստանի մէջ ։

6. Հիմալայա՝ Հնդկաստանի հիւսիսային կողմը ։

7. Էլվէնտ՝ Թուրքիոյ և Պարսկաստանի մէջտեղը ։

8. Էլարէթ՝ Արաբիոյ մէջ ։

9. Տաւրոս գօտին՝ փոքր Ասիոյ մէջ ։

## Ա՝ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՍԻԱ

### 1. ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱ

### ԴԱՍ Խ.

Հ. Ասիական Թուրքիոյ տարածութիւնը և բնակիչը որչափ է ։



Պ. Ասիական Թուրքիոյ տարածութիւնն է 31·632 քառ. մղոն, բնակիչն է 16 ½ միլիոն ։

Հ. Ասիական Թուրքիա քանի՞ մաս կը բաժնուի։

Պ. Ասիական Թուրքիա կը բաժնուի

1. Փոքր Ասիա կամ Անատօլու.

2. Թուրքիոյ Հայաստան.

3. Քիւրտիստան.

4. Միջագետք կամ Էլճէզիրէ.

5. Ասորիք կամ Սուրիա.

6. Իրաք Արէպի ։

Հ. Փոքր Ասիոյ կամ Անատոլուի գլխաւոր քաղաքներն որո՞նք են ։

Պ. Փոքր Ասիոյ կամ Անատոլուի գլխաւոր քաղաքներն են Զմիւռնիա (150,000), Պրուսա (100,000) որ շատ ջերմուկներ ունի, Նիկոմիդիա կամ Իզմիթ, Կոտինա կամ Քէօթահիա (29,000), Գարահիսար (50,000), Տրապիզոն (40,000) և Սինոպ, Իկոնիոն կամ Գոնիա (30,000), Անկիւրիա կամ Էնկիւրի (150,000), Կիւմիւշխանէ ։

Անատոլուի կը վերաբերին նաև հետևեալ քաղաքները որոնք հին ատենը փոքր Հայք կոչուած մասին մէջ են.

Սեբաստիա կամ Սըվաս. հոս ծնաւ Մխիթարեանց հիմնադիրը Մխիթար Աբբա 1676 ին, Եւդոկիա կամ Թօքաթ, Նիկոպոլիս կամ Շապին Գարահիսար, Տիվրիկ, Կիւրին, Արաբկիր, Ակն կամ Էկին, որուն մօտ է Հռոմկլա ուր կայ Ս. Ներսէսի Շնորհալւոյն գերեզմանը, Կեսարիա (65,000) և Թալաս գիւղ ։

Ադանա, Սիս, Տարսոն կամ Թարսուս, Իսքէնտէրուն, Գերմանիկ կամ Մարաշ (20,000), Այնթապ (40,000), Զէյթուն, Ուրհա ։

Հ. Թուրքիոյ Հայաստանի գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Թուրքիոյ Հայաստանի գլխաւոր քաղաքներն են

Կարին կամ Էրզրում (100.000), Խնուս, Բաբերդ, Երզնկա, Կամախ, Բագառինճ գիւղ, Կեղի, Հասանղալա, Արդուին, Կարս (12,000) բոլորտիքը 200 գեղով որոնց մէջ անուանի է Զարիշատ : Կարսի գաւառին մէջ են Անի քաղքին աւերակները :

Հ. Քիւրտիսթանի գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Քիւրտիսթանի գլխաւոր քաղաքներն են.

Տիգրանակերտ կամ Տիարպեքիր (40,000), Բաղէշ, Բալու, Խարբերդ, Վան (50,000) համանուն ծովակին քով որուն մէջ են Աղթամար, Կտուց և Լիմ կղզիները որոնց մէջ Հայ միանձանց վանքեր կան : Վանայ մօտ է Վարագ նշանաւոր վանքը որ ունի տպարան ուր կը հրատարակուի Արծուի կոչուած ամսաթերթը : Այս գաւառին մէջ է նաև Նարեկայ վանքը ուր միաբաններէն էր Ս. Գրիգոր Նարեկացի, Նարեկ կոչուած գրքին հեղինակը. Մուշ որուն մօտ է Ս. Կարապետ հռչակաւոր վանքը, հիմա Քիւրտիսթան կոչուած գաւառը հին Հայաստանի մասն էր :

Հ. Միջագետաց գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Միջագետաց գլխաւոր քաղաքներն են՝

Ուռհա կամ Եդեսիա (40,000), Մուսուլ (60,000):

Հ. Ասորւոց կամ Սիւրիայի գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Ասորւոց գլխաւոր քաղաքներն են :



Բերիա կամ Հալէպ (180,000), Անթէպ (10,000), ունի ջերմուկներ, Տարապուլուս (16,000), Աքքա (20,000) Կարմեղոս լերան մօտ, Դամասկոս կամ Շամ (120,000), Պէյրութ (100,000), որուն մօտ է Լիբանան լեռը ուր Հայ Հռոմէականաց վանքեր կան :

Ասիական Թուրքիոյ այս մասին մէջ են Պաղեստին կամ Հրէաստան որոյ գլխաւոր քաղաքներն են՝ .

Երուսաղէմ (25,000), Հրէից թագաւորութեան մայրաքաղաքը, ուխտատեղի Քրիստոնէից : Երուսաղեմի Սիոն կոչուած մասին մէջն է Հայոց եկեղեցին և վանքը որ ունի 1000 սենեակ ուխտաւորաց համար, դպրատուն և տպարան ուր կը հրատարակուի Սիոն անուն ամսաթերթը. Հոս կը նստի Հայոց Երուսաղեմայ Պատրիարքը : Բեթղեհեմ, ուխտատեղի. Եաֆա (Յոպպէ), Տիբերիա, Նազարէթ :

Հ. Իրաք Արաբիի գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Իրաք Արաբիի գլխաւոր քաղաքներն են՝

Պաղտատ (100,000), Պասրա (60,000) :

Հ. Ասիական Թուրքիոյ կղզիները որո՞նք են :

Պ. Ասիական Թուրքիոյ կղզիներն են՝

Կիպրոս, Հռոդոս (25,0000), Մարմարա, մարմարինը անուանի է, Լեսբոս կամ Միտիլէն (45,000), Քիոս կամ Սաքըզ (15,000), Սամոս կամ Սուսամ ատասը :

## ԴԱՍ ԽԱ.

### 2. ԱՐԱԲԻԱ

Հ. Արաբիոյ տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է, գլխաւոր քաղաքները որո՞նք են :

Պ. Արաբիոյ տարածութիւնն է 48,000 քռ. մղոն, բնակիչը 8 միլիոն. գլխաւոր քաղաքներն են Եէմէն կոչուած գաւառին մէջ՝

Մոքա որոյ սուրճն անուանի էր, և Ադէն :

Հէճազ կոչուած գաւառին մէջ՝

Մէքքէ (45,000), Մահմետի ծննդեան քաղաքը, ուխտատեղի Մահմետականաց : Երեւելի են Պէյթուլլահ կոչուած մզկիթը, Զէմզէմ կոչուած աղբիւրը : Մէտինէ (20,000) ուր է Մահմետի գերեզմանը :

### 3. ԻՐԱՆ

Հ. Իրան ի՞նչ երկիրներ կը պարունակէ :

Պ. Իրան կը պարունակէ 1. Պարսկաստան, 2. Աֆղանիստան, և 3. Պէլուճիստան :

1. Պարսկաստանի տարածութիւնն է 30,000 քռ. մղոն, բնակիչը 5 միլիոն կը կարծուի, թագաւորն է Նասրէտտին շահ : Գլխաւոր քաղաքներն են՝

Դաւրէժ (110,000), Ուրմիա (30,000). Շիրազ (25,000), Թէհրան (80.000), Իսպահան (60,000), Տէրութեան մայրաքաղաքն է, Մեշէտ (70,000), Համատան :

2. Աֆղանիստանի տարածութիւնն է 10,000 քառ. մղոն, բնակիչը 10 միլիոն, գլխաւոր քաղաքներն են՝



Քապուլ (60,000), Քանտահար (50,000), Հէրատ (100,000) :

3. Պէլուճիստանի տարածութիւնն է 7,000 քռ. մղոն, բնակիչը 2 միլիոն, գլխաւոր քաղաքն է Քէլաթ (20,000) :

## ԴԱՍ ԽԲ.

### 4. ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հ. Հնդկաստան քանի՞ է :

Պ. Հնդկաստան երկու.ք է, 1. Ցայսկոյս Գանգէսու և 2. Ցայնկոյս Գանգէսի :

Հ. Հնդկաստան Ցայսկոյս Գանգէսի քանի՞ կը բաժնուի :

Պ. Հնդկաստան Ցայսկոյս Գանգէսի երեք մաս կը բաժնուի, Ա. Անգղիական մաս, Բ. Անգղիոյ հարկատու մաս, և Գ. Ազատ մաս :

Ա. Անգղիական մասին տարածութիւնն է 48,000 քառ. մղոն, բնակիչը 150 միլիոն, գլխաւոր քաղաքներն են՝

1. Գալկաթա (1,000,000), Տէլհի (150,000) հին Մոնկոլներուն մայրաքաղաքը, Ակրա (125,000) :

2. Պէնարէս (200,000), Բրահմիններուն (Հնդկաց քուրմերուն) կրթութեան տեղը և ուխտատեղի Հնդկաց. Ալլահապատ (73,000), Մուրշիտապատ (150,000), Տագա (60,000) :

3. Պոմպայ (820,000), հոս կրակապաշտ Պարսիկներ կան. Սուրաթ (135,000) :

4. Մատրաս (720,000), հոս Հայ վաճառականներ կան. Լահոր (100,000) :

5. Ցէյլոն կղզի, 1162 քառ. մղոն, բնակիչը 1,500,000:

Բ. Անգղիոյ հարկատու երկիրներուն տարածութիւնն է 20,000 քառ. մղոն, բնակիչը 35 միլիոն, գլխաւոր քաղաքներն են.

Լաքնով (300,000), Հայտէրապատ (200,000), Նակբուր (115,000), Դէհլի (160,000), ունի շատ բակոտաներ (Հնդկաց մեհեաններ), և ուխտատեղի է Հնդկաց: Լաքատիւեան կղզիք:

Գ. Հնդկաստանի ազատ երկիրներուն տարածութիւնն է 10,000 քառ. մղոն, բնակիչը 13 միլիոն, գլխաւոր քաղաքներն են՝

Քաշմիր (170,000), հոս կը գործուին ազնիւ շալեր, Մայսոր (60,000), Քաթմանտու (30,000): Մալտիւեան կղզիք:

Հ. Եւրոպական ուրիշ տէրութեանց երկիրները որո՞նք են Հնդկաստանի մէջ:

Պ. 1. Բոնտիշէրի (25,000) և Ջանտէրնակօր (30,000) Գաղղիացւոց:

2. Կօա (30,000)՝ Փորթուկալցւոց:

Հ. Հնդկաստան յայնկոյս Գանգէսի ինչ երկիրներէ կը բաղկանայ:

Պ. Հնդկաստան յայնկոյս Գանգէսի կը բաղկանայ 1. Պիրմայէ, 2 Սիամ և 3. Անամ թագաւորութիւններէն եւ 4. Անգղիական Պիրմայէ:

1. Պիրմայի տարածութիւնն է 8,900 քառ. մղոն, բնակիչը 4 միլիոն, գլխաւոր քաղաքներն են Ամարաբուրա (30,000):

2. Սիամի տարածութիւնն է 14,500 քառ. մղոն, բնակիչը 6 միլիոն, գլխաւոր քաղաքն է՝ Պանկօք (400,000), ուր կայ երեւելի կռատուն մը:



3. Անամ որ Քոչին-Չին ալ կ'ըսուի, 9,900 քռ. մղոն, բնակիչը 11 միլիոն. գլխաւոր քաղաքներն են՝

Հուէ (100,000), Սայկոն (180,000), Քամպոճ (40 հազար):

4. Անգղիական Պիրմայի տարածութիւնն է 2,640 քռ. մղոն, բնակիչը 10 միլիոն. գլխաւոր քաղաքներն են՝

Սինկաբուր (150,000), Արագան (80,000), Բէկու (50 հազար). ունի բրգաձեւ կռատուն մը 300 ոտք բարձր, Ռանկուն (50,000):

## 5. ՀՆԴԿԱՑ ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍԸ ԿԱՄ ՄԱԼԵԶԻԱ

Հ. Հնդկաց Արշիպեղագոսը կամ Մալեզիա ինչ երկիրներէ կը բաղկանայ:

Պ. Հնդկաց Արշիպեղագոսը կամ Մալեզիա կը բաղկանայ շատ մը կղզիներէ որոնց գլխաւորներն են՝

1. Անտաման և Նիքոպար կղզիք որ Անգղիացւոց կը վերաբերին:

2. Մեծ Սունտա կղզիներն որ են Սումադրա, Ճաւա որոյ մայրաքաղաքն է Պաթավիա (70,000) որ Հոլանտացւոց կը վերաբերի, Պօռնէօ, Սէլէպէս:

3. Փոքր Սունտա կղզիք:

4. Մոլուքեան կամ Համեմ կղզիք որ Հոլանտացւոց կը վերաբերին:

5. Սուլու կղզիք:

6. Փիլիպպեան կղզիք:

## Բ· ՄԻՋԻՆ ԱՍԻԱ

### 1· ԹՈՒՐՔԷՍՏԱՆ ԿԱՄ ԱԶԱՏ ԹԱԹԱՐԻՍՏԱՆ

### ԴԱՍ ԽԴ·

Հ· Թուրքէստանի տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է, և գլխաւոր քաղաքները որո՞նք են։

Պ· Թուրքէստանի տարածութիւնն է 30,000 քռ· մղոն, բնակիչը 8 միլիոն, գլխաւոր քաղաքներն են՝

Պուխարա (150,000), Սամարքանդ (10,000), Լէնկթիմուրի մայրաքաղաքը ուր կայ անոր գերեզմանը յասպիս քարէ· Բալխ կամ Բահլ (3,000), Խիվա (13,000), Խոքանդ (30,000)։

Ասոնց ամեն մէկը մէյմէկ իշխանութիւն է։ Այս երկիրները Ռուսիա 1872 էն 'ի վեր նուաճելու վրայ է։

## Գ· ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՍԻԱ

### 1· ՉԻՆ

Հ· Չինու տէրութեան տարածութիւնը և բընակիչները ո՞րչափ են, երկիրը քանի՞ մաս կը բաժնուի, գլխաւոր քաղաքները որո՞նք են։

Պ· Չինու տէրութեան տարածութիւնն է 193 հազար քռ· մղոն, բնակիչը 446 միլիոն· չորսի կը բաժնուի 1· Բուն Չինաստան, 2 Մանճուրիա, 3· Մոնկոլիա, 4· Թիպէթ։

Գլխաւոր քաղաքներն են՝

1· (1,650,000), մայրաքաղաք է, ունի համալսարան, գիտարան աստեղագիտութեան, գըրատուն՝ 300,000 հատոր գրքով, կայսերական ապարան մը, զօրանոցներ։



2· Նանքին (1,000,000), Չինացւոց Աթէնքը· հոս կը նստի Հռոմէադաւան եպիսկոպոս մը։

3· Քանթոն (1,250,000), վաճառաշահ քաղաք։

4· Շանկ Հայ (400,000), Ամոյ (300,000), Սուչէու (600,000)։

5· Լհասսա, կրօնատեղի Թիպէթի մէջ։

Հ· Չին ի՞նչ տեսակ կառավարութիւն է և թագաւորն ո՞վ է։

Պ· Չինու կառավարութիւնը բացարձակ միապետական է։ Ըստ Կոմփուկիոսի (500 ին նախ քան զՔր·) երկինք կը վարեն Չինու Տէրութեան մեծամեծ շարժումները, և ան է երկրին ճշմարիտ և միմիայն տէրը· կայսրը որ Չինաց լեզուաւ Թիէն ծէ, երկնից որդի, և Հօանկ թի, բարձրագոյն իշխան կը կոչուի, տէրութեան հայրն ու մայրն է, և բացարձակ իշխան։ Այժմու տիրող ցեղը Մանչու Թաթարներէն է, և արդի կայսրն է Գունկ-շի։

### 2· ՃԱՊՈՆ

### ԴԱՍ ԽԴ·

Հ· Ճապոն ի՞նչ երկիր է, տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է։

Պ· Ճապոն Չինու արևելեան հարաւային կողմը խաղաղական Ովկիանոսի մէջ մեծ և փոքր կղզիներէ բաղկացեալ Տէրութիւն է։ Տարածութիւնն է 7,000 քառ· մղոն, բնակիչը 20 միլիոն։

Հ· Ճապոնի գլխաւոր կղզիները և քաղաքները որո՞նք են։

Պ. Ճարոնի գլխաւոր կղզիներն են՝ Նիփոն, Քիուսիու, Սիքոք և Եզօ։

Գլխաւոր քաղաքներն են՝ Եդօ (1,500,000)․ այս քաղաքն առաջ Ճարոնի աշխարհական իշխանին նիստն էր, հիմա երկրորդ մայրաքաղաք է։ Միաքօ կամ Քիօտօ (500,000), երկրին հիմա մի միայն հոգեւոր իշխանին մայրաքաղաքն է։ Օզաքա (400,000), վաճառաշահ ծովեզերեայ քաղաք է, մօտ ատեններս բացուեցաւ Եւրոպացւոց։

Հ. Ճարոն ի՞նչ տեսակ կառավարութիւն է, և թագաւորն ո՞վ է։

Պ. Ճարոն բացարձակ միապետութիւն է, և գերագոյն իշխանութիւնը Միքատօյ կոչուած իշխանին ձեռքն է։ Միքատօն առաջ երկրին հոգեւոր գլուխն էր միայն, աշխարհական իշխանը զատ էր և Դայիգուն կը կոչուէր։ վերջին ատեններս Միքատօն, կրօնական գլուխը, երկու իշխանութիւնը միացուց, և աշխարհական իշխանը քաշուեցաւ Եզօյ կղզին։ Հիմա Ճարոնի կառավարութիւնը մեծ ջանք կ՚ընէ այն երկրին մէջ եւրոպական կրթութիւն տարածելու․ մօտերս շատ երիտասարդներ կառավարութեան ծախքով Ամերիկա և Եւրոպա ղրկուեցան ուսում և գիտութիւն սորվելու։ Ճարոնի արդի թագաւորը կամ կայսրն է Մուց Հիդօ։

## Յ· ԿՈՎԿԱՍԻԱ

Հ. Կովկասիա ի՞նչ երկիր է, տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ են, գլխաւոր քաղաքները ո՞րո՞նք են։

Պ. Կովկասիա Ռուսի տէրութեան Ասիոյ մէջ



ունեցած երկիրներուն մէկ մասն է՝ Կովկաս լերանց երկու կողմը․ տարածութիւնն է 7978 քռ. մղոն, բնակիչը 4 ½ միլիոն։

Գլխաւոր քաղաքներն են, Կովկասէն ասդին դէպ ՚ի հիւսիս՝

Ստաւրոփոլ (17,000)։

Կովկասէն անդին դէպ ՚ի հարաւ՝

Տփղիս կամ Թիֆլիս (71,000), Վրաց մայրաքաղաքն է, ունի ջերմուկներ։ Երեւան (10,000), Հայոց քաղաք․ ասոր մօտ է Էջմիածին ուր կը նստի Հայոց կաթողիկոսը։ Ունի վանք գրատամբ և տպարանով ուր կը հրատարակուի Արարատ անուն ամսաթերթը։ Շամախի (25,000)։

## Դ․ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՍԻԱ ԿԱՄ ՍԻՊԵՐԻԱ

Հ. Սիպերիա ո՞ր տէրութեան կը վերաբերի, տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է, գլխաւոր քաղաքները որո՞նք են։

Պ. Սիպերիա կը վերաբերի Ռուսիոյ․ տարածութիւնն է 274,000 քռ․ մղոն, բնակիչը 5 ½ միլիոն, գլխաւոր քաղաքներն են՝

Թոպոլսք (17,000), Օմսք (27,000), հոս կը նստի Սիպերիոյ կուսակալը, Իրքուտսք (28,000), Օխոտսք (3,000), հոս կ՚աքսորուին ոճրագործները։

Սիպերիոյ կը վերաբերին Քամչաթքա թերակղզին։

# ԱՖՐԻԿԷ

## ԴԱՍ ԽԵ.

Հ. Աֆրիկէ ո՞ր կիսագունտին վրայ է, որո՞նք են անոր սահմանները, տարածութիւնը և բնակչաց թիւը ո՞րչափ է:

Պ. Աֆրիկէ հին ցամաքը պարունակող կիսագունտին հարաւային արեւմտեան կողմն է: Սահմաններն են հիւսիսէն՝ Միջերկրական ծով, արեւմուտքէն՝ Ատլանդեան Ովկիանոս, հարաւէն՝ Հարաւային Ովկիանոս, արեւելքէն՝ Կարմիր ծով և Հնդկաց Ովկիանոս: Տարածութիւնն է 544,000 քռ. մղոն, բնակչաց թիւը՝ 192 միլիոն:

Հ. Աֆրիկէ քանի՞ մաս կը բաժնուի:

Պ. Աֆրիկէ կը բաժնուի Ա. Հիւսիսային Աֆրիկէ, Բ. Հարաւային Աֆրիկէ, և Գ. Կղզիք:

Ա. Հիւսիսային Աֆրիկէ կը պարունակէ 1. Եգիպտոս, 2. Նուբիա, 3. Հաբէշ, 4. Պէրպէրիստան, 5. Սահարա, 6. Սենեկամպիա, 7. Սուդան:

Բ. Հարաւային Աֆրիկէ կը պարունակէ 1. Արեւելեան ծովեզրը, 2. Բուրէյանց երկիրը, 3. Արեւմտեան ծովեզր կամ Կուինէա, 4. Կղզիք:

### Ա. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՖՐԻԿԷ

### 1. ԵԳԻՊՏՈՍ

Հ. Եգիպտոսի տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է, գլխաւոր քաղաքները որո՞նք են:

Պ. Եգիպտոսի տարածութիւնն է 9,000 քռ. մղոն. բնակիչը 4 ½ միլիոն, գլխաւոր քաղաքներն են՝



1. Աղեքսանդրիա (239,000), եւրոպական ոճով շինուած, երեւելի նաւահանգիստ է:

2. Բօրթ Սայիտ (10,000), Սուէզ (15,000), Տամիէթ (60,000):

3. Գահիրէ (313,000). կոստանդնուպօլսէն ետքը Թուրքիոյ մեծագոյն քաղաքն է. ունի 400 մզկիթ (ճամի), 30 եկեղեցի, 1300 վաճառատեղի: Երկաթուղով կապուած է Աղեքսանդրիոյ և Սուէզի հետ, առուտուրը ծաղկած: Գահիրէի մօտ են հին Եգիպտոսի Մեմփիս քաղքին աւերակները, և Բիրամիտ կոչուած բրգունք:

Հ. Եգիպտոս ի՞նչ տեսակ կառավարութիւն ունի:

Պ. Եգիպտոս աղատ կառավարութիւն է արդի Եւրոպական սկզբանց համեմատ: Իշխանը որ առաջ փոխարքայ կը կոչուէր, և հիմա խէտիւ կ'անուանուի՝ Եգիպտոսի անուանի կուսակալին Մէհմէտ Ալիի ցեղէն է, թէպէտև հարկատու Բարձրագոյն դրան: Այժմու խտիւն է 1863 էն 'ի վեր Իսմայիլ փաշա. առաջին պաշտօնեան է Նուպար փաշա Հայազգի: Եգիպտոս, 'ի բնէ արգասաւոր, Մէհմէտալեան ցեղին անցնելէն 'ի վեր շատ ծաղկած է մշակութեամբ, վաճառականութեամբ և հարստութեամբ:

### 2. ՆՈՒԲԻԱ

Հ. Նուբիոյ տարածութիւնը, բնակիչը ո՞րչափ է, գլխաւոր քաղաքները որո՞նք են:

Պ. Նուբիոյ տարածութիւնն է 24,800 քառ. մղոն, բնակիչը 3 միլիոն, գլխաւոր քաղաքներն են

Պերպեր (8000), Խարթում (45,000) ։

Նուբիա հիմա Եգիպտոսի կը վերաբերի ։

## 3. ՀԱՊԷՇ կամ ԵԹՈՎՊԻԱ

Հ. Հապէշի տարածութիւնը, բնակիչը որչափ է, գլխաւոր քաղաքը որն է ։

Պ. Հապէշի տարածութիւնն է 7,000 քռ. մղոն, բնակիչը 3 միլիոն, գլխաւոր քաղաքն է Կոնտար (40,000) ։ Անգղիացիք 1868ին այս երկրին քրիստոնեայ թագաւորին Թէոդորոսի վրայ յարձակեցան քանի մը Անգղիացի բանտարկեալներ ազատելու համար ։

Հիմա Հապէշ քանի մը ինքնագլուխ իշխանութիւններու բաժնուած է ։

## 4. ՊԷՐՊԷՐԻՍՏԱՆ

### ԴԱՍ ԽՁ.

Հ. Պէրպէրիստան Ափրիկէի որ կողմն է և քանի՞ տէրութիւն կը պարունակէ ։

Պ. Պէրպէրիստան կը կոչուի Ափրիկէի հիւսիսային եզերքը՝ Եգիպտոսի արեւմտեան սահմանէն մինչեւ Ատլանդեան Ովկիանոս, և կը պարունակէ չորս տէրութիւն Ա. Թրիփոլի կամ Թարապլուս, Բ. Թունուզ, Գ. Ալճերի և Դ. Մարոքքօ ։

### Ա. ԹՐԻԲՈԼԻ

Հ. Թրիբոլիի տարածութիւնը և բնակիչը որչափ է, գլխաւոր քաղաքները որո՞նք են ։

Պ. Թրիբոլիի տարածութիւնն է 16,200 քառ. մղոն, բնակիչը 750,000, գլխաւոր քաղաքներն են

Թարապլուս (30,000), Մուրզուք (11,000), Պէնղազի ։ Թրիբոլի առանձին փաշայութիւն է, ժողովուրդը Մահմետական ։



### Բ. ԹՈՒՆՈՒԶ

Հ. Թունուզի տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է, գլխաւոր քաղաքները որո՞նք են ։

Պ. Թունուզի տարածութիւնն է 2150 քառ. մղոն, բնակիչը 1 ½ միլիոն. գլխաւոր քաղաքն է Թունուզ (115,000), Քապէս (25,000) ։

Թունուզ Օսմանեան տէրութեան հպատակ է, իշխանը Մուհամմէտ Սատըգ փաշա 1839 էն 'ի վեր ։

### Գ. ԱԼՃԷՐԻ

Հ. Ալճէրիի տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է, գլխաւոր քաղաքները որո՞նք են ։

Պ. Ալճէրիի տարածութիւնն է 12,150 քառ. մղոն, բնակիչը 3 միլիոն, գլխաւոր քաղաքներն են

Ալճերի (53,000). Քոնսթանթին (35,000), Պոնա, Օրան (34,000) ։

Ալճէրի 1830 էն 'ի վեր Գաղիոյ կը վերաբերի ։

### Դ. ՄԱՐՈՔՔՕՅ

Հ. Մարոքքոյի տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է, գլխաւոր քաղաքները որո՞նք են ։

Պ. Մարոքքոյի տարածութիւնն է 12,000 քռ. մղոն, բնակիչը 2,750,000, գլխաւոր քաղաքներն են՝

Ֆէս (100,000), Մարոքքօ (50,000), Թանճէր, Մոկատօր (120,000) ։

Մարոքքոյի իշխանն է Սուլթան Սիտի Մուհամմէտ 1859 էն 'ի վեր, ժողովուրդը մահմետական։

## 5. ՍԱՀԱՐԱ (անապատ)

Հ. Սահարա Ափրիկէի ո՞ր կողմն է, տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է, գլխաւոր քաղաքները որո՞նք են։

Պ. Սահարա Պէրպէրիստանի հարաւային կողմն է, տարածութիւնը 120,000 քռ. մղոն, բնակիչը 5 միլիոն, գլխաւոր քաղաքն է. Թէպու։ Ժողովուրդը վայրենի է։

## 6. ՍԵՆԵԿԱՄՊԻԱ

Հ. Սենեկամպիոյ տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է, գլխաւոր քաղաքները որո՞նք են։

Պ. Սենեկամպիա Ափրիկէի արեւմտեան եզերքն է, տարածութիւնը յայտնի չէ, բնակիչը 12 միլիոն, գլխաւոր քաղաքն է Դէմպօ։

Աս երկրին ժողովուրդը վայրենի է. քանի մը տեղերը Եւրոպացւոյ կը վերաբերին։

## 7. ՍՈՒՏԱՆ

Հ. Սուտան ո՞ւր է, բնակիչը ո՞րչափ է, գըլխաւոր քաղաքները որո՞նք են։

Պ. Սուտան որ Նիկրիտիա (Սեւաստան) ալ կ'ըսուի՝ Սահարայի արեւելեան հարաւային կողմն է, բնակիչը 20 միլիոն, գլխաւոր քաղաքներն են Սէկու (30,000), Թիմպուքթու (13,000), Սոկոտօ (20,000), Քանօ (36,000), Պոռնու, Տար-Ֆուր։

Ասոնք այլեւայլ ինքնագլուխ ցեղերու քաղաքներ են, ժողովուրդը սեւամորթ վայրենի։



# Բ. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

## 1. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԾՈՎԵԶՐ

### ԴԱՍ ԽԷ.

Հ. Արեւելեան ծովեզր ըսելով Ափրիկէի ո՞ր մասը կը հասկցուի։

Պ. Արեւելեան ծովեզր ըսելով կը հասկցուի Ափրիկէի այն մասը որ Ատէնի ծովածոցէն կամ Հապէշի սահմանէն սկսելով կը հասնի մինչեւ գլուխ Բարեյուսոյ։ Այս երկրին հարաւային կողմը Բորթուկէզները և Անգղիացիք գաղթականութիւններ ունին. հիւսիսային կողմն անծանօթ է։

Հ. Ափրիկէի այս մասն ի՞նչ երկիրներ կը պարունակէ

Ա. Ափրիկէ այս մասը կը պարունակէ

1. Սոմալի որ գրեթէ հասարակածին տակն է, և իբրեւ «համեմաբեր» երկիր հին ատենը երեւելի էր։ Ժողովուրդը մահմետական է, աղէկ առուտուր ունի Արաբիոյ և Հնդկաստանի հետ։ Այս երկիրն առաջ Այան և Աժէն կը կոչուէր։

2. Սուահէլի, Սոմալի հարաւային կողմը, շատ լիճեր ունի, ժողովուրդը մահմետական։ 1858 էն ի վեր անկախ եղաւ։

3. Զանզիպար, որուն իշխանը Սուլթան կը կոչուի, մայրաքաղաքն է Զանզիպար (60.000) կղզւոյ մը վրայ։ Այս երկիրն առաջ Զանկէպար կը կոչուէր։

3. Մոզամպիք, Սեւահիլիի հարաւային կողմը, Մատակասքարի դիմացը, Բորդուկալի կը վերաբերի. գլխաւոր քաղաքն է Մոզամպիք ուր կը նստի Բորդուկալի կուսակալը։

4. Սոֆալա, Մոզամպիքի հարաւային կողմը, նոյնպէս Բորդուկալի կը վերաբերի, գլխաւոր քաղաքն է Սոֆալա: Այս երկիրն առաջ Մոնոմոթաբա կ'ըսուէր:

5. Քաֆրարիա, Սոֆալայի հարաւային կողմը: Բնակիչն է Քաֆր կոչուած ժողովուրդը որ կաւապաշտ է, բայց Աֆրիկեցի Սեւ ցեղէն չէ: Այս ծովեզրին վրայ է Անգղիացւոց Նաթալ կոչուած գաղթականութիւնը:

## 2. ՔԱԲ կամ ԲԱՐԵՅՈՒՍՈՅ երկիրը

Հ. Բարեյուսոյ երկիրը ո՞ր Տէրութեան կը վերաբերի, տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է, գլխաւոր քաղաքը ո՞րն է:

Ա. Բարեյուսոյ երկիրը 1601 ին Հոլանտացիներէն հիմնուած գաղթականութիւն է որ 1806 ին Անգղիացւոց անցաւ: Տարածութիւնն է 9,230 քառ. մղոն, բնակիչը 570,000, գլխաւոր քաղաքն է Քաբ 28,000, Հնդկաստան գացող նաւերուն համար կարեւոր: Հոս կը նստի Անգղիացի կուսակալը:

Բարեյուսոյ երկրին բնակիչներուն մէկ մասը Հոլանտացի է, մեծ մասը Հոթենթոթ կոչուած Աֆրիկեցի ցեղէն: Բարեյուսոյ երկրին հիւսիսային կողմն են բուն Հոթենթոթները որ Աֆրիկեցի շատ վայրենի ժողովուրդ են և այլ և այլ ցեղերու կը բաժնուին որոնք միշտ իրարու հետ պատերազմի մէջ են: Ասոնց մէջ քրիստոնէութիւն և կրթութիւն տարածելու համար շատ կ'աշխատին անգղիացի և ամերիկացի Միսիոնարք:



# 3. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԾՈՎԵԶՐ

## ԴԱՍ ԽԸ.

Հ. Արեւմտեան ծովեզր ըսելով Աֆրիկէի ո՞ր մասը կը հասկցուի, ի՞նչ երկիրներ կը պարունակէ, գլխաւոր քաղաքները որո՞նք են:

Պ. Արեւմտեան ծովեզր ըսելով կը հասկցուի Աֆրիկէի այն մասը որ Բարեյուսոյ արեւմտեան սահմանէն սկսելով կը հասնի մինչեւ Սենեկամպիա: Այս ծովեզրը կը կոչուի Կոնկօ, ժողովուրդը սեւամորթ աֆրիկեցի է, շատ վայրենի և քանի մը ինքնիշխան տէրութիւններու կը բաժնուի, որոնց գլխաւորներն են Լուանկօ, Քոնկօ, Անկոլա և Պէնկուէլա: Այս վերջի երկուքին վրայ Բորդուկէզները մեծ ազդեցութիւն ունին:

Հ. Այս ծովեզրին վրայ յիշուելու արժանի ուրիշ ի՞նչ տէրութիւն կայ:

Ա. Այս ծովեզրին վրայ յիշուելու արժանի են՝

1. Անգղիոյ գաղթականութիւնը Սիէրրա Լէոնէ որուն բնակիչներն են գերութենէ ազատուած քրիստոնեայ սեւեր: Գլխաւոր քաղաքն է Ֆրէթաուն (10,000): Հոս կը նստի Անգղիոյ կուսակալը:

2. Լիպէրիա, ազատ հանրապետութիւն զոր ամերիկացիք հիմնեցին 1822 ին, և ազատուած սեւ քրիստոնեայ գերիներ ղրկեցին հոն՝ Աֆրիկէի մէջ եւրոպական կրթութիւն տարածելու համար: Բնակիչն է 20 հազար կրթեալ և 700 հազար բնիկ սեւ աֆրիկեցի: Գլխաւոր քաղաքն է Մոնրովիա:

Աշանթի, բնիկ աֆրիկեցի տէրութիւն մը, մայ-

ըաքաղաքը Քումասի (70,000)։ Այս մասին մէջ ալ անգղիացիք և Հոլանտացիք գաղթականութիւններ ունին։

## 4. ԿՂԶԻՔ

Հ. Ափրիկէի կղզիներն որո՞նք են։

Պ. Ափրիկէի կղզիներն են Հնդկաց ծովուն մէջ՝

1. Սոգոդրա, ուստի կ'ելլէ հալուէ, Արաբացւոց ձեռքը։

2. Մադագասգար, 11,000 քռ. մղոն, 5 միլիոն բնակչով շատ պտղաբեր։ Առանձին թագաւորութիւն է, ժողովուրդը կէս քաղաքակիրթ, գլխաւոր քաղաքներն են՝ Տանանարիվօ և Տամադավ։

3. Գոմորեան կղզիք 18 հատ։

4. Մասգարենեան կղզիք որոնց գլխաւորներն են՝ Մաւրիտիոս (առաջ Գաղիոյ կղզի կ'ըսուէր) 327 հազար բնակչօք, Անգղիացւոց ձեռքը. Ռէունեան կղզին (առաջ Պուրպոն կը կոչուէր) 210,000 բընակչօք, Գաղիացւոց ձեռքը։

Ատլանտեան Ովկիանոսի մէջ՝

1. Սուրբ Հեղինէ և Համբարձում՝ Անգղիացւոց ձեռքը։

2. Կուինէայի կղզիները՝ Սպանիացւոց և Բորդոկիզաց ձեռքը։

3. Կանանչ գլխոյ կղզիք 67,000 բնակչօք, Բորդուկէզներուն ձեռքը։

4. Գանարեան կղզիք ուր մշտնջենաւոր գարուն է, 250,000 բնակչօք, Սպանիացւոց ձեռքը. գլխաւորներն են՝ Կանարի կղզին և Դէնէրիֆֆա։

5. Մատէրա կղզիք, 112,000 բնակչօք, Բորթուկէզներուն ձեռքը։ Այս կղզիներէն կ'ելլէր Մատերա կոչուած ազնիւ գինին, բայց 1852 էն այգիներուն հիւանդութիւն ելնալով ջնջուեցան։



6. Ազորեան կղզիք, 250,000 բնակչօք, Բորդուկիզաց ձեռքը։

Հ. Ափրիկէի ծովերը, ծոցերը և կղզիները որո՞նք են։

Պ. Ափրիկէի ծովերն են՝ Միջերկրականը, Ատլանտեան Ովկիանոսը, Մեծ Ովկիանոսը և Հնդկաց ծովը։

Ծովածոցերն են՝ Կուինէայի ծոցը՝ Ատլանտեան Ովկիանոսի մէջ, Արաբիոյ ծոցը կամ Կարմիր ծովը՝ Հնդկաց ծովուն մէջ, Սիրթ և Գապէս՝ Միջերկրականին մէջ։

Հրուանդաններն են՝ Գլուխ Պոն և Սէութա՝ Պէրպէրիստանի եզերքը, Գլուխ Սպարտէլ՝ Սահարայի եզերքը, Կանանչ գլուխ՝ Սենեկամպիոյ եզերքը, Բալմա և Լոբէզ՝ Կուինէայի եզերքը, Գլուխ Բարէյուսոյ, Տէլկատոյ՝ Մոզամպիքի հիւսիսային եզերքը, Կուարտաֆուի՝ Սոմալի եզերքը, Նադալ՝ Մադակասքարի հիւսիսային եզերքը։

Հ. Ափրիկէի լեռները, լիճերը և գետերը որո՞նք են։

Պ. Ափրիկէի լեռներն են՝

Ատլաս՝ Պէրպէրիստանի մէջ. Քոնկ՝ Կուինէայի մէջ. Լուսնոյ լեռները՝ Հապէշի մէջ. Լուբադա գօտին՝ Ափրիկէի հարաւային կողմը, և Մադագասգարի գօտին։

Լիճերն են, Ջադ՝ Սուտանի մէջ, Տեմպէա՝ Հապէշի մէջ, Նեանզա՝ հասարակածին տակ։

Գետերն են՝ Նեղոս որ կը թափի Միջերկրականը, Սենեկալ, Կամպիա, Նիկէր, Զայիրէ, Օրանժ որ

կը թափին Ատլանտեան Ովկիանոսը, Զամպէզ Հընդկաց ծովը։

# ԱՄԵՐԻԿԱ

## ԴԱՍ ԽԹ.

Հ. Ամերիկայի տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է, երկիրը քանի՞ կը բաժնուի։

Պ. Ամերիկայի տարածութիւնն է 747,000 քառ. մղոն, բնակիչը 84 միլիոն, կը բաժնուի Ա. Հիւսիսային, Բ. Միջին և Գ. Հարաւային Ամերիկա։

## Ա. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Հ. Հիւսիսային Ամերիկա քանի՞ տէրութիւն կը պարունակէ.

Պ. Հիւսիսային Ամերիկա կը պարունակէ 4 տէրութիւն, 1. Դանիական Հիւսիսային Ամերիկա կամ Կրէօնլանտ, 2. Բրիտանական Հիւսիսային Ամերիկա, 3. Հիւսիսային Միացեալ Նահանգները և 4. Մեքսիքա։

Հ. Կրէօնլանտի տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է։

Պ. Կրէօնլանտի տարածութիւնն է 39,000 քառ. մղոն, բնակիչն է Էսքիմօ կոչուած վայրենի ցեղը։ Հոս Դանիացիք քանի մը գաղթականութիւն ունին։ Միսիոնարաց ջանքով էսքիմոներուն մեծ մասը Քրիստոնեայ եղած է։

Հ. Բրիտանական Ամերիկայի տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է, ծաղկեալ մասը և գլխաւոր քաղաքները որո՞նք են.

Պ. Բրիտանական Ամերիկայի տարածութիւնն



է 166,000 քառ. մղոն, բնակիչը 4 ½ միլիոն։ Աս երկրին հիւսիսային և արեւմտեան մասը վայրենի է, ծաղկեալ մասն է արեւելեան կողմը, և կը պարունակէ Գանատա, Լապրատոր ցամաքակղզին, Նոր Պրունսվիք, Նոր Սկովտիա և Նիւ Ֆընտլանտ կղզին։

Գլխաւոր քաղաքներն են Քեպէք (60,000) և Մոնրէալ (110,000) Գանատայի մէջ, Հալիֆաքս (40,000) Նոր Սկովտիոյ մէջ։

## ԴԱՍ Ծ.

Հ. Ամերիկայի Միացեալ Նահանգաց վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ։

Պ. Ամերիկայի Միացեալ Նահանգները 1600 էն ետքը սկսան շէննալ անգղիական գաղթականութիւններով, և Անգղիոյ իշխանութեան ներքեւ էին։ Անցեալ դարուն վերջերը ապստամբեցան, և 1773 էն մինչեւ 1763 շարունակ պատերազմելէն ետքը Անգղիացւոց դէմ, անկախ հանրապետութիւն եղան։ Հիմա այս Տէրութիւնը կը բաղկանայ 37 նահանգներէ որոնց ամեն մէկն իր առանձին կառավարութիւնն ունի, բայց ամենը մէկէն միացեալ են մէկ ընդհանուր կառավարութեան մը ներքեւ։ Օրէնսդիր իշխանութիւնը Քոնկրէս կոչուած ազգային ժողովին ձեռքն է որ կը բաղկանայ Ծերակոյտէն և Նահանգաց կողմէն ղրկուած Պատգամաւորաց կամ երեսփոխանաց ժողովէն։ Գործադիր իշխանութիւնը Նախագահին ձեռքն է որ չորս տարին անգամ մը կը փոխուի։ Գերի գործածող հարա-

ւային նահանգները գերի չունեցող հիւսիսայիններէն 1861 ին ապստամբելով յաղթուեցան, և գերութիւնը ջնջուեցաւ (1865 ին)։

Զօրքը խաղաղութեան ժամանակ 44,785 է, նաւատորմիղը կը բաղկանայ 46 նաւէ 426 թնդանօթով, առեւտրական նաւերն են 1861։

Հ. Միացեալ Նահանգաց տարածութիւնը և բնակիչը որչափ է, գլխաւոր նահանգներն ու անոնց քաղաքները որո՞նք են։

Պ. Միացեալ Նահանգաց տարածութիւնն է 168,385 քառ. մղոն, բնակիչը 32,100,000, գլխաւոր նահանգներն ու անոնց քաղաքներն են՝ Հիւսիսային կողմը,

1. Մասաչուսէթս նահանգ, գլխաւոր քաղաքը Պոստըն (192,000)։

2. Քոննէքթիքութ նահ., գլխ. քաղաքը Նիւ-հէվն։

3. Նիւ-Եորք նահանգ՝ 4 միլիոն բնակչով, գլխաւոր քաղաքը Ալպէննի (63,000), Նիւ-Եորք (1,000,000) Հուտսոնի բերանը, Ամերիկայի ամենէն մեծ վաճառաշահ քաղաքն է. Պըֆֆէլօ (95,000)։

Միջին կողմը,

4. Պէնսիլվանիա նահանգ՝ 2½ միլիոն բնակչօք, գլխաւոր քաղաքը Ֆիլատելֆիա, Տելըվէրի վրայ, (940,000), Ամերիկայի ամենէն աւելի գործարաններ ունեցող քաղաքն է. հոս է ազգային Դրամատեղանը (պանքա)։ Այս նահանգին մէջ կ'ելլէ կաղ կոչուած Բէգրոլ եղը որ կանթեղներու կը գործածուի։

5. Մէրիլէնտ նահանգ, բնակչաց հինգին մէկը Սեւ է, գլխ. քաղաքն է Պալթիմօր (352,000), ունի համալսարան։ Հռոմէականաց Եպիսկոպոսն հոս



կը նստի. Ուօշինկթըն (150,000) հոս կը ժողվուի Գոնկրէս կոչուած ազգային ժողովը, հոս է նաեւ նախագահին պալատը և նաւարանը։

Հարաւային կողմը.

6. Ֆլորիտա նահանգ, գլխ. քաղաքը Թալլահասի։

Այս նահանգը նեղ ցամաքակղզի է բուսոտ (մէրճան), որ 200 հազար տարուան մէջ հազիւ գոյացած է, ինչպէս կ'ըսեն երկրաբանք։

Ծովածոցի նահանգներ.

7. Ալապամա նահանգ, գլխ. քաղաքը Մոնդկոմէրի (36,000)։

8. Լուիզիանա նահանգ գլխ. քաղաքը Նիւ Օրլէնս (170,000), աշխարհիս վրայ բամբակի ամենէն մեծ վաճառանոցն է։

9. Թէքսաս Ամերիկայի ամենէն մեծ նահանգն է, բայց բնակիչը քիչ։

Կեդրոնական նահանգներ.

10. Իլլինոյզ նահանգ, գլխաւոր քաղաքն է Չիգակօ (268,000), 40 տարի առաջ վայրենիներու գեղ էր, հիմա աշխարհիս վրայ ցորենի ամենէն մեծ վաճառանոցն է։

11. Օհայօ նահանգ, գլխ. քաղաքը Սինսիննաթի. հոս տարին կէս միլիոն խոզ կը մորթուի, ուստի և Խոզաքաղաք կը կոչուի։

12. Միսուրի նահանգ, գլխ. քաղաքը Սէն Լուի (230,000), վաճառաշահ քաղաք Միսիսիբբիի եզերքը. 1804 ին 925 բնակիչ միայն ունէր որոնք առուտուրի մէջ դրամի տեղ կաշւոյ կտորուանք կը գործածէին։

Մեծ կամ խաղաղական Ովկիանոսի եզերքը՝

13. Գալիֆորնիա նահանգ. ոսկւոյ հանքեր ու-

նի, ուստի 1864 ին 84 միլիոն թալերի ոսկի հանուեցաւ: Շոգենաւք ասկէ ուղղակի Ճափոն և Չին կ'երթան: Գլխաւոր քաղաքն է Սան Ֆրանսիսքօ:

Երկիրներ որ դեռ նահանգ չեն: Միացեալ Նահանգաց մէջ գաւառ մը 600,000 բնակիչ ունենալու է որ նահանգ համարուի:

1· Ուաշինկթըն:

2· Ալասքա կամ Ռուսական Ամերիկա, աս երկիրը 1867 ին ծախեց Ռուսիա Ամերիկայի: Ամերիկայի այս մասին կը վերաբերին Ալեւդեան կղզիք 50 հազար բնակչօք:

## Ա· ՄԷՔՍԻՔԱ

### ԴԱՍ ԾԱ·

Հ· Մեքսիքայի վրայ ի՞նչ պատմական գիտելիք կայ:

Պ· Սպանիացիք ԺԶ· դարուն սկիզբը տիրելով Մեքսիքայի՝ գաղթականութիւն մը հաստատեցին, որ 1810 ին ապստամբելով հանրապետութիւն եղաւ, և այնուհետեւ խռովութիւնները պակաս չեղան: Այս խռովութիւններուն վերջ տալու համար Գաղիոյ օգնութեամբ Աւստրիոյ այժմու կայսեր եղբայրը Մաքսիմիլիան 1864 ին գնաց հոն իբրեւ սահմանադրական կայսր, բայց հանրապետականաց նախագահին Ժուարէզի ձեռքը իյնալով սպաննուեցաւ 1867 ին, և Մեքսիքա հիմա դարձեալ հանրապետութիւն է:

Հ· Մեքսիքայի տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ են, գլխաւոր քաղաքները որո՞նք են:



Պ· Մեքսիքայի տարածութիւնն է 35,825 քռ· մղոն, բնակիչը 8,744,000, գլխաւոր քաղաքներն են՝ Մէքսիքօ (200,000), շատ գեղեցիկ քաղաք է, ունի համալսարան· Վէրա Քրուզ (10,000), Բուէպլա (75,000), Քուէրէթարօ (48,000) հոս սպաննուեցաւ Մաքսիմիլիան:

## Բ· ՄԻՋԻՆ ԱՄԵՐԻԿԱ

### 1· ՑԱՄԱՔԱՅԻՆ ՄԱՍԸ

Հ· Միջին Ամերիկա քանի՞ մասէ կը բաղկանայ:

Պ· Միջին Ամերիկա կը բաղկանայ 1· Ցամաքային մասէ և 2· Արեւմտեան Հնդկաստանի Արշիպեղագոսէն:

Հ· Միջին Ամերիկայի տարածութիւնը և բնակիչները ո՞րչափ են, ի՞նչ տէրութիւններ կը պարունակէ, և անոնց գլխաւոր քաղաքները որո՞նք են:

Պ· Միջին Ամերիկայի տարածութիւնն է 8225 քռ· մղոն, բնակիչը 2,665,000, և կը բաղկանայ հինգ փոքր հանրապետութիւններէ և Անգղիացւոց երկիրներէն:

Հինգ հանրապետութիւններն են

Ա· Կուաթեմալա, գլխաւոր քաղաքը Կուաթեմալա (40,000):

Բ· Սան Սալվադոր, գլխ· քաղաքը Սան Սալվադոր (20,000):

Գ· Հոնդուրաս, գլխ· քաղաքը Քօմայակուա (8,000):

Դ· Նիքարակուա, գլխ· քաղաքը Լէօն (25,000):

Ե· Քօսթա Րիքա, գլխ· քաղաքը Սան Ժօզէ (25 հազար): Անգղիացւոց երկիրներն են Մօսքիթօ և Հոնդուրասի գաղթականութիւնը:

## 2. ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՐՇԻՊԵՂԱԳՈՍԸ

Հ. Արեւմտեան Հնդկաստանի արշիպեղագոսն ի՞նչ կղզիներէ կը բաղկանայ ։

Պ. Արեւմտեան Հնդկաստանի արշիպեղագոսը կը բաղկանայ երեք կղզեխումբէ որ են Ա. Պահամա կղզիները, Բ. Մեծ և Գ. Փոքր Անթիլեան կղզիները ։ Այս խումբերուն մէջ գլխաւոր կղզիներն են, Մեծ Անթիլեաններէն՝

1. Գուպա կղզին, գլխաւոր քաղաքը Հավանա ½ միլիոն բնակչով ։ Այս քաղքին մայր եկեղեցւոյն մէջն է Կոլոմպոսի շիրիմը ։

2. Ճամայքա ½ միլիոն բնակչով, Անգղիոյ կը վերաբերի, գլխաւոր քաղաքն է Քինկսթըն (13,000)։

3. Սեւերու հասարակապետութիւնը Հայիթի, 708,000 բնակչօք, գլխաւոր քաղաքը Սան Տոմինկոյ (10,000) ։

4. Բորթօ Րիքքօ 600,000 բնակչօք, գլխաւոր քաղաքը Սան Ժուան (18,000) ։

Փոքր Անթիլեանց մէջ անուանի է Մարթինիքա կղզին որ Գաղղիացւոց կը վերաբերի ։

---

## 4. ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

### ԴԱՍ ԾԲ.

Հ. Հարաւային Ամերիկա ի՞նչ երկիրներ կը պարունակէ ։

Պ. Հարաւային Ամերիկա կը պարունակէ 10 տէրութիւն.



1. Քոլոմպեան հասարակապետութիւնները, 2. Բերու, 3. Պոլիւիա, 4. Չիլի, 5. Բարակուա, 6. Ուրուկուա, 7. Լա Բլադա, 8. Պրազիլիա, 9. Կուայանա, 10. Ադաք հարաւային Ամերիկա ։

1. Քոլոմպեան հանրապետութիւններն են՝ ա. Նոր Կրանատա, բ. Վէնէզուէլա, գ. Էքուատոր ։

ա. Նոր Կրանատայի տարածութիւնն է 24,178 քռ. մղոն, բնակիչը 2,800,000, գլխաւոր քաղաքներն են՝ Պոկոտա (40,000), ունի համալսարան. Բանամա (9,000) ։

բ. Վէնէզուէլայի տարածութիւնն է 17,320 քռ. մղոն, բնակիչն է 1,600,000, գլխաւոր քաղաքն է Քարաքաս (50,000)· Մարաքայպօյ՝ համանուն լճին քով, ունի համալսարան ։

գ. Էքուադորի տարածութիւնն է 10,300 քռ. մղոն, բնակիչն է 1,100,000, գլխաւոր քաղաքն է Քիդօյ (76,000), ունի համալսարան ։

2. Բէրու հանրապետութիւն է, տարածութիւնը 24,000 քռ. մղոն, բնակիչը 2,500,000, գլխաւոր քաղաքներն են Լիմա (121,000), Արէքիբա (40,000) ։

3. Պոլիւիա հանրապետութիւն է, տարածութիւնն է 30 000 քռ. մղոն, բնակիչը 2 միլիոն, գլխաւոր քաղաքներն են Լա Բազ (76,000), Բոդոզի (23,000) ։

4. Չիլի հանրապետութիւն է, տարածութիւնն է 6,237 քռ. մղոն, բնակիչը 2,100,000. գլխաւոր քաղաքներն են՝ Սանդիակօյ (115,000); ունի համալսարան, Վալբարայզօ (70,000) ։

5. Բարակուա հանրապետութիւն է, տարածութիւնն է 16,500 քռ. մղոն, բնակիչը 1,400,000

գլխաւոր քաղաքն է Ասունսիօն (Համբարձում) ։ Բարակուա այս վերջին տարիներուն մէջ Պրազիլիոյ հետ պատերազմի բռնուեցաւ․ հանրապետութեան նախագահը Լոբէզ 1870 ին մեռաւ կռուի մէջ, և հիմա երկիրն անիշխան և աւերեալ վիճակի մէջ է ։

6․ Ուրուկուա հանրապետութիւն է, տարածութիւնն է 3375 քռ․ մղոն, բնակիչը 400,000, գլխաւոր քաղաքն է Մոնթէվիտէօ (120,000) ։

7․ Լա Բլադա, Արժանթին հանրապետութիւն ալ կ'ըսուի, տարածութիւնն է 28,375 քռ․ մղոն, բնակիչը 1,737,000, գլխաւոր քաղաքն է Բուէնոս Այրէս (180,000) ։

8․ Պրազիլիա ծերակուտէ և երեսփոխանական ժողովէ բաղկացեալ սահմանադրական կայսրութիւն է, տարածութիւնն է 152,000 քռ․ մղոն, բնակիչը 11,780,000, գլխաւոր քաղաքներն են՝ Րիօ տէ Ժանէյրօ (600,000), Պահիա (160,000), Բէրնամպուքօ (90,000) ։

Պրազիլիա Հարաւային Ամերիկայի ամենէն մեծ և բարեկարգ տէրութիւնն է, երկիրը վերջին աստիճան բարեբեր, ունի սուրճ, շաքար, բամբակ, ծխախոտ, քաքաօ, որիզ, ոսկի, ընտակի (բլադին) և ադամանդ ։

9․ Կույանայի ներքին կողմերը վայրենի Ամերիկացւոց ձեռքն է, ծովեզերքը միայն կը վերաբերի երեք եւրոպական տէրութեանց, Անգղիոյ, Հօլանտայի և Գաղիոյ ։ Բոլոր Կույանայի տարածութիւնն է 9,300 քռ․ մղոն, բնակիչը ½ միլիոն ։

Գլխաւոր քաղաքներն են, Անգղիոյ մասին մէջ՝



Ճօրճթաուն (155,000)․
Հօլանտայի մասին մէջ՝
Բարամարիպօ (16,000) ։
Գաղիոյ մասին մէջ՝
Քայէն (3,000) ։

Հարաւային Ամերիկայի յիշեալ տէրութիւններուն բոլորն ալ առաջ Սպանիոյ և Բորդուգալի կը վերաբերէին, այս դարուն սկիզբը հետզհետէ ապստամբելով անկախ տէրութիւններ եղան, բնակիչները հումէադաւան են, և լուսաւորութեան մասին շատ ետ մնացած են ։

10․ Ազատ Հարաւային Ամերիկա կը բաղկանայ 1․ Պատակոնիայէ և 2․ Հրոյ Երկրէն ։

1․ Բադակոնիա Ամերիկայի ցամաքին հարաւային ծայրը շատ ցուրտ երկիր է․ բնակիչները երկայնահասակ, ձաղկահեր և շատ տգեղ վայրենի մարդիկ են, և Պատակօն կը կոչուին ։

2․ Հրոյ երկիրը Բադակոնիոյ հարաւային կողմը կղզիներու խումբ է, բնակիչը վայրենի և աղքատ ։ Այս կղզիներուն մօտ են Ֆալքլանտ կոչուած անբնակ կղզիները, ուր Անգղիացիք 700 հոգիէ բաղկացեալ գաղթականութիւն մը ունին ։

## ԴԱՍ ԾԳ․

Հ․ Ամերիկայի գլխաւոր ծովերը, ծոցերը և նեղուցները որո՞նք են ։

Պ․ Ամերիկայի գլխաւոր ծովերն են, Հիւսիսային կողմը՝ Սառուցեալ Ովկիանոս և Պաֆֆինէ ծովը ։ Արեւելեան կողմը՝ Ատլանտեան Ովկիանոս և Ան-

Չիլեան կամ Քորոնելեան ծովը. Արեւմտեան կողմը՝ Խաղաղական Ովկիանոս և Պեհրինկեայ ծովը:

Գլխաւոր ծոցերն են Արեւելեան եզերքը՝ Հուտսընի, Ս. Լաւրենտիոսի, Չեզափիքի Մեքսիքայի, ծոցերը և Հոնտուրաս ծոցը. Արեւմտեան եզերքը՝ Գալիֆորնիոյ ծովածոցը:

Գլխաւոր նեղուցներն են՝ Պեհրինկեայ նեղուցը Ասիոյ և Ամերիկայի մէջտեղ. Լենքսթըր, Տեւիս, Գըմպըրլէնտ, Հուտսըն և Պելիլ նեղուցները՝ Բրիտանական Ամերիկայի մէջ. Պահամայի ջրանցքը՝ Միացեալ Նահանգաց մէջ. Մակելլանի նեղուցը Բադակոնիոյ հարաւային կողմը:

Հ. Ամերիկայի կղզիները, Թերակղզիները և հրուանդանները որո՞նք են:

Պ. Ամերիկայի կղզիներն են Պաֆֆինի ծոցին կղզիները, Ս. Լաւրենտիոսի ծոցին կղզիները, Լոնկայլընտ, Պերմուտեան, Լուգայեան, և Մեծ ու Փոքր Անթիլեան կղզիք՝ Ատլանտեան Ովկիանոսի մէջ. Նոր Գեորգիա, Մալուինեան, Մակելլանեան, Աստուածամօր կղզիք, Չիլոէ, Խուան Ֆերնանտէզ, Կալլաբակոս՝ Խաղաղականին մէջ, և Պեհրինկեայ ծովուն կղզիները:

Թերակղզիներն են՝ Լապրատոր և Նոր Սկովտիա, Ֆլորիտա, Տելավէր, Գալիֆորնիա, Եուգադան և Ալասգա:

Գլխաւոր հրուանդաններն են

Ֆէրուէլ՝ Կրէօնլանտի հարաւային կողմը.

Ռաուտէնհոմ, Չէրլս Լապրատորի եզերքը.

Սէյպլ՝ Նոր Սկովտիոյ եզերքը.

Դանգօ՝ Ֆլորիտային հարաւային կողմը.

Գադոշ՝ Եուքադանի եզերքը.

Ս. Ռոքոս՝ Պրազիլիոյ եզերքը.

Ֆրովըրտ՝ Ամերիկայի հարաւային ծայրը.



Հօրն՝ Մակելլանու արշիպեղագոսին հարաւային կողմը.

Պլանքօ՝ Բերուի եզերքը.

Ս. Ղուկաս՝ Գալիֆոռնիոյ եզերքը, և Արեւմըտեան գլուխ՝ Ամերիկային հիւսիսային արեւմտեան ծայրը:

Հ. Ամերիկայի լեռներն ու հրաբուխները որո՞նք են.

Պ. Ամերիկայի լեռներն են՝ Ալլէկանի գօտին՝ Միացեալ Նահանգաց արեւելեան կողմը, Ապառաժուտ լերանց գօտին, Գորտիլեան լերանց գօտին որոյ ամենէն բարձր լեռը Չիմպորասսօ կը կոչուի, և Պրազիլեան լերինք:

Հրաբուխներն են՝ Ս. Եղիա, հիւսիսային կողմը. Բոբոքադեբեդլ՝ Մեքսիքայի մէջ, Քոդոբաքսի և Բիչինքա՝ Քոլումպիոյ մէջ, Արեքիբա՝ Բերուի մէջ:

Հ. Ամերիկայի գլխաւոր լիճերն ու գետերը որո՞նք են.

Պ. Ստրկաց լիճը և Ուինիփէկ՝ Բրիտանական Ամերիկայի մէջ. Վերին լիճ, Միչիկան, Հուրոն, Իրիէ, Օնթարիօ՝ Միացեալ Նահանգաց մէջ.

Նիքարակուա՝ միջին Ամերիկա.

Մարաքայպօ՝ Քոլումպիոյ մէջ. Դիդիքաքա՝ Բերուի մէջ, Բադոս՝ Պրազիլիոյ մէջ:

Գլխաւոր գետերն են՝

Մաքէնզի՝ կը թափի Սառուցեալ ծովը.

Նելսըն՝ Հուտսոնի ծոցը.

Ս. Լաւրենտիոս կամ Ս. Լօրէնց՝ Ատլանտեան Ովկիանոսը.

Միսիսիբի և Րէտ Նորթ՝ Հուդսոնի ծոցը.

Օրէնոքօ, Ամազոնաց գետը, Դոքանդին, Ս. Ֆրան-

Չինկու և Լա Բլաթա՝ Ատլանտեան Ովկիանոսը․

Մակտալէնա՝ Քարաիպեան ծովը․

Օրէկոն՝ Խաղաղական Ովկիանոսը․

Քոլորատօ՝ Քալիֆօռնիոյ ծոցը ։

Հ․ Ամերիկայի մէջ ի՞նչ երեւելի պարանոց կայ ։

Պ․ Ամերիկայի նշանաւոր պարանոցն է Բանամայի պարանոցը որ հիւսիսային Ամերիկա հարաւայնոյն հետ կը կապէ ։ Այս պարանոցը բանալու պատրաստութիւնները սկսած են ։ Բանամայի պարանոցը բացուելով Խաղաղական կամ Մեծ ովկիանոսը պիտի միանայ Ատլանտեանին հետ ։

# ՈՎԿԻԱՆԻԱ

## ԴԱՍ ԾԴ․

Հ․ Ովկիանիա երկրիս որ մասին կ՚ըսուի , և քանի կը բաժնուի ։

Պ․ Ովկիանիա կ՚ըսուի Խաղաղական Ովկիանոսի մէջ Արեւելեան Ասիոյ և Արեւմտեան Ամերիկայի մէջ տեղ գտնուած շատ մեծ և փոքր կղզիներուն ։ Ովկիանիա կը բաժնուի 1․ Աւստրալազիա և 2․ Բոլինեզիա ։

Հ․ Աւստրալազիա ո՞րն է ։

Պ․ Աւստրալազիա կը կոչուին 1․ Աւստրալիա կամ Նոր Հոլանտա ըսուած ցամաքը և 2․ Երէք մեծ կղզիները՝ Ա․ Նոր Կուինէա , Բ․ Նոր Զելանտա և Գ․ Վանտիմէնի կղզին կամ Դասմանիա ։

Հ․ Աւստրալազիոյ տարածութիւնը և բնակիչը ո՞րչափ է , ժողովուրդն ի՞նչ ցեղէ է , գլխաւոր քաղաքները որո՞նք են ։



Պ․ Աւստրալազիոյ տարածութիւնն է 144,000 քառ․ մղոն , բնակիչը 2 միլիոն , բնիկ ժողովուրդը վայրենի է , բայց Անգղիացիք շատ գաղթականութիւններ ունին , մանաւանդ Աւստրալիոյ հարաւային եզերքը․ գլխաւոր եւրոպական քաղաքներն են՝ Սիտնէյ (110,000) , հոս կը նստի կուսակալը․ Մելպուրն (170,000) , ունի համալսարան , Ատելայտ (40,000) ։ Հոպարթ (20,000) , Վանտիմէնի կղզւոյն մայրաքաղաքն է ։

Հ․ Բոլինեզիա ո՞րն է ։

Պ․ Բոլինեզիա կը կոչուին Աւստրալազիայէն դէպ արեւելք Մեծ Ովկիանոսի մէջ գտնուած խումբ խումբ կղզիներ , որոնց գլխաւորներն են՝

1․ Նոր Բրիտանիա , 2․ Մարիանեան կամ Աւազակաց կղզիք , 3․ Քարոլինեան կղզիք , 4․ Սողոմոնեան կղզիք , 5․ Նոր Քալէտոնիա , 6․ Նոր Հեպրիտեան կղզիք , որոնց գլխաւորն է Հոգւոյն Սրբոյ կոչուած կղզին , 7․ Մուլկրավեան կամ Մարշալեան կղզիք , 8․ Ֆիճի կղզիք , 9․ Բարեկամութեան կղզիք , 10․ Նաւավարաց կամ Սամոա կղզիք , 11․ Քուքի արշիպեղագոսը , 12․ Ընկերութեան կղզիք որոնց գլխաւորն է Դահիթի , 13․ Բոմոթու կամ Տափարակ կղզիք , 14․ Մենտանա , կամ Մարքիզեան կղզիք , 15․ Սանտուիչ կղզիք ։

Հ․ Բոլոր այս կղզեխումբերուն վրայ ի՞նչ մասնաւոր գիտելիք կայ ։

Պ․ Այս կղզիներուն մէկ մասը փոքր ըլլալուն համար Միքրոնեզիա կը կոչուին ։

Այս կղզիներէն ոմանց բնակիչներն ըստ մասին կամ բոլորովին քրիստոնեայ եղած են ։ Քրիստոնեայ բնակիչ ունեցողներուն մէջ երեւելի են Սանտուիչեան կղզիք , որոնց գլխաւորն է Հա–

տայ : Սանտուիչցիք որոնց թիւը 200 հազարի չի հասնիր՝ հիմա եւրոպական կերպով ծաղկեալ Քրիստոնեայ ժողովուրդ են , եկեղեցիներ , դպրոցներ , տպարաններ և լրագիր ունին : Արդի թագաւորին անունն է Քամէամէա Ե. մայրաքաղաքն է Հոնոլուլու (14,000) : Ամերիկացիք անոնց վրայ մեծ ազդեցութիւն ունին :

# ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

## ԴԱՍ Ա.

Հ. Բնական աշխարհագրութիւնն ի՞նչ բանի վրայ կը խօսի :

Պ. Բնական աշխարհագրութիւնը կը խօսի երկրիս երեսը բաղկացնող կամ անոր վրայ գտնուող անգործարան և գործարանաւոր մարմնոց վրայ , ինչպէս նաեւ մթնոլորտին կամ օդոյն վրայ որ երկիրս կը պատէ և երկրիս կը վերաբերի :

Հ. Գործարանաւոր և անգործարան մարմիններ որո՞նք են :

Պ. Գործարանաւոր մարմիններ են տունկերը և շնչաւորները (անասուն և մարդ) . ասոնցմէ զատ մարմիններ , ինչպէս քարեր , մետաղներ , օդը , ջուրը , անգործարան են :

Հ. Երկրիս երեսն ի՞նչ նիւթերէ կը բաղկանայ :

Պ. Երկրիս երեսը կը բաղկանայ հողէ և ջուրէ :

Հ. Երկրիս երեսը բաղկացնող հողը քանի՞ տեսակ է :

Պ. Երկրիս երեսը բաղկացնող հողը հինգ տեսակ է , որոնք իրարու վրայ խաւ խաւ դիզուած կը գտնուին , և կը կոչուին նախկին , նախնական , երկրորդական , երրորդական , և չորրորդական գետիններ , որոնք այլեւայլ ժամանակ հրոյ և ջրոյ ազդեցութեամբը հազարաւոր դարերու մէջ կազմուած

են, և այն խաւերուն շատերն իրենց մէջ գործարանաւոր մարմնոց մնացորդները կը պարունակեն քարացեալ վիճակի մէջ: Այս տեսակ տեսակ հողերուն վրայ կը խօսին ընդարձակ և հիմնական կերպով երկրագիտութեան և հանքաբանութեան կոչուած գիտութիւնները:

Հ. Երկրիս երեսը կազմող հողը կամ գետինը ի՞նչ ձեւերով կ'երեւայ մեզի:

Պ. Երկրիս երեսը կազմող հողը մեզի կ'երեւայ իբրեւ դաշտ, լեռ, կղզի, հովիտ, կիրճ, լեռնադաշտ, պարանոց, և այլն, որոնց վրայ կը խօսի քաղաքական աշխարհագրութիւնը: (Տես այս գրքին քաղաքական մասին մէջ էջ 6 և 7):

## ԴԱՍ Բ.

Հ. Երկրիս երեսը ծածկող ջուրը քանի՞ տեսակ է:

Պ. Երկրիս երեսը ծածկող ջուրը երկու տեսակ է՝ ծովային և ցամաքային:

Ծովային ջուրն ընդհանրապէս դառն և աղի է. բայց դէպի հիւսիս և միջերկրական ծովերու մէջ ջուրը քիչ աղի է. ինչպէս Պալթիկ և Սեւ ծովերուն ջուրը, քանզի ասոնց տարածութիւնը Ովկիանոս կոչուած մեծ ծովերուն նայելով փոքր է, և անուշ ջրոյ շատ գետեր կը թափին անոնց մէջ. թէպէտ Կասպից ծովին, որ միջերկրական ծով է, ջուրը քան զՈվկիանոսի ջուրն աղի է:

Հ. Ծովերու մէջ ի՞նչ բաներ կը գտնուին:

Պ. Ծովերու մէջ ալ, ինչպէս ցամաքի վրայ, կան դաշտեր, լեռներ, գետեր. կան նաեւ տեսակ տեսակ տունկեր և անասուններ, մանաւանդ անթիւ տեսակ մեծ և փոքր ձկունք և խեցեմորթք:



Ծովերուն ջուրը դէպ 'ի յատակը երթալով կը ցրտանայ. նոյնպէս դէպ 'ի բեւեռները ուր ջուրը միշտ սառած է, մանաւանդ ձմեռները, մինչեւ 10 աստիճան, իսկ ծովածոցները՝ մինչ 30 աստիճան լայնութեան: Բեւեռներուն մօտ սառույի ահագին կտորուանք կը լողան ջուրին երեսը մինչեւ 40 աստիճան բեւեռէն աստին: Հարաւային բեւեռին սառած մասն աւելի է քան հիւսիսային բեւեռինը:

Հ. Ծովին ջուրն ի՞նչ շարժումներ ունի:

Պ. Ծովին ջրոյն շարժումներն են՝ մթնոլորտական շարժումը, յորձանք և խաղացք:

1. Մթնոլորտական շարժումը կը պատճառէ հովէ, որ ծովին երեսը միայն կը յուզէ, քանզի մեծամեծ ալէկոծութեանց ատեն անգամ, մինչեւ 33 մէթր վար, ծովին ջուրը հանդարտ է:

2. Յորձանքը մաս մը ջուր է ծովուն մէջ, որ գետի պէս հոսելով կ'երթայ: Գլխաւոր յորձանքներն են հիւսիսայինները որ հիւսիսէն դէպ 'ի հասարակած կուգան, և գիշերահաւասարի յորձանքները որոնք կ'երթան արեւելքէն դէպ արեւմուտք, Այս յորձանաց պատճառ հովերը կամ երկրիս իր առանցին վրայ դառնալը կը կարծուի: Յորձանքները երբեմն պտոյտ ընելով ահագին անդունդներ կը բանան ծովուն մէջ և մօտ դացող նաւերը մէջ կ'առնուն, ինչպէս է Մալստրոմ Նորուեկիոյ հիւսիսային կողմը:

3. Խաղաղք կ'ըսուի տեղ տեղ որոշեալ ժամերու մէջ ծովի ջուրին ցամաքէն քաշուիլն ու նորէն գալը, որ տեղատուութիւն և մակընթացութիւն կ'ըսուի: Կը կարծուի թէ այս շարժումը լուսնոյ և արեգական ձգիչ զօրութենէն է:

## ԴԱՍ Գ.

Հ. Ցամաքային ջուր ըսելով ի՞նչ կը հասկցուի, և քանի՞ տեսակ ցամաքային ջուր կայ:

Պ. Ցամաքային ջուր ըսելով կը հասկցուին անձրեւներէ յառաջ եկած անոյշ ջուրեր, ինչպէս աղբիւրներ, առուներ, գետեր: Երկրիս վրայ անթիւ գետակներ և գետեր կան, որոնց գլխաւորները կը յիշէ քաղաքական աշխարհագրութիւնը:

Հ. Անձրեւն ի՞նչ է:

Պ. Անձրեւ կ'ըսուի այն ջուրը զոր շոգիներէ կազմուած ամպերը կը տեղան երկրիս վրայ:

Անձրեւներն երկրիս վրայ ամեն տեղ միօրինակ չեն. հասարակածին և ծովեզերաց մօտ անձրեւներն աւելի առատ են քան անոնցմէ հեռու գտնուող տեղեր, թէպէտ դէպ ի հիւսիս անձրեւային աւուրք աւելի յաճախ են:

Արեւադարձներուն մէջտեղ, կամ այրեցեալ գօտւոյն տակ գրեթէ ամեն տարի որոշեալ ամիսներու մէջ կ'անձրեւէ առատ. այսպիսի անձրեւներուն կ'ըսուի Պարբերական անձրեւ, և ասոնցմէ երկրին այն մասին մէջ գրեթէ բոլոր գետերը յորդելով կ'ողողեն ընդարձակ երկիրներ:



Այսպէս Նեղոս գետն ամեն տարի որոշեալ ժամանակ կ'ողողէ Եգիպտոսի հարուստ հովիտը. նոյնպէս հարաւային Ամերիկայի մէջ տեղ տեղ, ինչպէս Բարակուա, ուր գետինը տափարակ է առանց զառ 'ի վայրի, անձրեւներէն յորդեալ գետերը տարածուելով ամբաւ լիճ մը կը ձեւանան:

Հ. Ուրիշ ի՞նչ ցամաքային ջուրեր կան:

Պ. Ցամաքային ջուրեր են նաեւ լճերն ու ջերմուկները: Լիճերէն ոմանց մէջէն գետեր կ'անցնին, ինչպէս Քոստանցի և Ճինեւրայի լիճերէն. ուրիշներէն դուրս ամենեւին ջուր չելլեր, ինչպէս Կասպից ծովէն և Արալու լիճէն: Այս երկու լիճերուն ջուրը ծովի ջուրի պէս աղի է:

Հ. Ջերմուկներն ի՞նչ են:

Պ. Ջերմուկները տաք ջուրեր են որ երկրիս ծոցէն կը բղխեն, և իրենց մէջ խառն ունին հանքային նիւթեր, ինչպէս ծծումբ, երկաթ, եւայլն: Այս ջուրերուն տաքութեան պատճառը, ինչպէս կը կարծուի, երկրիս կեդրոնին ջերմութիւնն է. և կայ ջերմուկ որուն ջուրը եռացեալ ջրոյ բարեխառնութիւնն ունի: Գրեթէ երկիր չկայ որ ջերմկային ջուրեր չունենայ որոնք իբրեւ բժշկական դարման կը գործածուին: Անուանի և շատ յաճախեալ ջերմուկները Գերմանիոյ, Գաղլիոյ և փոքր Ասիոյ մէջ են, ուր նշանաւոր են Պրուսայի ջերմուկները:

## ԴԱՍ Ե.

Հ. Մթնոլորտն ի՞նչ է:

Պ. Մթնոլորտ կը կոչուի մեր շնչած օդը որ 70-90 քիլոմէտր բարձրութեամբ կը պատէ երկիրս, և այլևայլ կազմութեան հեղուկներէ կը բաղկանայ:

Օդը երկրիս երեսին վրայ 770 անգամ աւելի թեթեւ է քան ջուր. բայց այս թեթեւութիւնը միօրինակ չէ ամեն տեղ. լեռներու վրայ աւելի թեթեւ է քան թէ ծովին երեսը և դաշտերու վրայ:

Օդին բարեխառնութիւնը, այսինքն տաքութիւնը, նոյնպէս միօրինակ չէ ամեն տեղ. այս բարեխառնութիւնը մթնոլորտին վերի գաւառներուն մէջ շատ նուազ է. այս է պատճառը որ բարձր լերանց գլուխները ձիւնով և սառուցով պատած են միշտ: Հասարակածին տակ լեռներուն վրայ մինչեւ 4,900 մեթր բարձրութիւն կը սկսի ձիւնը. լայնութեան 60 երորդ աստիճանին տակ՝ 1,100 մեթր բարձրութիւն:

Երկրի մը աւելի կամ նուազ բարեխառնութեանը մէկ պատճառն ալ անոր աւելի կամ նուազ հեռի ըլլալն է հասարակածէն: Դարձեալ լեռներուն հարաւային կողմն աւելի տաք կ'ըլլայ քան միւս կողմերը. նոյնպէս արեւմտեան ծովեզերք աւելի տաք են քան թէ արեւելեանները: Միեւնոյն լայնութեան տակ Ամերիկա աւելի ցուրտ է քան Եւրոպա և Ափրիկէ, նոյնպէս հիւսիսային կիսագունտն աւելի բարեխառն է քան հարաւայինը: Ովկիանոսի կղզիները ձմեռն



աւելի տաք են և ամառն աւելի զով քան ուրիշ երկիրներ:

Մթնոլորտին վերաբերեալ ուրիշ շատ երեւոյթներ կան, ինչպէս լուսոյ ցոլացումը, ծիածանը, ելեկտրական երեւոյթներ օդին մէջ, ինչպէս կայծակը, հիւսիսայգը որ ճառագայթարձակ աղեղ մըն է, և Եւրոպայի ու Ամերիկայի մէջ հիւսիսային բեւեռին մօտ, նաեւ հարաւային բեւեռին կողմերը, շատ անգամ գիշերները կը տեսնուի. մագնիսական ասղան մէկ ծայրին դէպ 'ի հիւսիս դառնալը. ասոնց ամենուն վրայ կը խօսի բնական գիտութիւնը:

Հ. Հովն ի՞նչ է:

Պ. Հովը մթնոլորտին շարժումն է: Մթնոլորտին շարժման պատճառը տաքն ու ցուրտն է:

Կան հաստատուն և փոփոխական հովեր: Հաստատուն կ'ըսուին այն հովերը որ միշտ միեւնոյն ուղղութեամբ կը փչեն: Այս հովերն (արեւադարձներուն մէջտեղ, կամ հասարակածին տակ կ'ըլլան. ինչպէս են ալիզէ կոչուած հովերը հասարակածին տակ, և մուսոն կոչուած հովերը Հնդկային Ովկիանոսին մէջ: Այրեցեալ գօտւոյն տակ սոսկալի փոթորիկներ ալ կը պատահին: Բարեխառն գօտիներուն մէջ փչող հովերն անկանոն են և որոշ ուղղութիւն մը չունին. աս երկիրներն աղատ են նաեւ մրրիկներէ:

Երբ երկու հովեր հակառակ ուղղութեամբ իրարու կը հանդիպին՝ ցիկլոն կամ թայֆուն (խորթում) կոչուած պտուտակ հովը յառաջ կու գայ: Այս մրրիկը սոսկալի է. Ովկիանոսին ջուրը կը ծծէ, նաւեր կը խորտակէ, լիճեր կը ցամքեցնէ, ահա-

գլին զանգուածներ առնելով հեռու տեղեր կը տանի, և շատ տեղեր հեղեղներով կ'ողողէ։

## ԴԱՍ Զ․

Հ. Այլեւայլ գօտիներու և կլիմաներու տունկերը որո՞նք են։

Պ. Սառուցեալ գօտւոյն մէջ յառաջ կու գան, շատ քիչ տեսակ տունկեր, ինչպէս մամուռը, քոսը, սողացող տունկեր, թուփ կամ մացառ։ Տեղ տեղ ցորեան և գարի ալ կը բուսնին, բայց դաճաճ կը մնան։ Լաբոնիոյ մէջ միայն կը բուսնին հաճար և խաւարտ (զավզավաթ)․ հոն կան նաեւ եղեւնի անտառներ։

Բարեխառն գօտւոյն մէջ հիւսիսային սահմանին վրայ կը բուսնին սարոյն, եղեւնին, կուենին (գաթրան աղաճը)։ Դէպ ի հարաւ գալով կը բուսնին ոփին (գայըն աղաճը), կաղնին, հացին, կնձնին (գարա աղաճ), լորին (օխլամուր), նոճին, ընկուզը (մանթար աղաճը)։ 60 երրորդ լայնութեան աստիճանին տակ կը սկսի խնձորենին, աւելի դէպ ի հարաւ՝ կեռասենին, ապա թզենին, աւելի մօտենալով դէպ ի արեւադարձները՝ կը գտնենք ձիթենին, շագանակենին, ընկուզին, որթը, նշենին, յեբենին և նարնջենին որ այրեցեալ գօտւոյն տակ ալ կ'ըլլայ։ Ցորենը բարեխառն գօտւոյն տակ ամեն տեղ կը գտնուի․ իսկ բրինձ ու եգիպտացորենը՝ հարաւային գլին միայն։

Այրեցեալ գօտւոյն տակ կը բուսնին հնդկեղ պտուղներ և համեմունք։ Հոն ծառերը գրեթէ մշտադալար են և զօրեղ։ Այս գօտւոյն մէջ կան տե-



ղեր ուր կաղնին մեր կաղնիներուն կրկին բարձրութիւնը և մեր շուշանին նման ծաղիկ ունի։ Այս գօտւոյն մէջ կը բուսնին շաքարի եղէգը, արմաւենին, բանանենին, հացի, կակաոյի, համեմուկի (վանիլեա), կինամոնի (դարչին), մեխի, պղպեղի, սուրճի և ուրիշ համեմներու տունկերը։

Բայց այս բաժանումը տեղերուն դիրքին նայելով երբեմն կը տարբերի․ զորօրինակ այրեցեալ գօտւոյն տակ լերանց կողերուն վրայ կը գտնուին բարեխառն գօտեաց տունկերը, լեռներուն գլուխն ալ ցրտային գօտեաց տունկերը միայն․ ինչպէս նաեւ բարեխառն գօտիներու մէջ կան ցած տեղեր ուր այրեցեալ գօտւոյն տունկերէն ոմանք յառաջ կու գան։

## ԴԱՍ Թ․

Հ. Այլեւայլ գօտիներու անասունները որո՞նք են։

Պ. Անասուններու այլեւայլ տեսակներէն ոմանք հիւսիսային սառուցեալ գօտիներուն մէջ միայն կրնան ապրիլ, ինչպէս են սպիտակ արջը, ռէն կոչուած այծեամը և հիւսիսային աղուէսը։ Դէպ ի հիւսիս, անտառային և ամայի տեղեր կը գտնուին սպիտակ աքիսը (գագում), կզաքիսը (զէրտէվա), կուղբը (գունտուզ), և մշկեակ ([illegible]) ունեցող անասուններ։

Կէտ ձկան (պալէնա) և փոկի (տէնիզ տանասը) և ծովային թռչունի (բինկա) հայրենիքը Սառուցեալ ծովն է։

Բարեխառն գօտիները յատուկ կենդանիներ չունին. շունը, ձին, եզը, էշը, ոչխարը մարդուն հետ ամեն կլիմա կ'երթան: Այս գօտին շատ քիչ վընասակար անասուններ ունի. գլխաւորներն են արջը, գայլը և աղուէսն. ընդհակառակն օգտակար և անմեղ անասնոց տեսակները շատ են, ինչպէս են ճագարը, նապաստակը, եղջերուն, շատ տեսակ նստուկ թռչուններ: Գաղթող թռչունք հիւսիսէն և հարաւէն կու գան:

Մեծաւ մասամբ այրեցեալ գօտւոյն տակ են ահագին և վնասակար անասունք, ինչպէս առիւծը, վագրը, յովազը, բորենին, օձեր, կոկորդիլոսներ: Անվընաս թռչուններ և չորքոտանիներ ալ կան այրեցեալ գօտւոյն մէջ, ինչպէս ջայլամը, [illegible], փիղը, ռնգեղջիւրը, ձիագետին, անտիլոպը, ուղտը որ բարեխառն գօտւոյ մէջ ալ կը գտնուի: Այրեցեալ գօտին ունի նաև փայլուն միջատներ, գեղեցկափետուր թռչուններ, ինչպէս պապկան, ծիծառամածը, դրախտահաւը, և այլք:

Պէտք է գիտնալ որ Ամերիկա մեր ցամաքին ունեցած մեծ չորքոտանիները չունի:

# ՑԱՆԿ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

Երես.

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ . . . . . . . . . . . 1
ԵՒՐՈՊԱ . . . . . . . . . . . . . 14
Ա. Հարաւային Եւրոպա . . . . . . .
1. Յունական ցամաքակղզի . . . . . . . 25
Ա. Եւրոպական Թուրքիա . . . . . . . 27
Բ. Յունաստան . . . . . . . . . . . 34
2. Իտալական ցամաքակղզի . . . . . . 35
3. Իբերեան կամ Սպանիական ցամաքակղզի
Ա. Սպանիա . . . . . . . . . . . . 39
Բ. Լուսիտանիա կամ Փորթուկալ . . . . . . 42
Բ. Միջին Եւրոպա
4. Գաղիա կամ Ֆրանսա . . . . . . . . 44
5. Հելուետիա կամ Զուիցերիա . . . . . . 49
6. Հոլանտա . . . . . . . . . . . . 51
7. Բելգիա . . . . . . . . . . . . . 53
8. Գերմանիա . . . . . . . . . . . . 55
1. Բրուսիա . . . . . . . . . . . . 56
2. Պաւարիա . . . . . . . . . . . . 58
3. Սաքսոնիա . . . . . . . . . . . . 59
4. Վիւրթեմպերգ . . . . . . . . . . . 60
5. Պատէն . . . . . . . . . . . . . 60

6. Հէսս . . . . . . . . . . . . . 61
7. Ալզաս և Լօրէն . . . . . . . . . . . 62
8. Աւստրօ-Ունկարական կայսրութիւն . . 63
Գ. Հիւսիսային արեւմտեան Եւրոպա
10. Սքանտինաւեան ցամաքակղզի . . . . 68
11. Դանիա կամ Տանիմարքա . . . . . . 70
12. Մեծն Բրիտանիա . . . . . . . . . 72
Դ. Արեւելեան Եւրոպա
13. Ռուսիա . . . . . . . . . . . . . 76
ԱՍԻԱ . . . . . . . . . . . . . . . 78
Ա. Հարաւային Ասիա
1. Ասիական Թուրքիա . . . . . . . . . 82
2. Արաբիա . . . . . . . . . . . . . 86
3. Իրան . . . . . . . . . . . . . . 86
4. Հնդկաստան . . . . . . . . . . . . 87
5. Հնդկաց Արշիպեղագոսը կամ Մալէզիա 89
Բ. Միջին Ասիա
1. Թուրքէստան կամ Ազատ Թաթարիստան 90
Գ. Արեւելեան Ասիա
1. Չին . . . . . . . . . . . . . . . 90
2. Ճաբոն . . . . . . . . . . . . . . 91
3. Կովկասիա . . . . . . . . . . . . 92
Դ. Հիւսիսային Ասիա կամ Սիպերիա . . . 93
ԱՓՐԻԿԷ . . . . . . . . . . . . . . . 94
Ա. Հիւսիսային Ափրիկէ
1. Եգիպտոս . . . . . . . . . . . . . 94
2. Նուբիա . . . . . . . . . . . . . 95
3. Հապէշ կամ Եթովպիա . . . . . . . 96
4. Պէրպէրիստան . . . . . . . . . . 96
Ա. Թրիպօլի . . . . . . . . . . . . 96
Բ. Թունուզ . . . . . . . . . . . . 97



Գ. Ալճէրիէ . . . . . . . . . . . . . 97
Դ. Մարոքքօ . . . . . . . . . . . . . 97
5. Սահարա . . . . . . . . . . . . . 98
6. Սենեկամպիա . . . . . . . . . . . 98
7. Սուդան . . . . . . . . . . . . . 98
Բ. Հարաւային Ափրիկէ
1. Արեւելեան ծովեզր . . . . . . . . 99
2. Քափ կամ Բարեյուսոյ երկիրը . . . . 100
3. Արեւմտեան ծովեզր . . . . . . . . 101
4. Կղզիք . . . . . . . . . . . . . . 102
ԱՄԵՐԻԿԱ . . . . . . . . . . . . . . 104
Ա. Հիւսիսային Ամերիկա . . . . . . . 104
Բ. Միջին Ամերիկա . . . . . . . . . 109
1. Ցամաքային մասը . . . . . . . . . 109
2. Արեւմտեան Հնդկաստանի Արշիպեղագոսը . . . . . . . . . . . . . . . 110
Գ. Հարաւային Ամերիկա . . . . . . . 110
ՈՎԿԻԱՆԻԱ . . . . . . . . . . . . . 116
ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ . . . . . . 119

Բ. Ա.
№ 7606